ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

№4 (1589) ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007

ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան 11-րդ Գերագոյն Ժողովի յայտարարութիւնը

Հայաստանի Հանրապետութեան եւ համայն հայութեան առջեւ ծառացած մարտահրաւէրներին դիմակայելու, պետական, հասարակական եւ համազգային խնդիրների լուծման համար առաջիկայ նախագահական ընտրութիւններն ունեն բացառիկ նշանակութիւն: Ընտրութիւնները նոր հնարաւորութիւններ կը ստեղծեն՝ ձեւաւորելու հաւասարակշռուած իշխանութիւն, որն ընդունակ կը լինի ճշտել եւ ուղղորդել երկրի յետագայ զարգացման ռազմավարութիւնը, պահպանել սահմանադրական բարեփոխումների ոգին եւ նպատակը՝ ամբողջութեամբ կեանքի կոչելով այն, իրականացնել համակարգային, արմատական բարեփոխումներ եւ ապահովել հասարակական համերաշխութիւն եւ ապահովութիւն:

ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան 11-րդ Գերագոյն Ժողովը, նկատի ունենալով, որ՝

- կուսակցութեան պաշտպանած ազգային-պետական ուղեգծի պահպանման, երկրում խորքային եւ ամբողջական ժողովրդավարական բարեփոխումների իրականացման գործընթացների դանդաղումը պարարտ հող է ստեղծում որդեգրած ազգային ուղեգիծը մերժելու միտումների համար,
- իշխանութիւններից, քաղաքական ուժերից, ինչպէս նաեւ ընտրութիւններից ժողովրդի աճող օտարումն ու հիասթափութիւնը լրջօրէն վտանգում են հասարակական-քաղաքական կեանքի եւ երկրի առաջընթաց զարգացման հեռանկարը, - տնտեսութեան եւ քաղաքականութեան շարունակական սերտաճումը վտանգաւոր չափերի են հասցրել իշխանութեան պլուտոկրատացումն ու կոռումպացումը,
-պայմաններ են ստեղծուել իշխանութեան եւ պետութեան նոյնացման համար,

համոզուած լինելով, որ՝

- երկրի առաջընթաց զարգացման արագացման ապահովմամբ է միայն հնարաւոր արդար եւ խաղաղ լուծման հասցնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը,
- չէզոքացնել անվտանգութեան արտաքին եւ ներքին սպառնալիքները՝ բովանդակ հայ ժողովրդի կարողականութիւնը ուղղորդելով համազգային խնդիրների եւ հարցերի լուծմանը,
- իշխանութեան մէջ հակակշռման եւ զսպման առաջադէմ մեխանիզմների ներդրումով, իշխանութիւնների պատասխանատուութեան եւ հաշուետուութեան, գործունէութեան թափանցիկութեան ապահովումով է հնարաւոր առողջացնել իշխանական համակարգը եւ հասնել արդիւնաւէտ կառավարման,
- իրական ժողովրդավարութիւնն անհնար է առանց իրաւահաւասարութեան եւ մարդու իրաւունքների յարգման, - տնտեսական ազատութիւնն անհնար է առանց արդար մրցակցութեան,
- տնտեսական կայուն զարգացումն անհնար է առանց սոցիալական պաշտպանուածութեան եւ ապահովութեան,
- այլընտրանքային լուծումների եւ ծրագրերի առաջադրմամբ, գաղափարական եւ քաղաքական լուրջ քննարկումների եւ բանավէճերի ծաւալմամբ միայն կարելի է հիմքեր ստեղծել ժողովրդի գիտակցուած եւ իրական ընտրութեան համար,



որոշում է՝

- մասնակցել Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին սեփական թեկնածուով,
- ՀՀ նախագահի թեկնածուի առաջադրումը կատարել երկու փուլով՝ այդ օրակարգով նոյեմբեր ամսին, հրաւիրելով ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան արտակարգ Գերագոյն Ժողով,
- կազմակերպական կառոյցի տեսակէտի բիւրեղացման, ինչպէս նաեւ ժողովրդային եւ համակիր շրջանակների կարծիքի հիման վրայ արտակարգ Գերագոյն Ժողովը ՀՀ նախագահի թեկնածու կառաջադրի՝ ընտրութիւն կատարելով ընկերներ Վահան Յովհաննիսեանի եւ Արմէն Ռուստամեանի միջեւ:

Ստեփանակերտ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն 17 սեպտեմբերի, 2007թ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



Խմբագրություն

4 «Դրօշակ»-ի հարցերին պատասխանում է Հրայր Կարապետեանը

Մի՛ջազգային իրադարձ

8 Օսմանեան կայսրութեան անդամահատման ակտը և Հայաստանի ճակատագիրը

Տեսակէտ

16 Դիրքորոշումների փոփոխութիւնն՞ը, թէ՞ քաղաքական խաղեր նոր երանգաւորմամբ

Ժողովրդագրութիւն

20 Հայաստանի ժողովրդագրական պատկերը

Տարածաշրջան

28 Վրաստանը պատմական էվոլիւցիայի ճանապարհին. Գոյատեւման փակուղի

Տեղեկանք

31 Ղարսահայերն այսօր

Դարձնոյթեան արքեպիսկոպոս

36 Ա.Մեսրոպեանի հայեացքների ձեւաւորման եւ կուսակցական պատկանելութեան հարցերի շուրջ

44 Խանասորի արշաւանքի 110-ամեակի առթիւ կարեւոր սրբագրում

Խմբագրի անկիւն

47 Թիկնապահութիւն

Թերթերով «Դրօշակ»-ի էջերը

49 Ինչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

Նոր գրքեր

51 Արկածալի կեանք
Սարդարապատի պատմաշինութիւնը

«Դրօշակ»-ի պատրիարքատան

52 Յովհաննէս Յարութիւնեան

«Դրօշակ» ամենամսեայ պաշտօնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցութեան
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխաւոր խմբագիր՝ **Ռուբէն Յովսէփեան**
Խմբագիր՝ Կ.Խանլարեան
Համակարգչային շարուածքը՝ Ս.Խաչատրեանի
Ձեւաւորումը՝ Մ.Յովսէփեանի
Գրանցման վկայական՝ 897
Երեւան,375010,Միհր Մկրտչեան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրութիւնը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

" **Droshak**" monthly, ARF dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@ arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ՄԻՏՈՒՐՈՏ

ԱԶԳԵՐԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՂԻՆ

2007 թ. սեպտեմբերի 5-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հրաւէրով, աշխատանքային միօրեայ այցով Երեւան ժամանեց Ֆրանսիայի ընկերվարական կուսակցութեան պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Առաջին քարտուղար Ֆրանսուա Հոլանդի: Ֆրանսիացի քաղաքական գործիչը յիշեցնելով իր կուսակցութեան եւ ՀՅԴ-ի՝ որպէս Սոցինտերնի լիիրաւ կուսակցութիւններ, վաղեմի համագործակցութիւնը, ասաց, որ «ՀՅԴ-ի հետ ունենք շատ ընդհանրութիւններ, նոյնանման սկզբունքներ, ինչպէս նաեւ զարգացման ընդհանուր տեսլականներ»: «Լաւ ծանօթ լինելով այն դերակատարութեանը, որ ունեցել է ՀՅԴ-ն Հայաստանի պատմութեան մէջ,- ընդգծեց Ֆ. Հոլանդը,- ուզում եմ, որ այդ դերակատարութիւնը մեծանայ»:

Պատուիրակութեանը ընդունեց Հանրապետութեան Նախագահ Ռոբերտ Քոչարեանը եւ ողջունեց հայկական եւ ֆրանսիական քաղաքական ուժերի միջեւ հաստատուած կապերը՝ «ի դէմս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցութեան միջեւ ձեւաւորուած արդիւնաւէտ գործընկերութեան»:

ՀՀ Նախագահը իր այդ յայտարարութեամբ ակնարկել է պատմա-քաղաքական մի շատ կարեւոր հանգամանք. ազգերի, քաղաքակիրթ պետութիւնների առողջ եւ արդիւնաւէտ փոխյարաբերութիւններում կարեւոր դաշտ է նախատեսւում քաղաքական ուժերի համագործակցութեան համար:

Բայց բնաւ էլ պատահական չէ, որ այդ դաշտում մշտապէս առաջատար դեր են ստանձնում սոցիալիստական ուժերը: Եւ ահա թէ ինչու.

Որպէս օրինաչափ երեւոյթ գրեթէ բոլոր պետութիւններում պահպանողական եւ ծայրայեղ աջ հոսանքները, այսպէս թէ այնպէս, հանդէս են գալիս որպէս ազգային բացառիկութեան սկզբունքի ջատագովներ, ինչը կուսակցական նախասիրութիւնների ոլորտում չի ստեղծում նրանց մօտ եղբայրութեան անկեղծ տրամադրուածութիւն եւ գաղափարակցութեան հոգեհարազատ մօտեցումներ միւս ազգերի նկատմամբ: Երբ նրանք նոյնիսկ իշխանութեան են գալիս, ձգտում են ազգերի փոխյարաբերութիւնները կարգաւորել սոսկ միջպետական մակարդակների վրայ: Հազուադէպ են պատմութեան մէջ երկու ազգերի պահպանողական ու-

ժերի սերտ համագործակցութեան երեւոյթներ: Համագործակցութիւնն առաւել անհաւանական է դառնում, մանաւանդ երբ տուեալ ուժերը գտնւում են ընդդիմութեան կարգավիճակում:

Ծայրայեղ ձախի պարագայում, գաղափարակից կուսակցութիւնների եղբայրակցութեան եւ գործընկերութեան սկզբունքները, յաճախ, փոխարինւում են քաղաքա-գաղափարախօսական համակենտրոնացման հողի վրայ, միատեսակութեան եւ կենտրոնից ղեկավարուելու սկզբունքներով: Իսկ նման կոմինտերնական անհեթեթ «համագործակցութիւնը», ի սկզբանէ ընթանալով գերպետական շահագործման ուղիներով, դատապարտւում է կործանման: Բոլոր երկրների կոմկուսների Կոմինտերնում պարտադիր զինուորագրման մթնոլորտում, եթէ գտնւում էին Իտալիայի կոմունիստների նման համեմատաբար ինքնուրոյն անհատներ, ապա գաղափարապէս եւ կազմակերպական իմաստով ամենախիստ հալածանքների էին ենթարկւում, առաջին հերթին, հենց իրենց գաղափարակից հոսանքների կողմից:

Իսկ կենտրոնամէտ աջը, լիբերալական եւ յատկապէս վերջին շրջաններում իր նեօ-լիբերալական գաղափարներով, ազգերի փոխյարաբերութեան հարցը, պատմականօրէն, ըմբռնել է զուտ պրագմատիստական սկզբունքներով: Նրանց զգալիօրէն պակասում են, կապիտալիստական շահերի հասկացութեան շրջագծից դուրս, փոխյարաբերութիւնների մարդկային հեռանկարները: Պատմութիւնը, մի քանի բացառութիւններից զատ, նոյնպէս դեռ չի արձանագրել նեօ-լիբերալական ուժերի համաշխարհային կայուն ու թափանցիկ եղբայրակցութեան օրինակներ:

Սոցիալիստների մօտ ընկալումները միանգամայն այլ են: Նրանք ազգերը համարում են իրաւահաւասար, հաւաքական-մշակութային դիմագծերով իւրայատուկ եւ ինքնատիպ անհատականութիւններ, որոնք ոչ միայն չեն այլանդակում մարդկութեանը, այլեւ ճոխացնում, գեղեցկացնում են նրա դէմքը: Սոցիալիստները, պատմականօրէն հանդիսանալով արդարութեան հասկացութեան կրողներ, թերեւս ամենից վաղ գնահատեցին բացառիկութեան հենքի վրայ ձեւաւորուած գաղափարների աւերիչ, կործանարար եւ աղէտաբեր էութիւնը: Մերժելով հանդերձ բացառիկութեան սկզբունքը՝ սոցիալիստների մի կարեւոր հատուածը չընկաւ հակառակ ծայրայեղութեան մէջ եւ հաւատք չտածեց մարքսիստական հռչակաւոր հաւատամքին, ըստ որի կապիտալի կենտրոնացմանը զուգահեռ ձուլւում, անհետանում են ազգերը: Հետեւաբար, նրանք ազգերին վերապահելով գոյատեւելու եւ ապրելու լիակատար իրաւունք, յաճախ հանդէս եկան ազգային հարցերի եւ ազատագրական պայքարների պաշտպանութեան դիրքերում, ինչը երբեք հասկանալի չդարձաւ «պատմական մատերիալիզմի» փիլիսոփայութեան դիտանկիւնից, ինչը եւ յատկապէս անհեթեթ եւ դատապարտելի համարուեց «տնտեսական շահերի» սկզբունքներով առաջնորդուողների կողմից: Իսկ կապիտալիստական շահագործման ու մտայնութեան դէմ պայքարը նրանց համար, ինչ խօսք, միշտ էլ եղել է սոցիալիստների օրակարգային հիմնահարց:

Այսպիսով, սոցիալիստական հոսանքների այս ընդհանրական ընկալումները եւ տրամադրուածութիւնը յարմար ենթահող հանդիսացաւ նրանց միջազգային եղբայրակցութեան, գաղափարական փոխհարստացման եւ քաղաքական փորձառութիւնների անկաշկանդ փոխանակման համար: Արդիւնքում՝ Սոցինտերնը հիմնադրուեց 1889 թուականին, վերընձիւղուեց Երկրորդ աշխարհամարտից յետոյ եւ մինչ օրս գոյատեւում է՝ որպէս կայուն, ընդարձակուող եւ զարգացող միջազգային կառոյց:

Սոցիալիստական զօրակցութեան թարմագոյն արդիւնքներին ահա ականատես ենք լինում այսօր մեր անկախ հանրապետութեան մէջ: Երկու սոցիալիստական կուսակցութիւնները, իրենց պետութիւններում այլընտրանքային ուժեր համարուելով հանդերձ եւ իշխանութիւններում մասնակի պատասխանատուութիւն ստանձնած լինելու պայմաններում, արձանագրեցին գործընկերութեան հերթական դրսեւորում, որն անկասկած նպաստելու է երկու ազգերի բարեկամական յարաբերութիւնների զարգացմանը:

«Դրօշակ» - ի հարցերին պատասխանում է Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան նախագահ Հրայր Կարապետեանը

«Դրօշակ».-Ազգային ժողովում ինչպէ՞ս էք պատկերացնում ձեր ղեկավարած խմբակցութեան աշխատանքը՝ նկատի ունենալով թէ անկախութիւն եւ թէ համագործակցութիւն հռչակած ՀՅԴ կուսակցութեան դիրքորոշումը:

Հ.Կարապետեան.- Մեր աշխատանքները չորրորդ գումարման նստաշրջանում նախորդների համեմատ պէտք է ընթանան վերափոխուած ձեւով, ելնելով քաղաքական այն իրողութիւնից, որ ՀՅԴ-ն այլեւս կոալիցիայի անդամ չէ, այլ հանդէս է գալիս որպէս կոալիցիայի հետ համաձայնագիր ստորագրած ուժ: Համաձայնագիրը ենթադրում է՝ եւ իշխանական, եւ ընդդիմական դաշտում իբրեւ այլընտրանքային քաղաքական ուժ լինելու դիրքորոշում: Գործող միւս ուժերի հետ համագործակցելու պատրաստակամութիւն յայտնելով, խմբակցութիւնը, այսուհանդերձ, հանդէս է գալու իր առանձին տեսակէտով բոլոր այն դէպքերում, երբ այդ տեսակէտը կը տարբերուի իշխանականից կամ ընդդիմականից: Մի խօսքով, մենք մտադրութիւն ունենք դառնալ հաւասարակշռող ուժ իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ: Իսկ օրէնսդրական գործունէութիւնը ծաւալելու ենք մեր գաղափարախօսութեանը եւ քաղաքական հիմնական սկզբունքներին համապատասխան:

Գաղտնիք չէ, որ Հայաստանում գաղափարախօսական դաշտը ճապաղուած է, եւ միայն ՀՅԴ-ն է, որ սոցիալական ու տնտեսական խնդիրներում հանդէս է գալիս որպէս յստակ սոցիալիստական գաղափարախօսութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւն: Մեր օրէնսդրական գործունէութիւնն էլ, բնականաբար, բխում է մեր գաղափարախօսութիւնից, ու եթէ այդ գործունէութեան ընթացքում մեզ կը միանան ուժեր՝ թէ իշխանական, թէ ընդդիմական դաշտից, աւելի լաւ, եթէ ոչ՝ մենք ինքնուրոյն կը շարունակենք առաջ տանել մեր նախաձեռնութիւնները:

«Դրօշակ»- Իսկ ի՞նչ օրինագծեր է արդէն պատրաստել եւ ապագայում օրէնսդրական ի՞նչ նախաձեռնութիւններով է հանդէս գալու ՀՅԴ խմբակցութիւնը:

Հ.Կարապետեան.- Նախորդ, յատկապէս վերջին, երրորդ նստաշրջանում ՀՅԴ-ն շուրջ երկու տասնեակ օրինագծեր է ներկայացրել, որոնց մի մասը յաջողութեամբ ընդունուել է ԱԺ-ի կողմից, ինչպէս, օրինակ, կեն-

սապահովման նուազագոյն զամբիւղի մասին օրէնքը եւ էլի մի շարք սոցիալական ուղղուածութեան օրէնսդրական նախաձեռնութիւններ: Նոր նստաշրջանում մենք հանդէս ենք գալու մօտ 19 օրինագծերով, որոնց զգալի մասը դեռ նախորդում էին սկիզբ առել: Նոյն կենսապահովման զամբիւղի շուրջ երկար բանավէճ է ծաւալուել կառավարութեան եւ մեր միջեւ այն պատճառով, որ օրէնքը չի գործադրւում զամբիւղի կազմի եւ կառուցուածքի առումով: Այսինքն, օրէնքն ընդամէնը ընդունուել է, բայց տարեկան բիւջէի մէջ չի արտացոլւում նուազագոյն սոցիալական այն նիշը, որից ցածր լինել չի կարող: Հետեւաբար մեր նոր նախաձեռնութիւնը կոչուած է կարգաւորել այս խնդիրն օրէնքով, եւ մենք յոյս ունենք, որ 2008 թ. (սա նաեւ նախընտրական ծրագրի պայման է) մեզ կը յաջողուի կտրուկ բարձրացնել աշխատավարձը եւ կենսաթոշակները:

Կան մի շարք օրէնսդրական նախաձեռնութիւններ, կապուած աշխատանքային օրէնսգրքի հետ, արհեստակցական կազմակերպութիւնների մասին օրէնքի, գործատուների միութիւնների մասին օրէնքի փոփոխութիւնների հետ, պատրաստել ենք նաեւ աշխատողների կորպորատիւ սննդի ապահովման համակարգի մասին օրէնքի նախագիծ: Դրանք այն օրէնքներն են, որոնք պաշտպանում են աշխատաւորների շահերը, երբ գործատուներն իրաւաբանօրէն են պարտաւորուած լինում ապահովել իրենց աշխատակիցների սննդի, հանգստի եւ այլ կենցաղային խնդիրները:

Ունենք նաեւ այնպիսի նախաձեռնութիւններ, որոնք վերաբերում են ընտրական օրէնսգրքի փոփոխութիւններին: Բոլորին յայտնի է, որ ՀՅԴ-ն միշտ էլ կողմնակից է եղել 100%-անոց համամասնական ընտրութիւններին, ինչի իրաւացիութիւնն ինքը՝ կեանքն է օրէցօր ապացուցում: Ակնյայտ է, որ մեծամասնական ընտրութիւնների ընթացքում են կատարւում առաւելագոյն խախտումները եւ տեղ են գտնում կաշառքներն ու կեղծիքները: Համամասնական ընտրակարգի որդեգրումը զգալի չափով զերծ կը պահի նմանատիպ երեւոյթներից:

Մեր ամենասկզբունքային նախաձեռնութիւններից մէկը վերաբերում է տնտեսական մրցակցութեան պաշտպանութեան մասին օրէնքի փոփոխութիւններին, որը բխում է սոցիալական արդարութեան մեր պատկերացումներից եւ որտեղ հիմնականում պէտք է զարգացուի մենաշնորհային տնտեսութեան դէմ սահմանադրական նորմը: Հայաստանում մենաշնորհներ չպէտք է լինեն եւ, հետեւաբար, հարկաւոր է ստեղծել ազատ մրցակցութեան պայմաններ բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:

Ընթացիկ նստաշրջանում մենք շրջանառութեան մէջ ենք դնելու նաեւ տարածքային կառավարման մասին օրէնքը, որովհետեւ այս դաշտը բաց է եւ սահմանադրական փոփոխութիւններն ընդունելուց յետոյ առաւել անհրաժեշտ է սահմանել տարածքային կառավարման մարմինների գործառոյթները, որովհետեւ մինչեւ այսօր մենք այս դաշտը կարգաւորում ենք նախագահի տարբեր տարիների հրամանագրերով: Մինչդեռ վաղուց արդէն ժամանակն է, որպէսզի եւ մարզպետարանները, եւ տեղական կառավարման մարմինները յստակ գիտակցեն, թէ որտեղ են սկսւում եւ որտեղ են աւարտւում իրենց լիազօրութիւնները:

Եւս մի օրէնք, որը մենք նախաձեռնել ենք եւ որը հասարակական հնչեղութիւն է ունեցել, վերաբերում է սահմանուած կարգի խախտումով զօրակոչից խուսափած անձանց կարգավիճակին: Այդ օրէնքի շնորհիւ էր, որ շուրջ 3000 հայ երիտասարդներ վերադարձան Հայաստան եւ ազատուեցին քրէական պատասխանատուութիւնից: Կարծում եմ, որ նման յաջողութիւնն ինքնին յուշում է, որ օրէնքի մէջ անհրաժեշտ է փոփոխութիւններ մտցնել եւ լրացուցիչ ժամանակ տալ բոլոր նրանց, ովքեր այս կամ այն պատճառով տեղեկացուած չեն եղել:

Որոշակի վերանայումների կարիք ունի վարչական իրաւախախտումների մասին օրէնքը, ինչպէս նաեւ Ազգային ժողովի կանոնակարգը: Նախաձեռնելու ենք փոփոխութիւններ քաղաքացիութեան մասին, գոյքի մասին, աւտոտրանսպորտի մասին օրէնքներում: Շատ ենք կարեւորում նաեւ արտաքին տնտեսական գործունէութեան մասին օրէնքը, որովհետեւ, ըստ էութեան, այսօր էլ դեռ չի գործում ներդրումային քաղաքականութիւնը խրախուսող եւ ոչ մի իրաւական գործօն: Այս խնդրի շուրջ մենք լրջօրէն մտածում ենք եւ շուտով օրէնքը կը դնենք շրջանառութեան մէջ:

Կայ եւս մի օրէնք, որը կեանքի կոչելը մեզ համար սկզբունքային է եւ որը նախորդ նստաշրջանում ընդունուել է առաջին ընթերցմամբ: Խօսքս թիկնազօրային ծառայութեան մասին է: Գաղտնիք չէ, որ առկայ է հասարակական դժգոհութիւն, յատկապէս մասնաւոր անձանց թիկնապահների նկատմամբ: Օրէնքը պարտադրաբար ներգրաւում է այդ մարդկանց իրաւական դաշտ, որտեղ լիազօրուած մարմինը՝ ոստիկանութիւնը պէտք է լիցենզաւորի նրանց գործունէութիւնը: Իսկ այն անձինք, ովքեր ինչ-ինչ չափանիշների չեն համապատասխանում, ենթադրենք՝ ունեն քրէական անցեալ, պարբերաբար պէտք է ատեստաւորուեն եւ վերահսկուեն պետութեան կողմից: Այս օրէնքն այսօր, երկրորդ ընթերցման պարագայում բուռն բանավէճերից յետոյ հանուեց օրակարգից մեծամասնութեան ջանքերով: Մեծամասնութեան ներկայացուցիչներից շատերը թիկնազօրի անուան տակ տարբեր չափերի բանակներ են պահում եւ մերթ ընդ մերթ այդ բանակներն իրար են ընդհարւում կամ էլ քրէական իրավիճակներում յայտնւում: Ի դէպ, թիկնազօրային կազմակերպութիւններն իրենք են կողմնակից նման օրէնքի ստեղծմանը, քանի որ իրաւական դաշտը կը կարգաւորի յետագայ օրինական գործունէութիւնը, ներառելով պայմանագրի առկայութիւնը, կենսաթոշակի հեռանկարը եւ այլն:

«Դրօշակ».-- Ձեր նախաձեռնութիւնների մեծ մասը թեժ պայքար է խոստանում խորհրդարանական մեծամասնութեան հետ: Այս նստաշրջանում ՀՅԴ խմբակցու-թեան քանակական աճը ենթադրո՞ւմ է արդեօք նաեւ որակական աճ: Յատկապէս ո՞ր յանձնաժողովներում են աշխատելու եւ ո՞ր յանձնաժողովներն են ղեկավարելու ՀՅԴ խմբակցութեան անդամները:

Հ.Կարապետեան.- Այո, այս նստաշրջանում ՀՅԴ խմբակցութիւնն աւելացել է 5 պատգամաւորով, ինչը, բնականաբար, ապահովում է ներկայութիւնը յանձնաժողովներում, որոնց թիւը խորհրդարանում նոյնպէս աւելացել է, հասնելով 9-ի: Մեր ներկայացուցիչները կան բոլոր յանձնաժողովներում, մի քանիսում՝ երկուական հոգի: Իսկ պաշտպանութեան, անվտանգութեան եւ ներքին գործերի, ինչպէս նաեւ արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովները պարզապէս ղեկավարւում են դաշնակցական պատգամաւորների կողմից: Եւս երկու՝ ֆինանսաբիւջետային եւ պետահրաւական յանձնաժողովներում դաշնակցականները զբաղեցնում են տեղակալների պաշտօններ: Մենք նաեւ անդամ ենք Աժ բոլոր պատուիրակութիւնների եւ բարեկամութեան խմբերի:

«Դրօշակ».-- Նման պատասխանատու ծանրաբեռնուածութիւնը ենթադրում է նաեւ արտախորհրդարանական աշխատանքներ, որոնք նախընտրական շրջանում առաւել ակտիւ պէտք է լինեն: Ի՞նչ ուղղութիւններով էք մտադիր ծաւալել ձեր գործունէութիւնը, հաշուի առնելով նաեւ ներկուսակցական խնդիրները:

Հ.Կարապետեան.- Մենք մշտապէս պատրաստ ենք եղել համագործակցել ոչ միայն խորհրդարանի ներսում՝ իշխանական կամ ընդդիմական, այլեւ արտախորհրդարանական ուժերի հետ, այդ թւում՝ հասարակական կազմակերպութիւնների: Օրինակ, նախորդ նստաշրջանների ընթացքում մենք սերտօրէն համագործակցել ենք սպառողների շահերը պաշտպանող տարբեր կազմակերպութիւնների, ինչպէս նաեւ բոլոր այն ոլորտների ներկայացուցիչների հետ, որոնց շահերը նպատակ ունենք տեղափոխել իրաւական դաշտ: Յամենայն դէպս, մեր բոլոր հնչեցրած օրէնսդրական նախաձեռնութիւնները սկզբունքային են եւ բխում են մեր գերագոյն մարմնի ժողովների բանաձեւերից, գերագոյն մարմնի որոշումներից եւ ընդհանրապէս մեր գաղափարախօսութիւնից:

Մեր ակտիւ աշխատանքի հիմնական ուղղութիւնն, առաջին հերթին, ի հարկէ, օրէնսդրական գործունէութիւնն է, մշտական եւ ժամանակաւոր յանձնաժողովներում մասնակցութիւնը, արտաքին յարաբերութիւնները, քանի որ ՀՅԴ-ն Սոցիալիստական Ինտերնացիոնալի անդամ է եւ անընդհատ շփումների մէջ է դաշնակից կուսակցութիւնների հետ: Սակայն բացի բուն խորհրդարանական աշխատանքից շարունակելու ենք զբաղուել կուսակցական խնդիրներով, հանդիպելու ենք մեր կառոյցների, մարզային կոմիտէների հետ: Խմբակցութիւնն ունի նաեւ յատուկ որոշում քաղաքացիների հետ կապի վերաբերեալ: Կազմակերպուելու են ամենամսեայ ընդունելութիւններ, ժողովրդային հանդիպումներ, այս կամ այն հարցի շուրջ քննարկումներ: Ընդ որում՝ մենք նկատի չունենք միայն մեր օգտին քուէարկած 180.000 ընտրողներին: Նպատակաուղղուած աշխատելու ենք բոլոր խաւերի հետ, որպէսզի հասցնենք մեր գաղափարները ստուար

զանգուածներին: Ի հարկէ, այս կամ այն ուժին ձայն տալու դրդապատճառները տարբեր են եւ ամէնքն ունեն սեփական կարծիքի իրաւունք, բայց ի վերջոյ Հայաստանում պէտք է գերիշխի ընտրութիւն կատարելու օրինական, քաղաքական մոտիւացիան, ինչին կարող է նպաստել ճիշտ գաղափարախօսութիւնը:

«Դրօշակ».-- Իսկ ի՞նչն էր մինչեւ հիմա խոչընդոտում այդ գաղափարախօսութեանը տարածուել ստուար զանգուածների մէջ: Արդեօ՞ք միայն զանգուածների հասունացման գործօնը: Մի՞թէ ազդեցիկ գաղափարախօսութեան տէր քաղաքական ուժն ինքը պարտաւոր չէ հնարաւորին չափ զերծ մնալ սխալներից: Նախորդ նստաշրջանում կոալիցիայի մէջ մտնելը ոմանք սխալ են համարում: Ժողովրդի մէջ էլ Դաշնակցութեան գաղտնի գործելակերպի ու ծածկամտութեան շուրջ ասէկոսէներ են հիւսւում:

Հ.Կարապետեան.- Այդ ամէնը պայմանաւորուած է եւ օբյեկտիւ, եւ սուբյեկտիւ պատճառներով: Օբյեկտիւ պատճառներից է այն, որ տարիներ շարունակ երկրում տարուել է հակադաշնակցական քարոզչութիւն: Եւ ոչ միայն զուտ հակադաշնակցական, այլեւ առհասարակ ամէն ինչ արուել է, որպէսզի ազգային գաղափարախօսութիւնը մերժուի: Օբյեկտիւ պատճառը վերածուեց սուբյեկտիւի արդէն անկախութեան տարիներին, երբ իշխանութիւնը ՀՀՇ-ի ձեռքում էր: Եւ ՀՅԴ-ի հանդէպ ժողովրդի կասկածամտութիւնը վերջնականապէս արմատախիլ անելու համար ժամանակ էր պէտք: Այսօր արդէն մեր գաղափարախօսութիւնն ընդունում են բոլոր նրանք, ում համար բացայայտ է, որ Հայաստանում ազգային մտածելակերպն այլընտրանք չունի:

Ինչ վերաբերում է նախորդ նստաշրջանում մեր կոալիցիա մտնելուն, ապա չեմ համաձայնի, որ դա սխալ էր: Սխալ չէր, որովհետեւ իշխանութեան մէջ լինելը արդարացուած էր արտաքին քաղաքականութեան հարցերում՝ Ցեղասպանութեան ճանաչման, Արցախի խնդրի, Հայ Դատի խնդրի նկատմամբ դիրքորոշումների ու հայեացքների համահնչութեամբ: Այդ առումով նոյնն էլ այսօր է. որքանով որ կը համընկնեն մեր դիրքորոշումներն իշխանական մեծամասնութեան հետ, այդքանով էլ կ'որոշուի մեր համագործակցութիւնը, որը երբեք չի եղել մեզ համար ինքնանպատակ: Այլապէս բոլոր միւս հարցերում այսպիսի բուռն բանավէճեր չէին ընթանայ: Մենք հետեւողականօրէն առաջ ենք տանելու մեր օրէնսդրական նախաձեռնութիւնները, որոնք սկզբունքային են, մանաւանդ այն դէպքերում, երբ օրէնքը փաստացի ընդունուում է, բայց կեանքի չի կոչւում, տարածելով կոռուպցիայի մթնոլորտ: Հէնց այս դէպքերում է, որ մեր կեցուածքը լինելու է կոշտ եւ անհանդուրժողական:

Իսկ ՀՅԴ-ի գաղտնիութիւնը մի իւրօրինակ լեգենդ է: Ի հարկէ, ազգային ազատագրական պայքարի ընթացքում կային որոշակի փուլեր, որոնք պահանջում էին գաղտնի կամ գոնէ ոչ հրապարակային գործունէութիւն, բայց այսօր դրա անհրաժեշտութիւնն ամենեւին չկայ: ՀՅԴ-ն խորհրդարանական կուսակցութիւն է, վաղուց կառավարութեան մաս է կազմում, եւ գաղտնիութեան քօղը վաղուց ի վեր պատռուած է: Խորհրդաւորութեան մասին ՀՅԴ-ի պարագայում խօսելն անիմն է նաեւ այն պատճառով, որ մեր կուսակցութիւնն իր ներքին կառուցուածքով գործող բոլոր քաղաքական ուժերից ամենաժողովրդավարականն է: Իւրաքանչիւր անդամի կամ կուսակցական խմբի կարծիքն առանց խոչընդոտների կարող է հասնել Դաշնակցութեան վերին ատեաններ եւ դառնալ գերիշխող: Եւ մեր ժողովների որոշումներն էլ են մեզ համար գերիշխող, իսկ բոլոր պատգամաւորներն ընտրւում են խմբերից: Որեւէ այլ կուսակցութիւն չունի այսպիսի ժողովրդավարական բնոյթի համակարգ, ու եթէ մենք որդեգրել ենք այս համակարգը, նշանակում է մենք չենք կարող համարուել փակ կուսակցութիւն: Հակառակը, մեր համախոհների շարքերը տարէց տարի համալրւում են երիտասարդներով, եւ ուրեմն ՀՅԴ-ն, լինելով ամենահին կուսակցութիւններից մէկը, նաեւ ամենահեռանկարայինն է, քանզի ընկալուել է ապագայում մեզ փոխարինող սերնդի կողմից:

Հարցազրոյցը վարեց Լիլիթ ՅՈՎՍԷՓԵԱՆԸ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱՀԱՏՄԱՆ ԱԿՏԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

(Սեւր, 10 օգոստոսի 1920 թ.)

Լեւոն ՇԻՐԻՆԵԱՆ

ՍԱՅՔՍ-ՊԻԿՈՅԻՑ՝ ՍԵՒՐ

Թուրքիայի ու նրա շուրջ առկայ խնդիրներին քաջատեղեակ թուրք հրապարակագիր, քաղաքական գործիչ ու թունդ ազգայնական Հիւսեյն Ջահիդը (Եալչընը) գրում է. «Տկար, դողահար Օսմանեան կայսրութիւնը կարողացաւ դարերով երկարել իր հոգեվարքը, հակառակ եւրոպական ամէնէն մեծ ու հզօր պետութեանց ընչաքաղցութեան, ահաւոր թշնամութեանց, կրկնակի յարձակումներին եւ յաղթանակներին: Ինչո՞ւ: Տկարներին պահպանող այդ ուժը մի փոքր տարազ էր՝ ուժերի հաւասարակշռութիւն» (Նաւասարդեան Վ., Նեղուցները, Կահիրէ, 1947, էջ 251-252): Այս իրողութեան գիտակցութեամբ էր, որ թուրքերն անպատիժ կերպով առաջ էին տանում (արեւմտա)Հայաստանի ոչնչացման եւ կայսրութեան ողջ տարածքում հայերի բնաջնջման համազգային ցաւագարութեան վերածւած գործը: «Հայաստանի բարեփոխումներով, - ասում էր իթթիհատական երեսփոխան Ասըմ Բէյը,- մեզ չեն կըրնար վախցնել: **Եւրոպայի հաւասարակշռութեան համար Թուրքիոյ յարատեւութիւնը ամէն տարակոյսէ վեր է** (ընդ-գծումը իմն է.- Լ. Շ.)» (Տե՛ս Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանեան բռնատիրութեան դէմ. 1890-1910, Բէյրութ, 1973, էջ 261): Իմպերիալիստական խոշոր տէրութիւնների անհաւասարաչափ զարգացման հետեւանքով եւրոպական հաւասարակշռութեան խախտումն էլ ծնեց Առաջին աշխարհամարտը: Մասնաւորապէս, 1912, 1913 եւ 1914 թուականների սկզբների, միջազգային մշտական ճգնաժամերի տարիների փորձը՝ ամրագրել Առաջաւոր Ասիայում առաջացած փաստական հաւասարակշռութիւնը, յաջողութիւն չունեցաւ:

Քաղաքակիրթ Եւրոպայի տիրակալները ձեռնամուխ եղան տասնամեակների, նաեւ հարիւրամեակների ընթացքում կուտակուած խնդիրների լուծմանը, իսկ դիմագիծը կորցրած աշխարհակարգը թեւակոխեց ռազմավարական նոր հաւասարակշռութեան որոնման ուղին[1]: Առաջին արհաւիրքներն իրենց սպասեցնել չտուեցին: Վերահսկողութիւնից դուրս մնացած Օսմանեան ճիւաղը, ի վերջոյ, հնարաւորութիւն ստացաւ իրականացնելու հայերի բնաջնջման եւ Հայաստանի ոչնչացման թուրանական ծրագիրը: Իսկ Եւրոպան անդամահատութեան սեղանին բարձրացրեց Օսմանեան կայսրութեանը, ճիշտ է, սկզբնապէս դեռեւս գաղտնի պայմանաւորուածութիւնների մակարդակով: 1916 թուականի փետրուարին Ֆրանսիայի ԱԳ բարձրագոյն պաշտօնեաներից Ժորժ Պիկոն եւ Անգլիայի խորհրդարանի Համայնքների պալատի կաթոլիկական խմբակի նախագահ, յայտնի արեւելագէտ ու

հայասէր յորջորջուած սըր Մարք Սայքսը մշակեցին Թուրքիայի ասիական տիրոյթների բաժանման նախագիծը[2]: Սայքս-Պիկօ անունն ստացած պայմանագիրը, որը յետագայում ստացաւ «արդար» յափշտակութեան համաձայնագիր անունը, կնքուել է Լոնդոնում՝ նոտաների փոխանակման տեսքով 1916 թուականի մայիսի 9-ից 16-ին Ֆրանսիայի դեսպան Փոլ Կամբոնի եւ Անգլիայի արտգործնախարար Էդուարդ Գրեյի միջեւ: Այս գաղտնի պայմանագրի դրոյթներն էլ Սան Ռեմոյի կոնֆերանսում (19-26 ապրիլ, 1920 թ., Իտալիա) դրուեցին Անտանտայի տէրութիւնների Գերագոյն խորհրդի նիստում քննարկուած Թուրքիայի հետ կնքուելիք հաշտութեան դաշնագրի հիմքում[3]: Այսպիսով, կայսրութեան անդամահատման հարցը «realpolitik»-ի շրջանակներում, վերջապէս, ստանում էր որոշակի ուրուագիծ...

Ընդ որում, դաշնակիցները Թուրքիայի բաժանման մասին ամենայն վճռականութեամբ եւ բացորոշ յայտարարեցին 1917 թուականի յունուարի 10-ին որպէս պատասխան ԱՄՆ նախագահ Վուդրօ Վիլսոնի «խաղաղ առաջարկների»: Այդ շրջանում դաշնակիցները պատերազմի գլխաւոր նպատակներից մէկը համարում էին «այն ժողովուրդների ազատագրութիւնը, որոնք գտնուում են թուրքերի արիւնոտ բռնակալութեան տակ», ինչպէս նաեւ «Եւրոպայից, արեւմտեան քաղաքակրթութեանը միանգամայն օտար, Օսմանեան կայսրութեան վտարումը» (Ключников Ю., Севр и Лозанна. К дипломатической истории договоров.- Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. Полн. пер. с фр., М., 1927, էջ VIII): Արեւմուտքի առաջնորդներն աւելի յստակ ու բացայայտ Թուրքիայի կազմաքանդման, նրա քաղաքակրթական ժամանակավրէպութեան մասին սկսեցին խօսել ցարիզմի տապալումից յետոյ: Վիլսոնն ու Լլոյդ Ջորջը 1918 թուականին նկատեցին, որ «ցարիզմի խորտակումն արմատից փոխեց արեւելեան կնճիռը», որ «...գլանակը կանգնեց, պայթեց պատերազմից եւ յեղափոխութիւնից... Ռուսական վտանգը վերացաւ»: Ուրեմն, Թուրքիան այլեւս պէտք չէր, Թուրքիան իր հերթին ենթակայ էր ոչնչացման: Թերեւս երկրաքաղաքական այս իրողութիւնը նկատի ունէր Լլոյդ Ջորջը, երբ 1920 թ. յունուարի 5-ին ասում էր. թեկուզեւ մենք չենք ցանկանում սպառնալ Օսմանեան կայսրութեան պահպանմանը թուրք ժողովրդի բուն հողերի սահմաններում, նրանց Կ. Պոլիս մայրաքաղաքով, այդուհանդերձ Միջերկրական եւ Սեւ ծովերի միջեւ անցումը պէտք է միջազգայնացուի եւ չեզոքացուի, իսկ Արաբիան, Հայաստանը, Միջագետքը (Իրաքը.- Լ. Շ.), Սիրիան եւ Պաղեստինը պէտք է ստանան ճանաչում իրենց յատուկ ազգային պայմաններով (Ключников Ю., Севр и Лозанна, էջ VIII-IX): Միջին Արեւելքի վերակառուցման ռազմավարութեան այս ուրուագիծն էլ, ըստ էութեան, դարձաւ «Սեւրի դաշնագիր»:

Մինչ այդ, փաստօրէն, Արեւելեան Հայաստանն ամբողջացել էր որպէս Հայաստանի Հանրապետութիւն: Եւ դա կատարուում էր, ինչպէս մեզ է թւում, Մուդրոսի զինադադարի (30 հոկտեմբերի, 1918 թ.) շրջանակներում, որի 11-րդ կէտն ասում էր. «Թուրքական զօրքերի անմիջական յետքաշում դէպի Պարսկաստանի հիւսիս-արեւմուտքում մինչպատերազմական սահմաններ, Անդրկովկասի մէկ մասի դատարկում, մնացած Անդրկովկասն էլ պէտք է դատարկուի, եթէ դա պահանջեն Դաշնակիցները՝ տեղում իրերի դրութիւնը ուսումնասիրելուց յետոյ»: Այսպէս, 1919 թուականի ապրիլ-մայիսին անգլիացիների օժանդակութեամբ Հայաստանի Հանրապետութեանն են միացուում Շիրակի, Կարսի, Կաղզուանի, Կողբի, Սարդարապատի, Սուրմալուի եւ Վեդի-Բասարի շրջանները, ինչպէս նաեւ նոյն անգլիացիների գործակցութեամբ՝ Շարուր-Նախիջեւանը: Այդ օրերին էր (25 յունիսի, 1919 թ.), որ հաշտութեան Գերագոյն խորհուրդ ներկայացած սուլթանի պատուիրակ, վարչապետ Ֆերիտ փաշան Փարիզում ասում էր. «Այն դէպքում, երբ դաշնակիցները ճանաչեն Երեւանում հիմնադրուած Հայաստանի Հանրապետութիւնը, Օսմանեան պատուիրակութիւնը հնարաւոր կը համարէ բանակցութեան մէջ մտնել սահմանների փոփոխութեան համար: Եւ յանձն կ'առնէ ամէն դիւրութիւն ստեղծել հայերի համար, որոնք կը ցանկանան գնալ եւ բնակութիւն հաստատել նոր հանրապետութեան մէջ» (Paillares Michel, Le Kemalisme Devant les Allies, Paris, 1922, էջ 39: Տե՛ս Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս: Քննական տեսութիւն, Բէյրութ, 1964, էջ 207):

Վերաբաժանուող աշխարհի նոր հաւասարակշռութեանն ուղղորդուած միտումներն էլ, որոնք իրենց արտացոլումն էին գտել Սայքս-Պիկօ համաձայնութեան մէջ, կեանքի կոչեցին, ի վերջոյ, Սեւրի դաշնագրի տեքստն ու ստորագրումը (10 օգոստոսի, 1920 թ., Սեւր, Ֆրանսիա), մի կողմից, պատերազմում պարտուած Օսմանեան կայսրութեան եւ, միւս կողմից, յաղթական «գլխաւոր դաշնակից տէրութիւնների»՝ Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, ու «դաշնակից երկրների»՝ Բելգիա, Լեհաստան,

Հայաստան, Հեջազ, Յունաստան, Չեխոսլովակիա, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբա-Խորուաթա-Սլովենական պետութեան միջեւ: Օսմանեան կայսրութեան հետ խաղաղութեան դաշնագիրը Վերսալ-Վաշինգտոնեան համակարգի վերջին դաշնագիրն էր, համաշխարհային ռազմավարական մտքի եզական (ունիկալ) ստեղծագործութիւնը, թերեւս երբեւէ ստորագրուած ամենամարդասիրական եւ ամենաարդարացի փաստաթուղթը՝ կառուցուած ազգագրական-քաղաքակրթական յարացոյցի եւ մշակուած ԱՄՆ-ի նախագահ Վուդրօ Վիլսոնի հռչակած ինքնորոշման սկզբունքի հիման վրայ: Աւելին, փաստաթուղթն ամենահեռանկարայինն էր (եւ է՝) Առաջաւոր Ասիայի եւ Մերձաւոր Արեւելքի տեւական խաղաղութեան եւ այնտեղ ապրող ժողովուրդների անվտանգութեան տեսանկիւնից: Սեւրն իր մէջ պարունակում էր տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների ներդաշնակ համակեցութեան ներուժը: Իր էութեամբ դաշնագիրը հակաիմպերիալիստական էր:

Այսպիսով, Փարիզի հաշտութեան կոնֆերանսը պատերազմում պարտուած գերմանական բլոկի մնացած երկրների շարքում հաշտութեան դաշնագրի տեքստ մշակեց նաեւ Թուրքիայի հետ, որն իր անունն ստացաւ դաշնագրի ստորագրման վայրի, Փարիզի Սեւր արուարձանի անունով: Դաշնագիրը հրապարակուեց 1920 թ. մայիսին մամուլում եւ յանձնուեց Օսմանեան կառավարութեանը, որը ստորագրումը ձգձգելով երեք ամիս՝ այդուհանդերձ հարկադրուած էր ստորագրելու:

Դաշնագիրը բաղկացած է 13 մասերից՝ բաժանուած 433 յօդուածների: Առաջին մասը, ինչպէս Վերսալեան համակարգի բոլոր պայմանագրերինը, նուիրուած է Ազգերի լիգայի կանոնադրութեանը: 2-րդ եւ 3-րդ մասերը սահմանում են յետպատերազմեան Թուրքիայի սահմանները, նրա քաղաքական դրութիւնը: Եւրոպայում Թուրքիան կորցնում է Արեւելեան Թրակիան Էդիրնէի ու Գելիբոլու թերակղզու հետ (անցնում է Յունաստանին), Նեղուցների շրջանը (դրւում է միջազգային կառավարման տակ), Կ. Պոլիսը մնում է Թուրքիային: Ընդ որում, գլխաւոր դաշնակիցներն իրենց իրաւունք էին վերապահում փոխել այդ որոշումը, եթէ Թուրքիան խուսանաւէր Սեւրի դաշնագրի եւ նրա լրացուցիչ պայմանագրերի ու համաձայնագրերի (կոնվենցիա) կատարումից:

Ասիայում Յունաստանն ստանում է Զմիւռնիան (Իզմիր) եւ նրան յարակից ընդարձակ շրջանը: Սեւրի դաշնագիրը կեանքի էր կոչում նաեւ «Ինքնավար Քրդստանը» (Յօդ. 62-64): Դաշնագիրը հեռատեսօրէն սահմանում էր քրդերի հայրենիքի, հետեւապէս Քրդստանի ճշգրիտ աշխարհագրական տեղադրութիւնը (որոշման ռազմավարական այս արժէքը այնքան է այժմէական, ինչպէս որ էր 1920 թուականի օգոստոսի 10-ին): Նրա 62-րդ յօդուածն ասում է, որ քրդերին տեղական ինքնավարութիւն պիտի պարտադրուի «առաւելակշիռ թիւ մը ունեցած այն շրջանին, որ կ'իյնայ Եփրատի արեւելեան կողմը եւ Հայաստանի ետքէն որոշուելիք սահմանին հարաւակողմը ու Թուրքիա-Սուրիա ու Միջագետք սահմաններուն հիւսիսկողմը» (դաշնագիրը անհրաժեշտութեան դէպքում նախատեսում էր որոշ սրբագրումներ): Դաշնագրի 64-րդ յօդուածը նախատեսում էր նաեւ անկախ Քրդստանի կազմութիւն, եթէ գնահատուէր, որ «քուրդ ազգը ընդունակ է այդ անկախութեան», յանձնարարելով, որ «նրան տրուի այդ անկախութիւնը...»: Դաշնագրով Օսմանեան կայսրութիւնից անջատւում էին արաբական երկրները: Թուրքիան հրաժարւում էր Եգիպտոսի եւ արաբական երկրների հանդէպ ունեցած գերիշխանութիւնից: Հեջազը ստանում էր անկախութիւն, իսկ Եգիպտոսը, Պաղեստինը, Սիրիան ու Միջագետքը Ազգերի լիգայի օժանդակութեամբ, որպէս ենթամանդատային տարածք, յանձնւում էին Մեծ Բրիտանիային ու Ֆրանսիային:

Սեւրի դաշնագիրը լուծում էր նաեւ միջազգային քաղաքականութեան թանձրացած կնճիռներից ամենաբարդը՝ Հայկական հարցը: Տուեալ դէպքում կիրառելով «պատմական իրաւունքի» կատեգորիան, այն հաստատում էր Մեծ եղեռնի հետեւանքով հայաթափուած երկրամասի հայ ժողովրդին պատկանելութիւնը: Դրանով Գլխաւոր դաշնակիցները արտայայտում էին իրենց հաւաքական կամքը, որին միանում էր Օսմանեան օրինական կառավարութիւնը, ստեղծելու Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը: Դաշնագրի 89-րդ յօդուածն ասում է, որ Թուրքիան «ճանաչում է Հայաստանը որպէս Ազատ ու Անկախ պետութիւն», իսկ 89-րդ յօդուածով ԱՄՆ-ի նախագահի իրաւարարութեանն էր յանձնւում Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգներում հայ-թուրքական սահմանի որոշման խնդիրը եւ յայտնւում էր անառարկելի պատրաստակամութիւն՝ ընդունելու ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի «որոշումով Հայաստանի ծով իջնելուն եւ վերոյիշեալ սահմանին յարակից բոլոր օսմանեան հողերուն զինուորապէս չէզոքացման մասին պարտադրուած բոլոր տրամադրութիւնները»: [Ինչպէս եւ սպասւում էր, բնակչութեան համեմատական թուի պարագան գլխաւոր տեղ չզբաղեցրեց: Հայաստանի սահմանների որոշման համար հիմք ծառայեցին Վիլսոնի կողմից նշա-

նակուած յանձնաժողովի կողմից ուսումնասիրուած տեղագրութիւնը, տնտեսութեան զարգացման առանձնայատկութիւնները, տրանսպորտը, ջրային ռեսուրսները, առեւտրական ճանապարհները, ժողովրդագրական խնդիրները եւ այլն]: Կոմսը հաղորդում է, որ «Սեւրեան» Հայաստանի սահմանագծման մէջ ամերիկացիները զգալապէս հաշուի առան 1913 թ. Հայաստանի բարենորոգումների ծրագրի ժամանակ արուած հայկական կողմի առաջարկները (Տես, օրինակ, Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 47, 92): 92-րդ յօդուածը պարտաւորեցնում էր Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանը որոշել «շահագրգռուող կառավարութեանց կողմէ հաւաքական համաձայնութեամբ մը», հակառակ պարագայում այդ սահմանը «դաշնակից գլխաւոր տէրութեանց կողմէ պիտի որոշուի»:

Վիլսոնն իրաւարարական իր վճիռն ընդունեց 1920 թ. նոյեմբերի 22-ին, համաձայն որի Հայաստանին էր անցնում 1914 թուականի հոկտեմբերի 29-ի դրութեամբ առկայ Տրապիզոնի նահանգից՝ Սեւ ծովով Տիրեբոլու (Տրիպոլիս) գիւղաքաղաքից արեւելք, մինչեւ ռուսական սահմանը ընկած տարածքը, Էրզրումի (Կարին) նահանգից՝ Կելկիթ (Գայլ գետ) գիւղաքաղաքից եւ Երզնկայից արեւելք գտնուող տարածքը, Բիթլիսի (Բաղէշ) նահանգը՝ բացի Սղերդի շրջանից, Վանի նահանգի հիւսիսային կէսը՝ Վանայ լճից հարաւ եւ Բիթլիս ու Մուշ քաղաքներից հարաւ-արեւմուտք, Մոկս-Կոտուր գծով՝ պարսկական սահմանով: Բիթլիսից եւ Մուշից արեւմուտք ընկած սահմանը, որն անցնում է Երզնկայից ոչ հեռու, որոշւում է ըստ բնական աշխարհագրական պատնէշի եւ ապահովում է Հայաստանի անվտանգութիւնը, իսկ Դերսիմից հիւսիս սահմանի բնոյթն առաջին հերթին պայմանաւորուած է հայկական պետութեանը դէպի ծով յարմար ելք տալու կարեւորութեամբ: Ընդհանուր առմամբ նախատեսւում էր Հայաստանին վերադարձնել 40 հազար քառակուսի մղոն տարածք: Որոշումը ձեւակերպուել էր համապատասխան միջազգային իրաւարարութեան պայմանների: Վիլսոնը նկատի ունենալով հայ, յոյն, քուրդ եւ թուրք ժողովուրդների շահերը եւ, գլխաւորապէս, «հայ պետութեան» ապագայ «առողջ տնտեսական կեանքը», միաժամանակ նկատի ունէր Հայաստանին կից Թուրքիայի տարածքների ապառազմականացումը, ինչը նախատեսւում էր Դաշնագրով (159-րդ, 196-200-րդ յօդուածներ) եւ որով երաշխաւորւում էր Հայաստանի անվտանգութիւնը: Դաշնագիրը անօրինական էր յայտարարում «լքեալ գոյքի» («էնուալը մեթրուքէ») մասին Օսմանեան պետութեան օրէնքը, «Պատիժներ» մասում նախատեսում էր պատերազմական թուրք յանցագործների պատիժը եւ այլն:

Ասուեց, որ Վիլսոնը իրաւարարական իր վճիռը կայացրեց 1920 թ. նոյեմբերի 22-ին, Հայաստանում իշխանութիւնը բոլշեւիկներին փոխանցելուց (1920 թ., դեկտեմբերի 2) մէկ շաբաթ առաջ: Սակայն նրա նախատեսուած հրապարակումը (դեկտ. 17) յետաձգուեց անգլիացիների խնդրանքով[4]:

Անշուշտ, ճիշտ էր թրքամէտ բոլշեւիկ պատմաբանը. «Իմպերիալիստների մտահղացումներն իրենց մէջ պարունակում էին լուրջ եւ ահեղ սպառնալիք: Թուրքիային յայտարարեցին մահուան դատավճիռ: Դատավճիռն ի կատար չածուեց...» (Миллер А. Ф., Дипломатическая подготовка Севрского договора.- "Проблемы востоковедения", 1960, N 5, էջ 35): Իսկ ինչո՞ւ: Ինչո՞ւ ներեցին թուրք պետութեանը...

Լսենք Էրզրումում (Կարին) Ռուսաստանի գլխաւոր հիւպատոս, ե՛ւ սպիտակ, ե՛ւ կարմիր Ռուսաստանի դիւանագիտական խարդաւանքներին քաջատեղեակ, գուցէ եւ նրանց մասնակից Ե.Ա.Ադամովին: «Պատերազմող երկրների թուից Ռուսաստանի դուրս գալը,- գրում է նա,- ազատեց նախկին ընկերներին նրա (Ռուսաստանի.- Լ. Շ.) Փոքր Ասիա տարածուելու սպառնալիքից: Սակայն դրա փոխարէն նա արմատից ոչնչացրեց եւ Թուրքիայի բաժանման հնարաւորութիւնը: Միայն 1919 թուականի կէսերին, երբ թուրքերին մնացած Անատոլիայում սկսուեց ազգայնական շարժումը, անգլիացիներն ու ֆրանսիացիները հասկացան, թէ նրանց համար որքան վտանգաւոր էր քաղաքական իրադրութեան փոփոխութիւնը, ինչն արդիւնք էր ռուսական նոր քաղաքականութեան...»: «Բաժանման այն սկզբունքը,- շարունակում է Ե. Ա. Ադամովը,- որ ճշմարտութիւն էր դիտուել Սայքս-Պիկո-Սազոնով նախագծով[5] հիւսիսային (բուն Թուրքիա.- Լ. Շ.) եւ արեւելեան (Արեւմտեան Հայաստան.-Լ.Շ.) Անատոլիայի համար, ամենեւին քննութիւն չբռնեց: Այն չքացաւ, հէնց որ անհետացան ռուսական սուինները...» (Տե՛ս Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. Под ред. Е. А. Адамова. М.,1924, էջ 86): Եւ իրօք, բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ աստիճանաբար վերանում էր Փոքր Ասիայում, Օսմանեան կայսրութեան ասիական տիրոյթների շուրջ ձեւաւորուող նոր հաւասարակշռութիւնը: Եւ ինչպէս ցոյց տուեցին Թուրքիայի շուրջ յետագայ զարգացումները, կեանքի էին կոչւում փոփոխութիւնների նոր միտումներ, իրենց ընթացքով աղէտաբեր՝ ինչպէս Սեւրի համա-

կարգի, այնպէս էլ մոխիրների տակից կայծկլտացող Հայաստանի համար: «...Ռուսաստանի դուրս գալը պատերազմից եւ նրա վերածումը յեղափոխութեամբ համակուած երկրի,-նկատում է Եու. Կլիւչնիկովը,- կատարելապէս խառնեց դաշնակցային բոլոր խաղաթղթերը: Շարքից դուրս եկաւ Մերձաւոր Արեւելքում ենթադրեալ նոր հաւասարակշռութեան գլխաւորագոյն տարրերից մէկը» (Տե՛ս Ключников Ю., Севр и Лозанна, էջ XII):

Այսպէս, տեղի է ունենում չնախատեսուածը՝ ռուս (ապազգայնական-բոլշեւիկեան)-թուրքական (ազգայնական-շովինիստական) մերձեցումը: «1919-ի աշնան,- գրում է Զարեւանդը,- Սամսոնի մէջ արդէն կնքուել էր համաձայնութիւն խորհրդային կառավարութեան եւ Քեմալի միջեւ» (Զարեւանդ, Միացեալ, անկախ Թուրանիա կամ ինչ կը ծրագրեն թուրքերը, Աթէնք, 1987, էջ 130-131): Ռուս-թուրքական սերտաճումը արագանում է 1920 թուականին, Վարշաւայի պատերի տակ Կարմիր բանակի ջախջախումից եւ յեղափոխութեան դէպի Եւրոպա արտահանման փորձի լիակատար ձախողումից յետոյ, երբ Ռուսաստանը որոշում է այժմ էլ «խաղալ արեւելեան ազգայնականութեանց խաղաթուղթը՝ ուրիշ ձեւով մը հարուածելու համար Եւրոպական մեծ տէրութիւնները» (Փաստրմաճեան Հ., Հայոց պատմութիւն: Սկիզբէն մինչեւ Լոզանի դաշնագիրը, թարգմ. ֆր., Բէյրութ, 1992, էջ 536): Խաղաղութեան վեհաժողովում ՀՀ կառավարութեան պատուիրակութեան նախագահի տեղակալ Վ. Փափազեանը (Կոմս) հաղորդում է, որ «այդ չարաշուք օրերուն (1920 թ. սկզբներին.- Լ. Շ.) անգլիական կառավարութիւնը, որ շատ ուշադիր կը հետեւէր Քեմալի շարժումներուն, խիստ անհանգիստ էր ռուս-թուրքական բարեկամութեան եւ մերձեցման քայլերէն: Անգլիա, իբր հակամիջոց, ջանաց քայքայել այդ մերձեցումը, ոտքի հանելով Տիգրանակերտի եւ Մալաթիոյ քրդութիւնը» (Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, Կահիրէ, 1957, էջ 83): Սակայն, իզուր: Լլոյդ Ջորջն իր հերթին Լոնդոնում Ռուսաստանի ներկայացուցիչ Լ. Կրասինից (1920 թ. յունիսի սկիզբ) պահանջեց, որ Ռուսաստանը հրաժարուի քեմալականներին օժանդակելուց եւ առհասարակ Փոքր Ասիայում, Իրանում, Աֆղանստանում, Հնդկաստանում «խռովութիւն սերմանելուց» (Годовой отчет НКИД к VIII съезду советов 1919 год — 1920. М., 1921, էջ 36. - Տե՛ս Миллер А. Ф., Дипломатическая подготовка Севрского договора, էջ 42):

Եւ տեսէք, թէ ինչպէս է արդարացնում ճնշուած ժողովուրդների պաշտպանի մորթին ուսերին գցած ռուսական սոցիալ-իմպերիալիզմի «պատմաբանը» աշխարհում առաջին ցեղասպան պետութեան քաղաքականութիւնը: Հաստատելով Սեւրի դաշնագրի, իբրեւ թէ, հակախորհրդային (կարդա՝ հակառուսական - Լ. Շ.) ուղղուածութիւնը, Միլլերը գրում է. «Նրա կարեւորագոյն յօդուածները Նեղուցների մասին, իմպերիալիստական առաջադիրքերի (ֆորպոստ) ստեղծումը Հայաստանում, Քրդստանում եւ հէնց Թուրքիայում՝ վերածուած իմպերիալիզմի ռազմավարական ռեզերվի, նախամտածուած էին հակախորհրդային ներխուժման համար: Եթէ Սեւրի դաշնագիրը կեանքի կոչուէր, ոչ միայն կը դադարէր Թուրքիայի պետական գոյութիւնը, այլեւ կտրուկ կերպով կը վատանար Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ռազմական դրութիւնը: Դրա համար էլ թուրք ժողովրդի պայքարը Սեւրի դէմ կենսականօրէն կարեւոր նշանակութիւն ունէր եւ Խորհրդային երկրի համար» (նոյն տեղը, էջ 51-52): Ահա այսպէս: Խ.Ռուսաստանի կենսական շահերը պահանջում էին «Թուրքիայի պետական գոյութիւնը»: Նշանակում է՝ ե՛ւ Հայաստանի ջախջախումը: Ահա թէ ինչու էր Լեգրանի առաքելութիւնը Հայաստանի իշխանութիւններից 1920 թ. աշնանը առաջինը պահանջում հրաժարուել Սեւրից եւ ինչու պէտք է հայ կոմունիստները գնային ազգային դաւաճանութեան՝ կոտրել հանրապետութեան բանակի դիմադրողականութիւնը, բացելով թուրքական արշաւանքի ճամփան դէպի Երեւան]: Ցինիկ է ասուած, սակայն ճշմարիտ է: «Իր վրայից աւանդական սպիտակութիւնը դեն նետած ռուսական արջը, կարմիրը, դուրս եկաւ աւելի քիչ համակերպուող, քան առաջ էր: Եւ այդ ժամանակ,- գրում է մեզ արդէն քաջածանօթ Ե. Ա. Ադամովը,- ե՛ւ Ֆրանսիայում, ե՛ւ Անգլիայում սկսեցին ժամ առ ժամ աւելի բարձր խօսել այն մասին, որ Վիլսոնը եւ Լլոյդ Ջորջը սխալուել են, որ անհրաժեշտ է շուտափոյթ մոռանալ սեւրեան «թիւրիմացութիւնը»:

Այս իրադրութեան մէջ, հասկանալի է, թէ ինչու էր սուլթանի կառավարութիւնը ձգձգում (շուրջ երեք ամիս) Դաշնագրի ստորագրումը՝ վարելով մասնակի «բարեփոխումների» առաջարկների քաղաքականութիւն եւ տեղի տուեց միայն դաշնակիցների գերագոյն խորհրդի նախագահ Միլերանի (յուլիսի կէսեր) վերջնագրին. «Դաշնագիրը իր ամբողջութեան մէջ պէտք է ընդունէք կամ մերժէք» (Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 84): Խուսանաւելու տեղ այլեւս չկար եւ սուլթանի խորհուրդը Կ. Պոլսում 1920 թուականի յուլիսի 22-ին ամբողջ կազմով, բացառութեամբ մէկի, քուէարկեց յօգուտ խաղաղ դաշնագրի ստորագրման: 1920 թուականի օգոստոսի 10-ին Օսմանեան կառավարութիւնը պաշտօնապէս ստորագրեց Սեւրի դաշ-

նագիրը, «դրանով իսկ ճանաչելով իր պատասխանատուութիւնը հայասպանութեան (արմէնոցիդ) համար» (Барсегов Ю., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе.- "Тесакет", 1995, N 31, էջ 12), ընդունելով Սեւրեան Հայաստանի օրինականութիւնը: «Այդ ատեն ընդհանուր կարծիքն այն էր,- փոխանցում է Փարիզում տիրող մթնոլորտը Վ. Փափազեանը,- որ Թուրքիա դատապարտուած է ոչնչացման: Գործադրութեան պիտի դրուէր 1916-ի Թուրքիոյ բաժանման ծրագիրը...» (Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 84):

Սակայն, այդպէս թւում էր միայն...

Պատերազմում պարտուած Թուրքիայում եւ նրա շուրջ թափ էին վերցնում ռազմավարական նոր զարգացումներ: Օսմանեան կայսրութեան ռազմաքաղաքական վերնախաւը յանձին բանակի բարձրագոյն հրամկազմի եւ Իթթիհատի առաջնորդների, Մուստաֆա Քեմալի ղեկավարութեամբ, վերակազմելով բանակը, «զինուած գերմանական, ֆրանսիական, իտալական զէնքերով եւ գանձը՝ ապահոված Իթթիհատի միլիառներով, ջարդուած հայերու թողած հարստութեամբ եւ Լենինէն ստացած ոսկիներով...» (Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 60), օգտագործելով օտարերկրեայ զինուորական խորհրդականների[6] տաղանդը, գործի անցաւ: Սվազի համաժողովում,- հաղորդում է Զարեւանդը,- թուրք վարիչներն ու Ադրբեջանի ներկայացուցիչները կը յանգին այն եզրակացութեան, որ Անդրկովկասում իրենց նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է, «որոշ ժամանակի համար, իրենց հետ ունենալ վրացիները եւ արգիլել ամէն մերձեցում անոնց եւ հայերու միջեւ» Որպէս հետեւանք, թուրք-վրացական չէզոքութեան դաշինքով (1920 թ. ամռանը, Թիֆլիս) «Վրաստան յանձն կ'առնէր թուրք-հայկական պատերազմի մը պարագային չէզոքութիւն պահել, փոխարէն ստանալով Բորչալուն, Ախալքալաքն ու Արդահանը» (Զարեւանդ, «Միացեալ, Անկախ Թուրանիա», էջ 130): Հայաստանից պատառներ պոկելու գայթակղութիւնն, ըստ Կարո Սասունիի, վրացիների մօտ այնքան մեծ էր, որ 1920 թուականի հոկտեմբերի 16-19-ին Թիֆլիսում ՀՀ զինուորական նախարար Ռ. Տէր-Մինասեանի յայտարարութիւն-սպառնալիքը՝ «Հայաստանն իր տկարութեան պատճառով պիտի պարտուի, բայց ան իր հետ անդունդը պիտի տանի Վրաստանը», Վրաստանի կարծր չէզոքութիւնը չկարողացաւ փոխել (Տե՛ս «Հայրենիք», 1926, թիւ 6, էջ 89):

Սեւրի համակարգի դէմ մահացու պայքարում, բոլշեւիկներից բացի, քեմալականները ունէին նաեւ աւանդական դարձող դաշնակցին՝ «տեւտոնական ասպետին»: Այսպիսով առաջանում է հակասեւրեան մի «եռեակ զինակցութիւն», հակահայաստանեան մի «սրբազան դաշինք», որի թունաւոր սլաքներն ուղղուած էին առաջին հերթին Հայաստանի եւ Օսմանեան սպանդին զոհ գնացած հայ ժողովրդի դէմ: Եռեակից երկուսը Մեծ ոճիրի մտայղացողն ու ոգեշնչողն էին, երրորդը՝ իր արշաւանքներով Հայաստանը ամայացրած եւ հայ ժողովրդի քրիստոնէական զգացմունքներն ու իդէալներն անվերջ շահագործած երկրներից մէկը:

Սեւրի համակարգի գործադրման մէջ Անգորան (Քեմալը) տեսնում էր Թուրքիայի կործանումը: Անատոլիայից (բուն Թուրքիայից) անջատւում էր Հայաստանը, այդ ուղու վրայ էր կանգնում «ինքնավար» Քրդստանը: Քեմալականներն իրենց «Ազգային ուխտով» Թուրքիայի հարաւային սահմանն էին դիտում Մոսուլից Ալեքսանդրեթ գծով հիւսիս ընկած տարածքները («Սահմանորոշ գիծ մը պիտի գծուի Մոսուլից ուղիղ դէպի Ալեքսանդրեթ. այս գիծէն հիւսիս բոլոր հողերը Օսմանեան կայսրութեան կպատկանին»՝ Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 333): Մոսուլը թողնում էր թուրքական յաւակնութիւններից դուրս, առաջին, անգլո-ֆրանս հակասութիւնների պահպանման, թերեւս սրելու ակնկալիքներով, երկրորդ՝ Անգլիայի դէմ մինչեւ վերջ չգնալու եւ նրա հետ իրարհասկացողութեան գալու նպատակով՝ «Վիլսոնեան Հայաստանի» կայացումը ականահարելու հաշուին (Արեւմտեան Հայաստանը Մոսուլի նաւթի դիմաց):

Մոսկուան (կարմիր) դաշնակիցների հովանաւորութեամբ Միացեալ եւ Անկախ Հայաստանի ստեղծման մէջ տեսնում էր «Երկրորդ Բուլղարիան», որը փակում էր իր ճանապարհը դէպի Պարսից ծոց եւ Միջերկրականի ափերը, իրենից պոկելով Անդրկովկասը: Թոյնբին ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ Անտանտայի կողմից Կ. Պոլսի եւ նեղուցների գրաւումը Թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ ստեղծել էր շահերի այնպիսի նոյնութիւն, որի դիմաց Հայկական հարցը անցնում էր միայն վերջին գիծ (Toynbee A. Relations Between Soviet Russia, the Transcaucasion Repablics and Turkey from 1918 to 1923.- «Survey of International Affairs», London, 1925.- Տե՛ս Փաստրմաճեան Հ., Հայոց պատմութիւն, էջ 535): Եւ, առհասարակ, Թուրքիայի հանդէպ ե՛ւ սպիտակ, ե՛ւ կարմիր Ռուսաստանի քաղաքականութիւնը եղել է, փաստերը յամառօրէն դա են ապացուցում, խիստ «իրապաշտական». ձգտել բոլոր պարագաներում պահպանել Թուրքիայի կենսունակութիւնն ու տարածքային թեկուզեւ «սահ-

մանափակուած» ամբողջականութիւնը: Տեղին է յիշատակելը Արեւմտեան Հայաստանը իբրեւ պատերազմական աւար ձեռք բերած յաղթական (սպիտակ) Ռուսաստանի ԱԳ նախարար Ն. Ն. Պոկրովսկու Լոնդոնում դեսպան Ա. Կ. Բենկենդորֆին 1916 թ. դեկտեմբերի 8/21-ին ուղղուած նամակ-բացատրականի հետեւեալ տողերը. «Պոլսի եւ նեղուցների խնդիրը մեր օգտին վճռելով ու հայկական մարզերի մեր գրաւումով՝ Փոքր Ասիայի կազմակերպման հարցը մեզ համար առաջնակարգ նշանակութիւն է ստանում... այդ շրջանում մեր շահերին չի համապատասխանում մեր ապագայ փոքրասիական սահմաններին խոշոր, թեկուզեւ այժմ մեզ բարեկամ, եւրոպական տէրութիւնների հաստատումը: *Մեզ համար,*- շեշտում-բացատրում է ցարական նախարարը,- *էապէս անհրաժեշտ է, որ Փոքր Ասիայում պահպանուի ըստ կարելւոյն մեծ սահմաններով անկախ թուրքական մի պետութիւն, որ քաղաքականապէս եւ տնտեսապէս հակուած լինի մեր կողմը* (ընդգծումը իմն է.- Լ. Շ.)» (Раздел Азиатской Турции..., էջ 281): Այսպիսի դիրքորոշմանը համահունչ է յայտնի բոլշեւիկ Վորովսկու յայտարարութիւնը քեմալական «Վագըֆ» թերթում. «Մեր կառավարութիւնը դէմ է եւ համարում է անընդունելի Դաշնակիցների կողմից պարտադրուող Սեւրի դաշնագիրը»:

Բեռլինը, որ նոր էր ստորագրել Վերսալի դաշնագիրը, թաքնուած երկու «սրտակից բարեկամների» թիկունքում, երազում էր փշրել «վերսալեան կապանքները», ուստի եւ Սեւրի թաղման մէջ տեսնում էր Վերսալի վերաքննութեան նախադէպը (ինչպէս որ յետագայում Արմենոցիդի մէջ տեսնելու էր Հոլոքոստի նախադէպը): «Ռուս-գերմանական գործակալներ,- նկատում է խնդրին քաջատեղեակ Կոմսը,- միասնաբար յաջողեցան վիժեցնել Սեւրի դաշնագիրը՝ կազմալուծելով դաշնակիցներու միութիւնը այդ խնդրին շուրջ եւ միջոցի մը համար, մինչեւ վերջնական ոչնչացում, անվտանգ դարձնել այն» (Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 103):

Հակահայաստանեան այս «սրբազան դաշինքն» ունէր եւ իր «հինգերորդ շարասիւնը», կարիերիստների ու բախտախնդիրների հայկական բանդան յանձին հայ կոմունիստների, որոնք յանուն կարմիր սոցիալ-իմպերիալիզմի, 1920 թուականի մայիսին փորձեցին խարխլել հայկական բանակի մարտունակութիւնը հնարաւոր թուրքական յարձակման նախօրեակին (նոյն տարուայ ապրիլին թուրքական Արեւելեան բանակի հրամանատար Կարաբեքիրը Ազգային ժողովի կառավարութեանը հեռագրում էր. «...շուտով պիտի աւետեմ, որ Հայաստանը սրբուած է աշխարհի քարտէզից»՝ Սարգսեան Ե. Ղ., Թուրքիան եւ նրա նուաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում, էջ 496), իսկ սեպտեմբեր-հոկտեմբերին, բացառուած չէ, բանակի հրամկազմի բոլշեւիկացած մասի հետ կազմակերպեցին ու իրականացրին Կարսի դաւադրութիւնը՝ Հայաստանը կանգնեցնելով վերջնական կործանման դիմաց (Ալ. Խատիսեանը հաղորդում է թուրքերը Կարսը գրաւեցին «գրեթէ առանց գնդակ պարպելու», մինչդեռ մէկ օր առաջ Կարսի հրամանատար, գնդապետ Փիրումեանը հեռագրել էր կառավարութեանը՝ «բերդապահ զօրքը եւ բանակը կը պաշտպանեն բերդը մինչեւ վերջին հնարաւորութիւն եւ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԱՄՈՒՐ է»: Հայ «զինուորներին, գիւղացիներին եւ գաղթականներին» այդ օրերին ուղղուած բոլշեւիկեան կոչի մէջ ասւում էր. «...եկողները ոչ թէ թալանի աւազակներ են, այլ հայ գիւղացիների, զինուորի եւ բանուորների ընկերներ...»): Կարսի աղէտից յետոյ դաշնակիցները, գլխաւորապէս անգլիացիները, վերջնականապէս լքեցին Հայաստանը: Հայաստանը ստիպուած եղաւ խորհրդայնանալ եւ Սեւրի բախտորոշ օրերին ընդունել ռուսական կողմնորոշում, հարելով ռուս-թուրքական բլոկին:

Այսպիսով, XIX դարի 90-ական թուականներից ազգային-ազատագրութեան համար պայքարի ճամփայ ելած Հայաստանը արձանագրելով հերոսութեան ու խոյանքի հիասքանչ օրինակներ, անցնելով արեան ու մահուան հովիտներով, զոհելով իր թանկագին ժողովրդի եւ հայրենիքի մեծագոյն մասը, տասնամեակներով քայլելով անդունդի եզրով, այդուհանդերձ, Սարդարապատում նուաճեց ապրելու իր իրաւունքը, ապացուցեց ՀԱՅՐԵՆԻՔ եւ ՊԵՏՈՒԹԻՒՆ կերտելու իր կարողութիւնը (Վեհիբ փաշա՝ «...հայերը ցոյց տուեցին, որ նրանք կարող են աշխարհի լաւագոյն զինուորները լինել»), կարեւոր դեր ունեցաւ թուրքական բանակի պարտութեան գործում: Սարդարապատում գլխովին ջախջախեց թուրքական բանակի ամենամարտունակ «Գելիբոլու» դիվիզիան, որը փառաբանուել էր Դարդանելում դաշնակից զօրքերի դէմ մղած ռազմական գործողութիւններում, իսկ Արարայի ճակատամարտում (19.IX.1918) գլխաւոր դեր խաղաց Քեմալի սիրած «Յըլդըրըմ» բանակի (ընդհ. հրամանատար՝ գեներալ Լիման ֆոն Սանդերս) ջախջախման (գեներալ Սլենբի՝ «Պաղեստինի ճակատին վրայ, թուրքերուն վրայ իր տարած յաղթանակին մէջ, հայ կամաւոր գունդերն էին, որ առաջնորդող դեր կատարեցին») եւ, վերջապէս, բացառիկ ծառայութիւն ունեցաւ, մեղմ ասած, իրեն լքած «քաղաքակիրթ» ազգերի, յատկապէս Ֆրանսիայի յաղթանա-

կի գործում: «Գլխաւոր ազդակը, որ գերման արեւմտեան բանակի խորտակումը յառաջ բերաւ,- դառնութեամբ արձանագրում է գերմանական բանակի գլխաւոր շտաբի պետ գեներալ ֆոն Լիւդենդորֆը,- վառելանիւթի պակասն էր... հայերն էին, որ թուրքերուն արգելք եղան (կռուեցին 1917 թուականի դեկտեմբերից մինչեւ 1918 թուականի սեպտեմբեր.- Լ. Շ.) Բագուն գրաւելու իր ժամանակին»: Եւ, ի վերջոյ, խճճուած միջազգային դաւադրութիւնների լաբիրինթոսում ուժասպառ Հայաստանը եւ նրա ազատագրական պայքարը սանձուեցին բացառապէս իր դէմ ուղղուած ռուս-թուրքական «բարեկամութեան եւ եղբայրութեան» երկաթեայ օղակով:

Սեւրի դաշնագրի գործադրման փորձ էր, անշուշտ, յունական յարձակումը: Յոյները 1921 թուականին գտնուում էին Անգորայից ընդամէնը 40 կմ հեռաւորութեան վրայ: Սակայն, միայն անգլիացիների օժանդակութեանն ապաւինած յոյները, որոնց դաւում էին իրենց իսկ գլխաւոր դաշնակիցները՝ իտալացիներն ու ֆրանսիացիները, ռազմական գործողութիւններում պարտուեցին եւ 1922 թուականի հոկտեմբերին ստիպուած էին դատարկել Փոքր Ասիան: Այսպէս տապալուեց Մերձաւոր Արեւելքի արդարացի վերակազմաւորման համաշխարհայինպատմական նախադէպը չունեցող առաջին փորձը: Սեւրի գործընթացը մօտիկից դիտած Յովհաննէս Պօղոսեանը, ի մի բերելով այնտեղ ծաւալուած զարգացումները, արձանագրում է. «Վենիզելոս (յունական պատուիրակութեան ղեկավարը.- Լ. Շ.) եղած էր Սեւրի դաշնագրին ամէնէն զօրաւոր պաշտպանը: Անոր մեկնումէն յետոյ կը դիւրանար այս դաշնագիրը վերաքննելու գործը՝ Ֆրանսայի եւ Իտալիոյ համաձայնութեամբ եւ հակառակ Լլոյդ Ջորջի ջանքերուն, որ ամուր կը մնար ընդդէմ Հնդկաստանի իսլամներու ճնշումին ի նպաստ Թուրքիոյ» (Պօղոսեան Յ., Հայկական Դատը եւ հայ ազգային պատուիրակութիւնը.- Յուշամատեան Մեծ եղեռնի, Բէյրութ, 1965, էջ 993):

Լոզանը (24 յուլիսի 1923 թ.) եկաւ հաստատագրելու նոր իրողութիւնները, Թուրքիայի շուրջ առաջացած նոր հաւասարակշռութիւնը: Առաջին համաշխարհային պատերազմի արդիւնքով Մերձաւոր Արեւելքը վերածեւուեց, ըստ էութեան, այն սահմաններում, էթնիկական այն կազմով, որը ուրուագծուել էր Սայքս-Պիկօ համաձայնութեամբ, Օսմանեան կայսրութիւնը ենթարկուեց սոսկ մասնակի անդամահատման: 1920 թուականին Անդրկովկաս վերադարձած Ռուսաստանը, որ վերադարձաւ, ի միջի այլոց, Քեմալի սուինների օգնութեամբ (Ադրբեջանի մի գիշերում կարմրելը, Հայաստանի մեծ մասի թուրքական օկուպացիան), կասեցրեց Թուրքիայի յետագայ անդամահատումը... Այժմ էլ նոր Թուրքիան Արեւմուտքի ռազմավարական նախատեսումներում նորից զբաղեցրեց իր պատուաւոր տեղը... որպէս պահակի՝ նեղուցներում եւ որպէս պատնէշի՝ Ռուսաստանի դէպի Մերձաւոր Արեւելք ծաւալման առաջ... Եւ դա առնուազն մինչեւ 1991 թ....

Մինչ այդ Ազգային մեծ ժողովում, 1927 թուականի հոկտեմբերին արտասանած ճառում, Քեմալը անդրադառնալով Սեւրի դաշնագրով Թուրքիայի «կորցնելիք» տարածքներին եւ «Հայկական օջախի» գաղափարին, ասում է. Լոզանում «այս հարցը յետաձգուեց» (Տե՛ս A speech delivered by Ghari Mustapha Kemal, President of the Turkish Republic, October, 1927, Leipzig 1929, էջ 609):

---

1 Այն սկսուեց Սարաեւոյում արձակուած կրակոցով, աւարտուեց տխրահռչակ Լոզանի դաշնագրով (1923 թ., յուլիսի 24):

2 Տե՛ս The Sykes-Picot agreement, (Secret) Letter from Sir Edward Gray to M. Cambon, Foreign office, May 16, 1916.- Helmreick Paul C. From Paris to Sevres. Columbus, 1974, p. 343-345.

3 Հայաստանին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ նիստերին հրաւիրուում էին ՀՅ պատուիրակութեան նախագահ Աւ. Ահարոնեանը եւ Հայոց Ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուբարը:

4 Լորդ Քերզոնը ԱԳ անունից դեկտեմբերի 16-ին խնդրեց ԱՄՆ-ի պետքարտուղարութիւնից թերթում չհրապարակել նախագահ Վիլսոնի վճիռը: «Ատիկա անհրաժեշտ էր,- եզրակացնում է Հայկազն Գ. Ղազարեանը,- ի գին 2000000 հայերու արիւնի, սակարկելու համար թուրքին հետ եւ փոխարէնը ստանալու համար Մուսուլի իւղերը» (Ղազարեան Հ. Գ., Ուիլսընեան Հայաստանը, «Հայրենիք», տարեգիրք, 1945, էջ 121): Այդուհանդերձ, ԱՄՆ-ի նախագահի իրաւարարական վճիռը հրապարակուեց 1921 թուականի յունուարի 22-ին: Համաշխարհային հանրութիւնից այն թաքցնել չյաջողուեց: «Սեւրեան» Հայաստանի սահմանագծումը պէտք է սկսուէր հայ-թուրքական յանձնախմբի կողմից, ԱՄՆ-ի նախագահի վճիռը ընդունելուց երեք ամիս անց:

5 Լենինի կառավարութիւնը 1917 թուականի նոյեմբերի վերջին հրապարակել է գաղտնի համաձայնագրի տեքստը եւ չեղեալ յայտարարել այն:

6 Յունական բանակի ջախջախման թուրքական ծրագրի ռազմավարութեան մտայղացման ու ծրագրման մեջ բացառիկ դեր խաղաց 1921 թուականի նոյեմբերից մինչեւ 1922 թուականի յունուարը Անգորայում «առեղծուածային» առաքելութեամբ գտնուած Մ. Վ. Ֆրունզէն և նրա առաքելութիւնը (Տե՛ս Корсун Н. Г., Греко-турецкая война 1919-1922. М , 1940):

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ, ԹԷ՞ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՂԵՐ ՆՈՐ ԵՐԱՆԳՄԱՄԲ

Արմինէ Ամիրեան

Այն, ինչ վերջին շրջանում տեղի ունեցաւ պաշտօնական Վաշինգտոնում, առաջացրեց մի շարք հարցեր, որոնցից գլխաւորը հետեւեալն է. արդեօք Վաշինգտոնում ի դէմս ազդեցիկ քաղաքական պարագլուխների փոխւում են քաղաքական դիրքորոշումնե՞րը, թէ՞ խաղի կանոնները: Ո՞ւմ համար է միջավայրը նպաստաւոր եւ ո՞ւմ համար մտահոգիչ: Ո՞վ ում դէմ է խաղում: Սրանք հարցեր են, որ որպէս կանոն սպառիչ պատասխաններ չեն ստանում եւ մեկնաբանւում են զուտ դիւանագիտական տեսանկիւնից՝ «Խօսել ամէն ինչի մասին՝ չասելով կարեւորը»: Ցեղասպանութեան թեման եւ այս համատեքստում Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանի պաշտօնում առաջադրուած միակ թեկնածութեան յետ կանչումը ըստ էութեան կանխորոշեց խաղի միանգամայն նոր տրամաբանութիւն: Հայ-ամերիկեան յարաբերութիւններում դեսպանի նշանակման հարցը վերջին շրջանում առաջնային խնդիրների շարքն էր դասւում: Նախագահի կողմից առաջադրուած միակ թեկնածուն Ռիչարդ Հոգլանդն էր, որի թեկնածութեանը հայ համայնքը կտրականապէս դէմ էր: Դէմ էին նաեւ դեմոկրատները, քանի որ Հոգլանդը հրաժարուել էր 1915 թուականի հայերի զանգուածային կոտորածը ցեղասպանութիւն անուանել, ինչը յարուցել էր ամերիկահայերի վրդովմունքը: Ինչպէս յայտնի է, Սենատի Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի անդամների կէսից աւելին, ինչպէս նաեւ Ներկայացուցիչների պալատի աւելի քան վեց տասնեակ անդամներ մտահոգութիւն էին յայտնել Հոգլանդի առաջադրման եւ էւանսի յետկանչի առիթով: Ինքը Հոգլանդը մի քանի առիթով նշել է, թէ չի ժխտում 1915 թուականի ողբերգութեան փաստը, սակայն մտադիր չէ շեղուել պաշտօնական

Վաշինգտոնի որդեգրած դիրքորոշումից: Միջազգային մի շարք թերթերի վկայութեամբ՝ այս ընթացքում թուրք եւ ադրբեջանցի պաշտօնեաներն ուշի ուշով հետեւել են Հոգլանդի նշանակման շուրջ ընթացող զարգացումներին: Եւ փորձել են ամէն ինչ անել, որպէսզի տեղիք չտրուի հայերի դժգոհութիւններին: Ի դէպ, նրանց այս մարտավարութիւնը նկատելի է ոչ միայն ցեղասպանութեան, այլեւ ղարաբաղեան հիմնախնդրում: Այնուհանդերձ Հոգլանդի թեկնածութեան հրաժարականով թուրք եւ ադրբեջանցի պաշտօնեաները սկսել են աւելի մտահոգուել՝ «հայ ամերիկեան համայնքի ապտակը մեծ էր», Բուշը համաձայնեց հայկական լոբբիի ձնշումներին՝ միջազգային թերթերը այս վերնագրերն են ընտրում իրենց յօդուածների համար: Ամերիկահայ ազդեցիկ կառոյցներն էլ յոյս են յայտնում, որ այսուհետ Բուշի վարչակազմը առաւել զգուշաւոր կը լինի հայկական հարցերին առնչուող խնդիրներում, քանի որ հայերը իրենց շահերի պաշտպանութեան հարցում վճռական են, իսկ դեսպանի յաջորդ թեկնածուն էլ կը լինի կրկնակի զգուշաւոր իր պատասխաններում: Սենատոր Մենենդեզն իր վերջին հարզազրոյցում համոզմունք է յայտնել, որ նոր թեկնածուն կը բերի միանգամայն նոր տրամաբանութիւն ցեղասպանութեան խնդրի վերաբերեալ: Իսկ որպէս հարցի կատարեալ լուծում վերլուծաբանները Կոնգրես ներկայացուած ցեղասպանութեան բանաձեւի ընդունումն են համարում: Այս դէպքում դեսպանի յաջորդ թեկնածուն խնդիր չի ունենայ ժխտելու ցեղասպանութեան փաստը Սենատի լսումների ժամանակ, եւ որքան շուտ բանաձեւն ընդունուի, այնքան առաւել վաղ յայտնի կը դառնայ յաջորդ թեկնածուի անունը:


Ռիչարդ Հոգլանդ

Կ'ընդունուի՞ արդեօք բանաձեւը, թէ՞ ոչ

218 կոնգրեսական այս պահի դրութեամբ կողմ է բանաձեւի ընդունմանը: Սա մի ցուցանիշ է, որով վստահաբար կարելի է ասել, որ հայկական լոբբին Վաշինգտոնում իր ազդեցիկութեամբ չի զիջում եւ ոչ մի լոբբիստական կազմակերպութեան: Թուրքական Լեւինգստոնի յայտնի կազմակերպութիւնը տարեկան միլիարդաւոր դոլարներ է ծախսում քարոզչութեան համար, բայց արդիւնքները չեն անցնում սպառնալիքների սահմանագիծը, իսկ հայերը յաղթում են, որովհետեւ ճշմարտութիւնն իրենց կողմն է, ասել է թէ թուրքերը երկու մեծ խնդիր ունեն. առաջին ամենագլխաւորը այն է, որ ճշմարտութիւնը իրենց հետ չէ, իսկ երկրորդն այն է, որ ԱՄՆ-ում չկան բաւարար քանակութեան թուրքեր: Իսկ պատմութիւնը ջնջել եւ նորից գրել մինչ օրս չի յաջողուել եւ ոչ մէկին: Ներկայացուած օրինագիծը նախորդ գումարման Կոնգրեսում ներկայացուած նոյն՝ «Բանաձեւ 316»-ն է, որը գերակշռող ձայներով ընդունուել էր Ներկայացուցիչների պալատի Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովում: Սակայն լիագումար նիստում քուէարկութեանը խոչընդոտել էր նախկին խօսնակ Դենիս Հասթերթը: 106-րդ բանաձեւը կոչ է անում ԱՄՆ-ի նախագահին «ապահովել, որպէսզի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութիւնն արտացոլի պատշաճ ըմբռնում Հայոց ցեղասպանութեան հարցում, եւ ապրիլի 24-ին Նախագահն իր ամենամեայ ելոյթում 1915-ի դէպքերը որակի որպէս ցեղասպանութիւն: Դեմոկրատների յաղթանակից յետոյ ստեղծուել են բանաձեւի ընդունման լաւագոյն հնարաւորութիւնները»,- համոզուած են ամերիկահայ կազմակերպութիւնների ներկայացուցիչները: «ԱՄՆ-ը Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու պատմական, բարոյական խորը պատճառներ ունի, սակայն ունենք նաեւ ներկայից բխող պատճառներ»,- յայտարարել


Ադամ Շիֆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

Ջորջ Ռադանովիչ

է Ադամ Շիֆը: «ԱՄՆ-ը յատուկ պատասխանատուութիւն է կրում, որպէսզի անցեալի դասերը երբեք չմոռացուեն՝ անկախ քաղաքական անբարենպաստ պայմաններից ու դրա համար վճարուելիք գնից»,- ընդգծել է Ջորջ Ռադանովիչը: Ըստ կոնգրեսականների, աշխարհին ու Թուրքիային ուղերձ յղելու առումով այս բանաձեւը բացառիկ կարեւորութիւն ունի: Սոյն բանաձեւը հիմնուած է 30 տարբեր փաստերի վրայ, որտեղ ԱՄՆ-ի տարբեր ժամանակների տարբեր պաշտօնեաներ 1915 թուականի դէպքերը որակել են որպէս ցեղասպանութիւն, եւ այդ փաստերը այսօր առկայ են ԱՄՆ-ի արխիւներում: Որպէս խօսուն փաստ նշուած է նաեւ ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիան, որով 1915-ի դէպքերը լիովին մտնում են ցեղասպանութիւն հասկացութեան մէջ: 1975 թուականից ի վեր ցեղասպանութեան վերաբերեալ աւելի քան 10 բանաձեւ է ներկայացուել Սենատ, իսկ Կոնգրեսին՝ աւելի քան 20 բանաձեւ: Արդիւնքները տարբեր են եղել, մասամբ դրական, մասամբ էլ բացասական: Սակայն բոլոր բանաձեւերի բովանդակութիւնը ըստ էութեան նոյնն է եղել: Այս դէպքում, երբ դեմոկրատները մեծամասնութիւն են, Նախագահը պարզապէս չի կարող անտեսել կամ շրջանցել նրանց կողմից ընդունուած որոշումը: Սակայն միւս կողմից էլ չկան յստակ երաշխիքներ, որ բանաձեւը առաջիկայում կ'ընդունուի: Քանի որ ինչպէս պատմութեան դառը փորձն է ցոյց տուել, քուէարկութիւնից որպէսներ առաջ մէկ ազդեցիկ զանգը կարող է փոխել ամէն ինչ: Բայց եւ այնպէս ներկայում ամերիկահայ կազմակերպութիւնները աշխատում են թէ դեմոկրատների եւ թէ հանրապետականների հետ, քանի որ այս դէպքում հաւասարապէս անհրաժեշտ է երկու կողմերի աջակցութիւնն էլ: Նշենք, որ այսօր Հայկական խումբը Պալատում երկրորդ ամենամեծ ազգային խումբն է՝ 182 հոգանոց Հնդկական խմբից յետոյ:

Թուրքերի պայքարը ներկայում արտայայտւում է ոչ միայն պաշտօնական պատուիրակութիւնների այցելութիւններով, այլեւ արւում է հնարաւոր ամէն ինչ, որպէսզի թուրքական հարցերով զբաղուող յանձնախմբի անդամների թիւը աւելանայ: Թուրքերին սպասւում է յամառ պայքար, ասել է թէ ամէն ինչ միայն նոր է սկսւում: Վերջերս պարզ դարձաւ նաեւ, որ ԱՄՆ-ում գործող «Ընդդէմ վարկաբեկման միութիւն» հրէական կազմակերպութիւնը փոխել է իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան նկատմամբ եւ Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած իրադարձութիւնները ճանաչել է որպէս ցեղասպանութիւն: Յիշեալ կազմակերպութեան տնօրէնը խորհրդակցել է պատմաբանների եւ իր բարեկամ՝ Նոբելեան մրցանակի դափնեկիր, Հոլոքոսթը վերապրած Էլի Վիզելի հետ, եւ համոզուել, որ հայերի հետ պատահածը ցեղասպանութիւն է: Սակայն նա վստահեցրել է, որ չի պաշտպանելու Կոնգրես ներկայացուած Հայոց Ցեղասպանութեան մասին բանաձեւը: Ինչպէս նշում է «Ասոշիեյթեդ փրես» գործակալութիւնը, դիրքորոշման այս փոփոխութիւնից ընդամէնը օրեր առաջ կազմակերպութեան Նոր Անգլիայի տարածաշրջանի կառոյցի ղեկավար Էնդրու Թարսին պաշտօնանկ էր արուել Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու համար: Իսկ շուրջ մէկ շաբաթ առաջ ամերիկեան Մասաչուսեթս նահանգի Ուոթերթաուն քաղաքի խորհուրդը որոշում էր կայացրել խզել կապերը «Ընդդէմ վարկաբեկման միութեան» հետ՝ վերջինի կողմից Հայոց ցեղասպանութիւնը չճանաչելու պատճառով: Հարվարդի համալսարանի հայկական հետազօտութիւնների պրոֆեսոր Ջեյմս Ռասելը, սակայն, ընդգծել է, որ Հայոց ցեղասպանութեան ապացոյցները անչափ շատ են, իսկ «ցեղասպանութիւն» բառը 1940 թուականին

ստեղծել է մի իրաւաբան, ով փորձում էր հայերի հետ պատահածը նկարագրող հասկացութիւն սահմանել: Սա ենթադրում է, որ Վաշինգտոնում ինչ-որ չափով շփոթուած են ոչ միայն թուրքերը, այլեւ հրէաները: ԱՄՆ-ի հրէական լոբբիի առաջնորդներից մէկը արդէն դիմել է Թուրքիային, յայտարարելով, որ «եթէ Անկարան որեւէ քայլ չձեռնարկի, ապա Հայոց ցեղասպանութեան մասին օրինագիծը կ'ընդունուի ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից: Նրա խօսքերով, ո՛չ հրէական լոբբին, ո՛չ ԱՄՆ-ի նախագահը չեն կարողանայ խոչընդոտել այս օրինագծի ընդունմանը»:

Մի խումբ դիւանագէտներ քննադատել են Թուրքիայի քաղաքականութիւնը այն պնդումների առումով, որ «արդէն ոչինչ հնարաւոր չէ փոխել»: Հրէական լոբբիի որոշ ներկայացուցիչներ հաւատում են, որ դեռ ուշ չէ: Նրանք գտնում են, որ եթէ Թուրքիան դիւանագիտական յարաբերութիւններ հաստատի եւ բացի Հայաստանի հետ սահմանը, իրավիճակը կարող է լաւանալ: Նրանք արդէն տուեալ տարբերակն առաջարկել են Թուրքիայի ԱԳՆ-ին: Թուրքիայի արտաքին գործերի նախարարութեան յայտարարութիւնն այս դէպքում եւս չուշացաւ: Թուրքիայի ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչը, մեկնաբանելով իրադրութիւնը, յայտարարել է. «Չնայած ԱՄՆ-ում ստեղծուած հակաթուրքական մթնոլորտին, դեռ ուշ չէ որոշ դեմոկրատների եւ հանրապետականների մեր կողմը գրաւել»:

Այսուհանդերձ ԱՄՆ-ի Կոնգրեսում հայերի ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունման հաւանակութիւնը գնահատւում է մեծ: Վերջերս Հայաստանում նման կարծիք յայտնեց ՀՅԴ Հայ Դատի Մասաչուսեթսի գրասենեակի ղեկավար Շարիսթան Մելքոնեանը: «Եթէ 106-րդ բանաձեւը մտնի Կոնգրեսի օրակարգ, ապա այն կ'ընդունուի,- ասաց նա: - Բանաձեւի ընդունման համար անհրաժեշտ է 218 կոնգրեսականի քուէ, բանաձեւին աջակցութիւն է յայտնել աւելի շատ կոնգրեսական, քան անհրաժեշտ է, սակայն բարդ է կանխատեսել նրանց վարքը քուէարկութեան ընթացքում»: Նշենք, որ Հայոց ցեղասպանութիւնը մինչ օրս ճանաչել են ԱՄՆ-ի 38 նահանգներ: Պաշտօնական Վաշինգտոնում այս օրերին համարձակօրէն կարծիք է հնչում առ այն, որ Ցեղասպանութեան ճանաչումը Թուրքիայի կողմից եւս կենսական է, որովհետեւ իբրեւ զարգացման ճանապարհին գտնուող երկիր՝ Թուրքիան պէտք է հաշտուի իր անցեալի հետ:



Սոյն յօդուածում դիտարկւում է ներկայիս Հայաստանի բնակչութեան թուաքանակի, ծնելիութեան ու մահացութեան, տարիքային կառուցուածքի եւ արտագաղթի փոփոխութեան պատմական ընթացքը, ինչը հիմք կարող է ծառայել որոշ կանխատեսումների եւ գիտականօրէն հիմնաւորուած ժողովրդագրական քաղաքականութեան մշակման: Յօդուածում օգտագործուած գծապատկերները կազմուել են պաշտօնական վիճակագրական տուեալների հիման վրայ:

Երկրի տարածքը

Հայաստանը քարքարոտ, լեռնային ու խիստ կոնտինենտալ կլիմայով փոքր եւ էքնիկապէս համասեռ երկիր է, որի տարածքի (29,8 հազ. քառ. կմ) միայն 10-րդ մասն է գտնւում մինչեւ 1000 մ ծովի մակերեւոյթից ցածր բարձրութեան վրայ:

Հայաստանն աղքատ է արգաւանդ հողերով, էներգետիկ ու անտառային պաշարներով, բայց բաւականին հարուստ է գունաւոր մետաղներով, ոչ հանքային հանածոներով եւ հանքաջրերով: Նրա տարածքի 10%-ը զբաղեցնում են անտառներն ու թփուտները, 4,4%-ը՝ Սեւանայ լճի մակերեսը եւ մօտ 49%-ը՝ գիւղատնտեսական հողատեսքերը (1391.4 հազ.), որի միայն 40,1%-ը, իսկ հանրապետութեան ընդհանուր հողային մակերեսի 18,2%-ն է գտնւում ակտիւ գիւղատնտեսական շրջանառութեան մէջ:

Բոլշեւիկեան Ռուսաստանի եւ քեմալական Թուրքիայի միջեւ գործարքի հետեւանքով Հայաստանին բաժին ընկաւ Անդրկովկասի՝ ծովից կտրուած, լեռնային ու քարքարոտ 16%-ը, այն դէպքում, երբ 1913 թ. տարածաշրջանի բնակչութեան (5,9 մլն.) մօտ 25%-ը, այդ թւում քաղաքներում բնակուողների 40%-ը հայեր էին: Հայ ժողովուրդը 1914-1920 թթ. կորցրեց 2 մլն. մարդ եւ իր բնօջախի 9/10 մասը (Արեւմտեան Հայաստան, Արցախ, Նախիջեւան, Գարդման, Զաւախք եւ այլն):

Անարդարացի ու բռնի տերիտորիալ բաժանման ընթացքում գերազանցապէս շահեց Ադրբեջանը, որը մինչ այդ գոյութիւն չունէր որպէս պետական հասկացութիւն,

իսկ բուն ադրբեջանցիները անուանւում էին անդրկովկասեան թիւրքեր, որոնք տարբեր ցեղերի խառնուրդ էին եւ կազմում էին Ադրբեջանի ներկայիս տարածքի բնակչութեան թուաքանակի հազիւ կէս մասը (Անդրկովկասի մօտ 20%-ը), բայց նրանց բաժին ընկաւ տարածաշրջանի 46,5%-ը, չհաշուած Կասպից ծովը՝ նաւթի հսկայական պաշարներով (գծ. 1):



Գծ. 1 - Հարաւային Կովկասի տերիտորիայի բաշխումը (%-ով)

Բնակչութեան թուաքանակի փոփոխութիւնը

Մինչեւ ցարական Ռուսաստանին միանալը (1828 թ.) Հայաստանի ներկայիս տարածքը նօսր էր բնակեցուած, 1828 թ.՝ 94,4 հազ., 1831 թ.՝ 161,7 հազ., մինչդեռ 1897 թ. մարդահամարի տուեալներով՝ 798 հազ., 1913 թ.՝ աւելի քան 1 մլն., իսկ 1980-ական թուականների վերջերին՝ մօտ 3,5 մլն. մարդ: Չնայած հայ ժողովրդի հսկայական կորուստներին (1914-1920 թթ. եւ 1941-1945 թթ.) լեռնային այդ տարածքը դարձաւ աշխարհի խիտ բնակեցուած փոքրիկ մի մասնիկը (գծ. 2):



Գծ. 2 – Հայաստանի բնակչութեան խտութիւնը (մարդ/1 քառ. կմ)

Գծապատկեր 2-ը յստակ պատկերացում է տալիս, թէ պատմական տարբեր ժամանակաշրջաններում ինչպիսի բնոյթ է կրել Հայաստանի բնակչութեան աճը, որի բարձր տեմպերն ընդհատուել են առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմների եւ, որքան ցաւալի է, անկախութեան 16 տարիներին, այն տարբերութեամբ, որ երկրի պոտենցիալ բնակչութեան թուի մօտ 1/3-ը (1,5 մլն. մարդ) դարձել է Սփիւռքի բնակիչ:

Բնակչութեան բնական աճի ընթացքի խախտումը սկսւում է 1988 թ. կործանարար երկրաշարժից եւ եթէ այդ ընթացքը, նոյնիսկ նուազող տեմպերով, շարունակուէր, ապա ներկայումս Հայաստանի առկայ բնակչութիւնը կը լինէր ոչ թէ 3 մլն., այլ աւելի քան 4,5 մլն. մարդ, անցնելով 1 քառ. կմ վրայ բնակեցման խտութեամբ 150 մարդու սահմանագիծը:

Հետեւեալ գծապատկերը (3) ցոյց է տալիս, թէ ինչպէս է փոփոխուել Հայաստանի քաղաքային եւ գիւղական բնակչութեան թուաքանակի յարաբերակցութիւնը 1920-2006 թուականներին:



Գծ. 3 - Հայաստանի քաղաքային եւ գիւղական բնակչութեան թուաքանակի փոփոխութիւնը 1920-2006 թթ. (հազ. մարդ)

Խորհրդային Հայաստանի գոյատեւման 70 տարուայ ընթացքում (1920-1990 թթ.) նրա բնակչութեան ընդհանուր թիւն աւելացել է մօտ 4,9 անգամ, այդ թւում քաղաքայինը՝ 20, իսկ գիւղականը՝ 1,8 անգամ: Յատկապէս արագ տեմպերով է աճել մայրաքաղաք Երեւանի բնակչութեան թուաքանակը: Այստեղ 1926 թ. մարդահամարի տուեալներով, բնակւում էին 64,6 հազ., իսկ 1979 թ. մարդահամարով՝ 1020 հազ. մարդ: Հայաստանի բնակչութեան թուի աճը (1920-1990 թթ.) գերազանցել է

Խորհրդային Միության բնակչության աճի միջին ցուցանիշը 2,4 անգամ:

Հայաստանի ներկայիս բնակչության իրական թուաքանակի վերաբերեալ քիչ թե շատ ճիշտ պատկերացում է տալիս 2001 թ. մարդահամարը, ըստ որի 2001 թ. մշտական (գրանցուած) բնակչության թուաքանակը կազմել է 3213 հազ., որից 2066,1 հազ. (64,3%-ը) հանդիսանում են քաղաքային, իսկ 1146,9 հազարը (35,7%) բնակւում են գիւղական վայրերում, մինչդեռ առկայ բնակչության թուաքանակը կազմել է 3002,6 հազ. մարդ, այդ թում քաղաքայինը՝ 1945,5 հազ. (64,8%), իսկ գիւղականը՝ 1057,1 հազ. (35,2%): Արտագաղթն աւելի շատ տեղի է ունեցել քաղաքային, քան գիւղական բնակչության հաշուին: Սկսած 1970 թուականից գիւղական բնակչության թուաքանակը մնացել է գրեթէ նոյն մակարդակի (1-1,1 մլն. մարդ) վրայ:

Անկախության 16 տարիներին բնակչության տարածքային բաշխման մէջ տեղի չեն ունեցել էական փոփոխութիւններ. միգրացիոն տեղաշարժերը գերազանցապէս ընդունել են արտաքին ուղղութիւն, գրեթէ դադարել է գիւղական շրջանների հաշուին քաղաքային բնակչության աւելացման միտումը, քանի որ անցումային շրջանում կազմալուծուեց առաջին հերթին արդիւնաբերութիւնը: Հանրապետության բնակչության 51,5%-ը կենտրոնացուած է Արարատեան հարթավայրում (Երեւան, Արմաւիր, Արարատ), որի բաժինը երկրի ամբողջ տարածքի մէջ կազմում է 12%, ներառեալ Արարատի լեռնային մասը (գծ. 4):



Գծ. 4 - ՀՀ մշտական բնակչության թուաքանակն ըստ մարզերի 2007 թ. յունուարի 1-ի դրութեամբ (հազ. մարդ, %)

Բնակչության բնական շարժը

Ցարական Ռուսաստանի կազմում ներկայիս Հայաստանի տարածքի բնակչության գրեթէ 90%-ը կենտրոնացուած էր գիւղական բնակավայրերում: Ծննդի մակարդակը շատ բարձր էր, սակայն զուգակցւում էր բաւականին բարձր արտայայտուող մահացութեամբ: Բնակչության 1000 շնչի հաշուով բնական աճը տասնամեակներ շարունակ չէր անցնում 14-15 մարդուց: Բայց միջին տարեկան 1,5%-ով աճը բաւական էր, որ երկրի բնակչության թիւը 47 տարում կրկնապատկուէր: Քանի որ 1831-1913 թթ. խաղաղ տարիներ էին, իսկ Հայաստանի ներկայիս տարածքի բնակչության թիւն աւելացել է 6,2 անգամ, ապա կարելի է ենթադրել, որ այն գրեթէ հաւասարաչափ պայմանաւորուած է եղել բնական աճով եւ ներգաղթով:

Եթէ դիտարկենք 1920-2006 թուականները, ապա մենք ունենք արդէն առաւել հաւաստի վիճակագրական տեղեկատուութիւն ծնելիության ու մահացության, հետեւապէս նաեւ բնակչության բնական աճի վերաբերեալ (գծ. 5):



Գծ. 5 - Բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշներ (1000 բնակչի հաշուով)

Աշխարհում դարեր շարունակ պահպանուել է ծնելիության եւ բնակչության կենսամակարդակի հակադարձ կապը: Միաժամանակ, որքան բարձր է տուեալ երկրի քաղաքակենտրոնացման մակարդակը, այնքան յարաբերականօրէն ցածր է ծնելիության գործակիցը: Որո-

շակի դեր են խաղում նաեւ ազգային աւանդոյթները եւ կրօնական գործօնները: Իր հերթին մահացութիւնը մեծապէս պայմանաւորուած է ծնելիութեան մակարդակով եւ առողջապահութեան նուաճումներով: Գծապատկեր 5-ի տուեալները կասկածանք չեն թողնում, որ նախապատերազմեան տարիները, բոլոր զրկանքներով հանդերձ, հանդիսացել են հայ ժողովրդի վերածննդի շրջան: Հայաստանն ունեցել է ծննդի ու բնական աճի աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մէկը, որի շնորհիւ բնակչութեան թուաքանակը ընդամէնը 20 տարում (1921-1940 թթ.) աւելացել է 86%-ով, գրեթէ ամբողջովին բնական աճի հաշուին:

Յետպատերազմեան շրջանում ծնելիութեան, ինչպէս նաեւ բնակչութեան բնական աճի բարձր տեմպերը պահպանուել են ընդհուպ մինչեւ 60-ական թուականները, այնուհետեւ ծնելիութեան գործակիցը գրեթէ երկու անգամ իջնում է (զգացնել են տուել պատերազմի հետեւանքները): Միաժամանակ նուազել է մահացութեան գործակիցը՝ լինելով ամենացածրներից մէկն ամբողջ աշխարհում: Հայաստանի բնակչութեան թուաքանակը 1946-1987 թթ. աւելացել է մօտ 2,9 անգամ (1945 թ.՝ 1186,9 հազ., 1987 թ.՝ 3411,9 հազ. մարդ), որը պայմանաւորուած էր ինչպէս բնական, այնպէս էլ մեխանիկական աճով՝ մօտաւորապէս հաւասար դեր խաղալով 42 տարում հանրապետութեան բնակչութեան եռապատկման մէջ:

Հայրենադարձութեան հետ միասին այդ շրջանում վճռորոշ դեր է խաղացել յատկապէս հարեւան հանրապետութիւններից հայութեան զանգուածային արտագաղթը: Միայն 1959 եւ 1979 թուականների մարդահամարների միջեւ ընկած ժամանակաշրջանում, մեր հաշուարկներով, Ադրբեջանից եւ Վրաստանից շուրջ 400 հազ. հայեր տեղափոխուել են Հայաստան: Եթէ 1926 թ. մարդահամարով Խորհրդային Միութեան հայութեան միայն 47,7 տոկոսն էր ապրում Հայաստանում, ապա 1979 թ. մարդահամարով՝ արդէն 65,5%-ը:

Հայաստանի անկախութեան տարիներին տնտեսական խոր ճգնաժամը, բնակչութեան կենսամակարդակի կտրուկ անկումը, զանգուածային արտագաղթը հիմնովին փոխեցին բնակչութեան վերարտադրողական (ռեպրոդուկտիւ) վարքագիծը: Կտրուկ իջան ինչպէս ամուսնութիւնների, այնպէս էլ ծնելիութեան ցուցանիշները (գծ. 6, 7):



Գծ. 6 - Ամուսնութիւնները եւ ամուսնալուծութիւնները Հայաստանում (1000 բնակչի հաշուով)



Գծ. 7 - ՀՀ բնակչութեան ծնելիութեան, մահացութեան, բնական աճի պատկերը 1990-2006 թթ. (հազ. մարդ)

Այդ գծապատկերներից պարզ երեւում է, որ ՀՀ բնակչութեան ծնելիութեան եւ բնական աճի կտրուկ անկումը կանգ է առել 2001-2002 թթ., եւ դրական որոշ միտում է նկատուել: Դա գերազանցապէս պայմանաւորուած է այն հանգամանքով, որ ամուսնական հասակի մէջ է յայտնուել 80-ական թուականներին ծնուած սերունդը, երբ պահպանւում էր ծնելիութեան համեմատաբար բարձր մակարդակը: Այնուամենայնիւ, ծնելիութեան գումարային գործակիցը պտղաբերութեան տարիքի (15-49

տարեկան) 1000 կնոջ հաշուով մնում է խիստ ցածր (2005 թ.՝ 1366, 1990 թ.՝ 2620-ի դիմաց), այն դէպքում, երբ բնակչութեան պարզ վերարտադրութեան համար պահանջւում է 2150, այսինքն պտղաբերութեան հասակում կինը պէտք է ունենայ առնուազն 2 երեխայ: Որքան էլ դա անհաւատալի թուայ, նոյն վիճակագրութիւնը փաստում է, որ պատերազմական տարիներին Հայաստանում 1000 բնակչի հաշուով աւելի շատ երեխայ է ծնուել (1942 թ.՝ 24.9, 1943 թ.՝ 13.6, 1944 թ.՝ 13, 1945 թ.՝ 17.8), քան ներկայումս (2001 թ.՝ 10, 2003 թ.՝ 11.2, 2006 թ.՝ 11.7):

Անկախութեան տարիներին ծնելիութեան կըտրուկ անկումը արմատապէս փոխել է նաեւ բնակչութեան տարիքային կառուցուածքը (գծ. 8, 9):



Գծ. 8 - ՀՀ բնակչութեան տարիքային կառուցուածքը (%-ով՝ ամբողջի նկատմամբ, յունուարի 1-ի դրութեամբ)



Գծ. 9 - ՀՀ մշտական բնակչութիւնն ըստ հիմնական տարիքային խմբերի

Դիտարկելով 8, 9 գծապատկերների տուեալները, դժուար չէ նկատել, որ ազգին սպառնում է գենետիկ ֆոնդի կորուստ եւ ծերացում: Վերջին 15 տարիներին բնակչութեան ընդհանուր թուակազմում մինչեւ 14 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կրճատուել է 1,5 անգամ եւ յաջորդ 15 տարիներին, եթէ անգամ պահպանուի ծնելիութեան ներկայիս մակարդակը եւ բնակչութեան նոյն թուաքանակը (3,2 մլն. մարդ), ապա այդ նոյն հասակում սերնդի տեսակարար կշիռը կ'իջնի եւս 1,5 անգամ՝ կազմելով բնակչութեան 15-16%-ը: Միաժամանակ աշխատունակ տարիքից բարձր տղամարդկանց ու կանանց բաժինը կը բարձրանայ՝ հասնելով 20-22%-ի:

Արտաքին միգրացիա

Հայաստանի բնակչութեան արտագաղթի վերաբերեալ վիճակագրութիւնը չունի ստոյգ տուեալներ, քանի որ մեկնողների մեծ մասը, որպէս կանոն, դուրս չի դըրուում գրանցումից: Ըստ 1979 թ. առաւել արժանահաւատ մարդահամարի հիմքով վարուող ընթացիկ հաշուառման, հանրապետութեան բնակչութեան թուաքանակը 2001 թ. կազմել է 3,8 մլն. մարդ, մինչդեռ 2001 թ. մարդահամարի արդիւնքում պարզուեց, որ փաստացի բնակչութիւնը 800 հազարով պակաս է: «Ժամանակաւոր» բացակայողների թիւը կազմում էր 258 հազար մարդ:

ՀՀ քաղաքացիական աւիացիայի գլխաւոր վարչութեան տուեալների հիման վրայ հանրապետութիւնից մեկնողների եւ ժամանողների բացասական տարբերութիւնը 1992-ից 2005 թթ. ունեցել է հետեւեալ պատկերը (գծ. 10):



Գծ.10 - Միգրացիոն բացասական աճ (հազ. մարդ)

Այսպիսով, անկախության 14 տարիների (1992-2005 թթ.) ընթացքում օդային տրանսպորտով հանրապետությունից մեկնողների թուաքանակը գերազանցել է ժամանողներին 712 հազ. մարդով, որի մոտ 70%-ը բաժին է ընկնում 1992-1994 թթ.: Այսինքն՝ այդ 3 տարում արտագաղթի միջին տարեկան թիւը (մոտ 160 հազ. մարդ) 8,3 անգամ գերազանցել է յետագայ 11 տարիների միջին տարեկան արտագաղթի թիւը:

Այդ տուեալներն արտացոլում են միգրացիայի ընդհանուր միտումները: Այստեղ հաշուի չի առնուած տրանսպորտի այլ միջոցներով մեկնողների թիւը: Մինչեւ 2000 թ. չկար հաշուարկ այն մասին, թէ տրանսպորտի այլ միջոցներով որքան մարդ է մեկնել արտասահման (մասնաւորապէս Ռուսաստան), բայց չի վերադարձել: Միայն 2000 թ. երկաթուղիով եւ աւտոմեքենաներով մեկնողների եւ ժամանողների բացասական տարբերութիւնը կազմել է 26,9 հազ. մարդ, աւելի շատ, քան օդանաւով արտագաղթողների թիւը (25,7 հազ.): Այստեղից կարելի է անել հետեւութիւն, որ 90-ական թուականներին 1,1-1,2 մլն. մարդ (այդ թւում նաեւ Ադրբեջանից եկած 360 հազ. փախստականների մեծ մասը) արտագաղթել են:

Վերջին տարիներին տնտեսական աճի բարձր տեմպերը, բնակչութեան կենսամակարդակի կրկնապատիկ բարձրացումը, քաղաքական ու սոցիալական կայունութիւնը նպաստել են արտաքին միգրացիայի տեմպերի մեղմացմանը (գծ. 11):



Գծ. 11 - Արտաքին միգրացիա (հազ. մարդ)

Գծ. 11-ի տուեալները ստացուել են անձնագրային բաժինների ներկայացրած հաշուետուութիւնների հիման վրայ, ըստ որի 2001-2005 թթ. հանրապետութիւնից մշտապէս հեռացել են 50,8 հազ. եւ վերադարձել 8,2 հազ. մարդ: Արդիւնքում՝ նոյն թուականներին ՀՀ բնակչութեան բնական յաւելաճը (47,5 հազ.) եւ մշտապէս ներգաղթածները (8,2 հազ.) գերազանցել են արտագաղթածների (50,8 հազ.) թիւը 4,9 հազարով: Այլ կերպ՝ հանրապետութեան մշտական բնակչութեան թիւը (3,2 մլն.) կայունացել է եւ, կարծես, ժողովրդագրական աղէտի սպառնալիք այլեւս չկայ:

Արտագաղթի իրական մասշտաբների վերաբերեալ յարաբերականօրէն արժանահաւատ տեղեկութիւն է տալիս տրանսպորտային բոլոր միջոցներով (օդային, երկաթուղային, աւտոմոբիլային) մեկնողների եւ ժամանողների վերաբերեալ սահմանային կէտերում կատարուած հաշուարկը (գծ. 12):



Գծ. 12 - Արտաքին ուղեւորաշրջանառութեան համախառն ծաւալները (հազ. մարդ)

Տրանսպորտի բոլոր միջոցներով մեկնողների թիւը 2001-2006 թթ. կազմել է 4.323,6 հազ., ժամանողներինը՝ 4.286,6 հազ. մարդ, որոնց տարբերութիւնը (արտագաղթը) 6 տարում կազմել է 37 հազ. մարդ: Ամբողջութեամբ վերցրած, տարբերութիւնը մեծ չէ, բայց առանձին

տարիների կտրուածքով, գծ. 11-ի եւ 12-ի տուեալների միջեւ առկայ է ակնյայտ հակասութիւն:

Մենք կանգ չենք առնում արտագաղթի հանրայայտ պատճառների, սեռա-տարիքային կազմի եւ ուղղութիւնների վրայ: Նշենք միայն, որ ներկայումս արտագաղթի հիմնական պատճառ է դառնում ընտանիքների միաւորման ձգտումը, բայց որոշակի դեր են խաղում նաեւ աշխատանքի բացակայութիւնը եւ ցածր վարձատրութիւնը: Վերջին 5 տարում (2001-2005 թթ.) անձնագրային բաժիններից դուրս գրուած եւ մշտապէս հեռացած 50,8 հազ. մարդկանց 88,3%-ը (42 հազ.) մեկնել են ԱՊՀ երկրներ, գերազանցապէս Ռուսաստան, իսկ 11,3%-ը (8,8 հազ.)՝ այլ երկրներ:

Ուշագրաւ է նաեւ այն հանգամանքը, որ արտագաղթող տղամարդկանց տարիքային կառուցուածքը (0-19, 20-49, 50 եւ բարձր) գրեթէ նոյն յարաբերակցութեամբ է արտայայտւում, մինչդեռ կանանց արտագաղթողների ցանկում գերակշռում են 20-49 տարեկան կանայք (աւելի քան 60%): Ներգաղթողների մէջ նոյնպէս մեծամասնութիւն են կազմում աշխատունակ հասակի տղամարդիկ եւ կանայք:

Եզրահանգումներ

1. Զրկուելով պետականութիւնից՝ հայ ազգը դարեր շարունակ ձգտել է ունենալ բազմազաւակ ընտանիք, դրանով իսկ ապահովելով իր գոյատեւութիւնը: Այդ աւանդոյթն ապահովել է նաեւ Խորհրդային Հայաստանի 70 տարիներին: Ոչ միայն բնակչութեան բնական աճով, այլեւ երկարակեցութեամբ նա գրաւել է առաջատար դիրք Միութեան մէջ եւ աշխարհում: Սակայն անկախութեան 16 տարիները, ցաւօք, դարձան զանգուածային արտագաղթի, աւանդական ընտանիքի քայքայման եւ ծնելիութեան կտրուկ անկման շրջան: Աւելին, անկախութեան առաջին տարիներին տիրապետում էր պաշտօնական այն տեսակէտը, որ որքան քիչ լինի բնակչութիւնը, այնքան հեշտ կը լինի նրան կերակրելը: Այսօր էլ առանձին երեւոյթներում արտագաղթը «բարիք» է համարւում: Պետութիւնն անգամ չի փոխհատուցում ծննդաբերութեան հետ կապուած ծախսերը: Պետական բիւջէի հաշուին առողջապահութեան բնագաւառին յատկացւում են 3-4 անգամ պակաս ֆինանսական միջոցներ, քան բնակչութիւնն է ծախսում իր առողջութիւնը պահպանելու համար: Նման պայմաններում երեխայ ունենալը «բեռ» է դառնում ընտանիքների մեծ մասի համար, չնայած նրանցից իւրաքանչիւրի երազանքն է ունենալ առնուազն 2-3 երեխայ:

2. Վերջին տարիներին հանրապետութեան ժողովրդագրական իրավիճակում, իրօք, դրական միտումներ են նկատւում, որը շարունակուել է նաեւ 2007 թուականին: Այսպէս, 2007 թ. յունուար-յունիսին արձանագրուել է 18114 ծնունդ, որի յաւելածը 2006 թ. նոյն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 3%, նուազել է նաեւ մեռելածինների թիւը (18,2%-ով): Որոշ չափով աւելացել են ամուսնութիւններն ու պակասել ամուսնալուծութիւնները: Սակայն պահպանւում է մահացութեան ընդհանուր ցուցանիշի աճի միտումը, որի հետեւանքով բնակչութեան բնական յաւելածը մնում է խիստ ցածր (տարեկան 0,2-0,3%), այն դէպքում, երբ աշխարհի բնակչութեան աճի միջին տեմպը 2000-2005 թթ. կազմել է 1,22%: Ընդ որում, Հայաստանի մշտական բնակչութեան թուաքանակը վերջին տարիներին մնացել է գրեթէ անփոփոխ, քանի որ արտագաղթը շարունակում է գերազանցել ներգաղթին:

3. Բնակչութեան բնական աճը հանդիսանում է իւրաքանչիւր պետութեան կենսագործունէութեան ու ազգային անվտանգութեան վճռական գործօնը: Հայաստանի համար այն ունի առաւել կարեւոր ռազմավարական նշանակութիւն, քանի որ փոքր

երկիր է եւ գտնւում է աշխարհաքաղաքական բարդ ու անկայուն տարածաշրջանում: Նրա բնակչութեան թուաքանակը հարեւան երկրների (Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա, Պարսկաստան) բնակչութեան թուաքանակի համեմատութեամբ մինչեւ անկախութեան հռչակումն աճում էր աւելի արագ տեմպերով: Հայաստանը դեռեւս մնում է որպէս տարածաշրջանի աւելի խիտ բնակեցւած երկիր, չնայած վերջին 16 տարիներին (1991-2006 թթ.) նրա բնակչութեան իրական թիւը կրճատուել է 16%-ով: Մարդկային զարգացման ցուցանիշներով, մասնաւորապէս նորածնի կեանքի սպասուելիք տեւողութեամբ եւ բնակչութեան կրթական մակարդակով մեր հանրապետութիւնը տարածաշրջանում գրաւում է առաջին տեղը:

Սակայն այդ ամէնը չեն կարող ազգի անվտանգութեան վճռական գործօններ հանդիսանալ, քանի դեռ արմատապէս չի բարելաւուել ժողովրդագրական իրավիճակը եւ արտագաղթը չի փոխարինուել ներգաղթով: Ուշագրաւ են ՄԱԿ-ի հետեւեալ կանխատեսումները:

Բնակչութեան թուաքանակը (մլն. մարդ)		
	2002 թ.	2050 թ.
	փաստացի	կանխատեսւող
Հայաստան	3,8	3,2
Վրաստան	5,2	3,2
Ադրբեջան	8,1	8,9
Իրան	72,4	121,4
Թուրքիա	68,6	98,8

Մի կողմ թողնենք այն փաստը, որ ելակէտային ցուցանիշները, յատկապէս Ադրբեջանինը, խիստ չափազանցուած են: Բայց ՄԱԿ-ի կանխատեսումները լուրջ մտահոգութիւն են առաջացնում, եթէ հաշուի առնենք նաեւ այն հանգամանքը, որ Թուրքիան ժողովրդագրական ագրեսիայի հեռաւոր նպատակներ է հետապնդում:

4. Աշխարհի տարբեր տարածաշրջաններում ու երկրներում բնակչութեան խիստ անհամաչափ աճը թելադրում է մշակել ակտիւ ժողովրդագրական քաղաքականութիւն: Մի դէպքում դա զսպող քաղաքականութիւն է, որը դրական արդիւնք է տուել, օրինակ, Չինաստանում. նրա բնակչութեան թուաքանակը մինչեւ 2050 թ. կ'աւելանայ 28,6%-ով: Մինչդեռ Աֆրիկայի բնակչութիւնը կաճի 2,4 անգամ, հասնելով 2 մլրդ. մարդու: Ընդհակառակը՝ Եւրոպայի բնակչութիւնը կը պակասի 17%-ով, իսկ Ռուսաստանինը՝ 27,5%-ով: Պարզ է, որ Ռուսաստանը եւ եւրոպական երկրները, այդ թւում Հայաստանը եւ Վրաստանը պարտաւոր են մշակել խրախուսող ակտիւ ժողովրդագրական քաղաքականութիւն:

Այդ չափազանց կարեւոր հիմնախնդիրները լուրջ ու բազմակողմանի վերլուծութեան կարիք ունեն: Ցաւալին այն է, որ ՀՀ Կառավարութիւնը նոյնիսկ անհանգստութիւն չի ցուցաբերում հանրապետութեան տագնապալից ժողովրդագրական իրավիճակի նկատմամբ, ամէն ինչ թողնելով շուկայական օրէնքների գործողութեան քմահաճոյքին: Ճիշտ է, մշակուել են հանրապետութեան անվտանգութեան ու աղքատութեան յաղթահարման ծրագրեր, բայց դրանք միայն անուղղակիօրէն են շօշափում ժողովրդագրական հիմնախնդիրները, որոնց կը փորձենք անդրադառնալ յաջորդ յօդուածում:

Գրիգորեան Վլադիմիր
Ղազարեան Էդուարդ
Միրզոյեան Բենիամին
Հայաստանի պետական ագրարային
համալսարանի պրոֆեսորներ

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՍՏՎԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Վահէ Սարգսեան

ԳՈՅԱՏԵՒՄԱՆ ՓԱԿՈՒՂԻ

Բազմաթիւ վերլուծաբան մասնագէտների կողմից մշտապէս ցոյց է տրուած, որ իր մէջ բազմաթիւ ենթաէթնոսներ (դրանք թուով 12-ն են) պարունակող վրաց ժողովուրդը միշտ աւելացել է ոչ թէ ի հաշիւ բնական աճի, այլ իր մէջ այլ ժողովուրդներին ձուլելու ճանապարհով: 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբներին, հերթական անգամ, հազարաւոր հայեր ձուլուեցին Կախեթում եւ Քարթլիի շրջանում:

Այսուհանդերձ, կամայ թէ ակամայ, սպառուած կարելի է համարել ձուլման ճանապարհով վրացիների թուի աւելացման «հիմնական աղբիւրները»՝ ելնելով այն հանգամանքից, որ արդէն աւարտուել են Կախեթի եւ Քուեմո Քարթլիի մեծ մասի ձուլման գործընթացները, իսկ մնացեալ հայութիւնը (Թիֆլիս, Սամցխէ-Ջաւախք-Ծալկա) աստիճանաբար ձեռք է բերում ազգային դիմադրողականութեան մեծ ներուժ (թէեւ առանձին դէպքերում այդ ներուժը շատ նուազ է, օրինակ՝ Ախալցխայի տարածքում հայ-վրացական խառն ամուսնութիւնները որոշ տուեալներով կազմում են 23%): Պատերազմական ճանապարհներով անջատուել են Աբխազիան եւ Հարաւային Օսեթիան (Աջարիայի, ինչպէս նաեւ ադրբեջանցիների պարագան այդ իմաստով էական նշանակութիւն չունէր՝ ելնելով կրօնական անհամատեղելիութիւնից), յոյների մի մասը ձուլուեց, իսկ միւս մասը հեռացաւ Յունաստան, ռուսների դերը եւս նուազեց այս գործընթացում՝ ելնելով վերջին տարիներին վրացիների դրսեւորած ազգայնական, թշնամական վերաբերմունքից: Այս ամէնի հեռահար վտանգները Վրաստանին վաղ թէ ուշ զգացնել են տալու: Դրա մասին են վկայում նաեւ ս/թ ամռանը (յուլիսի 11-ին) Ժողովրդաբանութեան համաշխարհային օրուայ կապակցութեամբ Թբիլիսիի «ՌԻԱ-Նովոստի»-ի միջազգային մամլոյ կենտրոնում վրաց մասնագէտ-գիտնականների հնչեցրած մտքերը, ըստ որոնց 2007-2050 թթ. ընթացքում Վրաստանի բնակչութիւնը կարող է նուազել 4,4-ից 3 միլիոնի: Այստեղ հաշուարկուած չէ Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի բնակչութիւնը: Վերջիններիս թուերը համապատասխանաբար կազմում են 160.000 եւ 70.000: Այս երկու տարածաշրջանների հետ միասին Վրաստանի բնակչութիւնը ներկայումս հասնում է 4,6 միլիոնի (1993 թ. այդ թիւը կազմել է 5,4 մլն.): Այս ամէնի հետ մէկտեղ Վրաստանի բնակչութեան ժողովրդագրական պատկերին վերջին 2-3 տարիներին խոշոր մարտահրաւէր են նետել

չինացիները, որոնց թիւն այսօր Վրաստանում տատանւում է 40-50 հազարի սահմաններում (հաշուի առնենք, որ 2005 թուականին Վրաստանում ապրում էր ընդամէնը 500 չինացի): Վրաց մասնագէտները Վրաստանի բնակչութեան այսպիսի նուազումը բացատրում են արտագաղթի մեծացող չափերով (Վրաստանից, ըստ փորձագէտների, տարեկան միջին հաշուով գաղթում է 20-25 հազ. մարդ), ինչպէս նաեւ ծննդաբերութեան խիստ ցածր մակարդակով (ըստ Վրաստանի վիճակագրութեան պետական դեպարտամենտի տուեալների՝ իւրաքանչիւր 10 կնոջ բաժին է ընկնում 14-ից մինչեւ 16 երեխայ, այնինչ ժողովրդագրական հաւասարակշռութիւնը պահպանելու համար տասը կնոջ հաշուով նուազագոյնը պէտք է լինի 21 երեխայ): Ամենեւին չնսեմացնելով վրաց մասնագէտների մատնանշած այս պատճառների դերակատարութիւնը, հարկ է նշել նաեւ, որ Վրաստանի բնակչութեան նուազման (կամ աճի անհամեմատ դանդաղ ընթացքի) հիմնական պատճառները բուն վրաց ժողովրդի (բառիս ընդգծուած ազգագրական իմաստով) դէպի աստիճանական ծերացման գնալն ու ծուլման գործընթացում վերոյիշեալ «հիմնական աղբիւրների» բացակայութիւնն են: Վերոյիշեալն աւելի պարզ է դառնում, եթէ նշենք, որ երկրի ադըրբեջանցի (թաթարական) բնակչութիւնը՝ իր ցեղակիցներին բնորոշ յատկութեամբ մշտապէս ունեցել է բնական աճի շատ մեծ արագութիւն (օրինակ՝ 1959 թ. Վրաստանում նրանց թիւը կազմել է 153,6 հազար, 1979 թ.՝ 225,7 հազար, 1989 թ.՝ 307,6 հազար մարդ), այսինքն՝ թուաքանակն աւելացել է շուրջ 2 անգամ, իսկ արդէն 2000 թ.՝ արտագաղթի հետեւանքով նուազել է 22,8 հազարով, հասնելով 284,8 հազարի: Յաւելեալ նշենք, որ այս նոյն 1959, 1979, 1989 եւ 2002 թուականներին հայերի թիւը Վրաստանում համապատասխանաբար կազմել է 442,9, 448,0, 437,2 եւ 248,9 հազար մարդ (այսինքն՝ 1959 թ.-ի համեմատութեամբ 1989 թ. հայերի թիւը նուազել է 5,7 հազարով, իսկ ահա արդէն 2002 թ. այդ տարբերութիւնը կազմել է 194 հազար, եթէ անգամ հաշուի առնենք այն փաստը, որ շուրջ 60-70 հազար հայեր 2002 թ. չեն հաշուառուել Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի տարածքներում, ապա նուազած հայերի թիւը կը կազմի շուրջ 130 հազար):

Եթէ արտագաղթի տեմպերը հայերի եւ ադրբեջանցիների շրջանում մօտաւորապէս նոյնը համարենք, ապա վերջիններիս նուազման թուի՝ աւելի քան 100 հազարի հասնող տարբերութիւնը ցոյց է տալիս, որ հայութեան այդ չափի «կորուստը» տեղի է ունեցել ծուլման հետեւանքով, իսկ ինչ վերաբերում է ադրբեջանցիներին, ապա կրօնական անհամատեղելիութիւնից ելնելով վրացական շրջաններում ծուլումը բացառելով, վերջիններիս թուաքանակը պահպանուել է համեմատաբար կայուն ձեւով: Դեռեւս 1959 թ. Վրաստանում տեղի ունեցած մարդահամարի ամփոփուած հարցման արդիւնքները ցոյց են տուել, որ 442.916 հայերից միայն 364.381-ն են իրենց մայրենի լեզուն համարել հայերէնը, մնացած 78.535 հայերից 44.184-ը իրենց մայրենի լեզուն համարել են վրացերէնը, 33.342-ը՝ ռուսերէնը, 1009 հայեր իրենց մայրենի լեզուն համարել են այլ լեզուներ: Ինչպէս տեսնում ենք, տասնեակ հազարաւոր հայեր արդէն դարակէսին կորցրել էին իրենց ազգային ինքնագիտակցութիւնը եւ կանգնել ծուլման եզրին:

Վրաց մտաւորականութեան համեմատաբար գիտակ մասի շրջանում ներկայումս այս ամէնի հետ կապուած զգացւում են «խուճապի» նշաններ, սակայն որպէս երկրի ժողովրդագրական վիճակի վրայ ազդող գործօններ դեռեւս նշում են սոցիալականը, քաղաքականն ու տնտեսականը: Էքնիկ գործօնն այս պարագայում դեռ չի «պաշտօնականացել»: Սակայն այս խնդրով մտահոգ վրացական շրջանակներն այս ամէնին զուգահեռ ժողովրդագրութեան հարցում փորձում են յաջողութեան հասնել հին ու փորձուած միջոցով, այս անգամ թիրախային խումբ ընտրելով մեսխեթցի թուրքերին: Հարկ ենք համարում նշել, որ մեսխեթցի թուրքերի վերադարձի եւ վրացականացման գործընթացի ճանապարհին կանաչ լոյսերն այնքան էլ շատ չեն: Նախ՝ որ նրանց վերադարձը Վրաստանին պարտադրող Եւրախորհուրդը եւ նրա հետ միասին Թուրքիան ձգտում են վերջիններիս վերադարձնել եւ կոմպակտ բնակեցնել Սամցխէ-Ջաւախքի շրջա-

նում, որտեղից գաղթել են (յաւելեալ նշենք, որ գաղթելու պահին՝ 1944 թ., վերջիններիս թիւը կազմել է շուրջ 90-92 հազար, իսկ այժմ այն հասնում է աւելի քան 400 հազարի): Հենց իրենց՝ թուրք մեսխեթցիների շրջանում շատ մեծ թիւ են կազմում 1988 թ. Եուսուֆ Սարվարովի գլխաւորութեամբ ստեղծուած «Վաքան» կազմակերպութեան հետեւորդները, որոնք դէմ են Վրաստանի առաջարկած ցանկացած նախապայմանի, ազգութեան փոփոխման եւ բացի Սամցխէ-Ջաւախքի տարածքից, որեւէ այլ տեղ վերաբնակեցուելուն (որի ակտիւ կողմնակիցն է նաեւ Թուրքիան):

Յատկանշական է, որ Վրաստանը տրամադրուած էր վերաբնակեցնելու «Խսնա» (վրաց.՝ «Փրկութիւն») կազմակերպութեան գաղափարաբանական հետեւորդներին, որոնք ունեն ոչ արմատական հայեացքներ եւ կարող էին բնակուել ինչպէս Վրաստանի ցանկացած վայրում, այնպէս էլ հեշտօրէն ասիմիլացուել: Եւ ահա բոլոր առումներով ամենայարմար վայրը յունաբնակ-հայաբնակ Թռեղքն էր (Ծալկայի շրջան), որտեղ 1989 թ. դրութեամբ 61,2 %-ը յոյներ էին, 28,5 %-ը՝ հայեր, 5,1%-ը՝ թաթարներ (ադրբեջանցիներ), 3,6%-ը՝ վրացիներ եւ 1% այլազգիներ: Յոյների զանգուածային արտագաղթից յետոյ վրաց կառավարութիւնը, հայութեան տեսակարար կշիռը այս շրջանում մեծանալու մտավախութեամբ, 1990-ական թթ. կէսերին ձեռնամուխ եղաւ մօտ 400 ընտանիքների վերաբնակեցնելու գործընթացին: Յետագայում սրանց շարքերը լրացրեցին սվաններն ու աջարները: Վերաբնակեցման ուղղութեամբ տարուող աշխատանքների հետ մէկտեղ, վրաց իշխանութիւնները նախկինում եւ այսօր ամէն ինչ անում են մեսխեթցի թուրքերի շրջանում քարոզելու այն գաղափարը, որ վերջիններս վրացիներ են եղել, եւ ներկայումս շատ կարեւոր է մեսխեթցի թուրքերի սերունդներին վերադարձնել իրենց ակունքներին: Այդ առումով բաւականին հեշտ է աշխատել «Խսնայի» հետեւորդների հետ, եւ մինչ այժմ վերաբնակեցուածները, որոնք հեշտութեամբ յարմարուում են Վրաստանի այլ շրջաններում (ոչ Սամցխէ-Ջաւախքում) գրեթէ ամբողջովին այս կազմակերպութեան հետեւորդներ են: Աւելացնենք նաեւ, որ ս.թ. յուլիսին Վրաստանի խորհրդարանը երրորդ՝ վերջնական ընթերցմամբ ընդունեց օրինագիծ թուրք մեսխեթցիների «կամաւոր» հայրենադարձութեան մասին, որի համաձայն՝ ովքեր ցանկանում են վերադառնալ, պէտք է դիմում ներկայացնեն Վրաստանի մօտակայ հիւպատոսութիւն կամ փախստականների գործերի եւ բնակեցման նախարարութիւն, 2008 թ. յունուարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառեալ: Այդ ժամանակամիջոցը Վրաստանի իշխանութիւններին հնարաւորութիւն կը տայ որոշելու վերադառնալ ցանկացողների թիւը: Օրինագծում յստակօրէն նշւում է հետեւեալի մասին. «Վերադառնալու իրաւունքից կարող են օգտուել խորհրդային վարչակարգի 1944 թուականի որոշման հիման վրայ Վրաստանից բռնի վերաբնակեցուած անձինք, նրանց ամուսինները, երեխաները, թոռները եւ ընտանիքների անդամները, սակայն նրանք պէտք է ներկայացնեն բռնի վերաբնակեցումը հաստատող փաստաթուղթ»: Վերոնշեալ բառն այստեղ ցոյց է տալիս, որ վերադառնալու յայտ կարող են ներկայացնել ոչ միայն բուն թուրք-մեսխեթցիները, այլ պարզապէս 1944 թ. տեղահանուած մարդիկ, որոնց մէջ, ինչպէս յայտնի է, եղել են քրդեր եւ մեծ թուով համշենահայեր (ԽՍՀՄ Ներքին գործերի միանիստրութեան 1953 թ. յունուարի տուեալներով, Միջին Ասիայում հաշւում էր 86,7 հազար վրացական վտարանդի, որոնցից 66,8 հազարը՝ թուրքեր, 8,8 հազարը՝ քրդեր եւ 14,0 հազարը՝ համշենահայեր: Վերջիններս հիմնականում գաղթել են Աջարիայի մերձափնեայ շրջաններից): Այլ հարց է, թէ համշենահայերի՝ վերաբնակեցման վերաբերեալ դիմումներն ինչ արձագանք կը գտնեն վրացական վերնախաւի մօտ:

Ամփոփելով՝ նշենք, որ այլազգիներին իր մէջ ձուլելու նպատակ հետապնդող Վրաստանի այս ծրագրերը եւ մշտապէս ստեղծուող համապատասխան միջավայրերը, որոնց միջոցով ցայժմ վրաց ժողովուրդն այլ ազգերի շարքում ապահովել է իր պատմական էվոլիւցիան, ոչ հեռու ապագայում վերջնականապէս սպառելու են իրենց, եւ Վրաստանն ի վերջոյ կանգնելու է իրապէս ծանր մարտահրաւէրի առջեւ:

ՊՈԼՍԱՀԱՅԵՐԸ ԱՅՍՕՐ

Ժիլբերտ ՄՈՒՇԿԱՆԲԱՐԵԱՆ
Արևելագէտ, Թեհրանում պարսկերէնով հրատարակուող «Պայման» պարբերականի խմբագրական կազմի անդամ

Հայ ժողովրդի պատմութեան, նրա հոգեւոր ու մշակութային կենսագրութեան մէջ Կ. Պոլսի հայ գաղթօջախը բացառիկ նշանակութիւն է ունեցել, փաստօրէն Կ. Պոլիսը եղել է այն կենտրոնը, ուր աճել ու զարգացել է հայ քաղաքակրթութեան կարեւոր մասը կազմող արեւմտահայ մտաւոր ու հոգեւոր մշակոյթը: Սակայն պոլսահայ գաղթօջախի 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի փայլուն պատմութիւնը 1915 թուականին ողբերգական վերջաբանով աւարտուեց, իսկ Եղեռնից յետոյ պոլսահայութեան պատառիկներից վերակազմուած գաղութն իր գոյութիւնը հազիւ շարունակելով, բոլորովին չունեցաւ իր նախկին փառքը:

Թուային պատկեր

Մինչեւ կոտորածները պոլսահայութիւնը հաշւում էր 250.000 հոգուց աւելի: Դա պարզւում է այն իրողութեամբ, որ սահմանադրութեան ժամանակ պոլսահայերի կողմից խորհրդարանի մէջ երկու ներկայացուցիչ են ընտրուել, ինչը նշանակում է տուեալ ժամանակաշրջանում Պոլսում ապրել են նուազագոյնը 200.000 հայեր:

Եղեռնից յետոյ, թրքական կառավարութեան զանազան ճնշումների հետեւանքով, տարբեր թուականներում նուազել է պոլսահայութեան թուաքանակը:

1942 թուականին թրքական կառավարութիւնը ընդունեց օրէնք՝ այսպէս կոչուած «ունեւորութեան հարկի» կամ varlik vergisi-ի վերաբերեալ: Այդ օրէնքն իր սուր ծայրով ուղղուած էր Պոլսի փոքրամասնութիւններին՝ հայերի, յոյների եւ հրէաների դէմ, քանի որ այդ փոքրամասնութիւնների ազդեցութիւնը երկրի տնտեսութեան մէջ այն ժամանակ դեռեւս զգալի էր: «Այս կողոպուտէն,- գրում է «Նոր օր» թերթը,- Թուրքիոյ անհատակ սնտուկը հոսուեցաւ 320 միլիոն թուրքական ոսկի..., որի մօտաւորապէս 100 միլիոնը Պոլսոյ 250.000 հայերէ նաեւ յոյներէ ու հրէաներէ գրաւուած է»: Ունեւորութեան տուրքը վճարել անկարողները, որոնց մէջ հիմնականում հայերը, որպէս պատիժ Պոլսից տարագրուեցին Բաբերդի եւ Կարինի միջեւ գտնուող Աշկալա (Կոփ) կոչուած լեռները՝ տաժանակիր աշխատանքի: Տարագրուածներից շատերն անկարող տոկալու սառնաշունչ կլիմային ու մահացու աշխատանքին այլեւս չեն վերադարձել:

Միւս դէպքը 1955 թուականի սեպտեմբերի 6-ի եւ 7-ի ընթացքում պատահածն է, որի պատճառը իրականում

Կիպրոսի հարցի առընչութեամբ յոյն-թրքական յարաբերութիւնների խիստ լարուած իրավիճակն էր: Մի շարք թուրք ծայրայեղականներ հակայունական մեծ անկարգութիւններ առաջացրին քաղաքում: Պոլսում, օրը ցերեկով, ոստիկանութեան աչքի առաջ ազգայնական տարրերը, մեծ մասամբ երիտասարդներ, ջարդուփշուր արին բոլոր փոքրամասնութիւնների՝ յոյների, հրէաների եւ հայերի խանութները, հրդեհեցին կամ կողոպտեցին նրանց ունեցուածքները, առեւանգեցին երիտասարդ աղջիկների:

Վերը նշուած հիմնաւորումների եւ կատարուած մարդահամարների հիման վրայ 1915 թ.-ից յետոյ Պոլսոյ հայկական գաղութի թուաքանակի տատանումները հետեւեալ կերպով են եղել. (տե՛ս աղիւսակը).

Այսպիսով 1920 թուականին Պոլսի 250.000 հոգիանոց գաղութը, գաւառահայութեան հետ միատեղ հաշւում է

Տարի	Պատճառ	Թուաքանակ
1920 թ.	Հայոց ցեղասպանութիւնից յետոյ	250.000 հոգի
1940 թ.	Փոքրամասնութիւններին Թուրքիայից հեռացնելու նպատակով «ունեւորութեան հարկի» օրէնքի հռչակումից յետոյ	180.000 հոգի
1950 թ.	1955 թուականին պատահած դէպքերից յետոյ	130.000-ից մինչեւ 140.000 հոգի
1980 թ.	Արտագաղթի մեծ թափ դէպի Ամերիկա, Եւրոպա, ի մասնաւորի Ֆրանսիա	70.000 հոգի
1990 թ.	Բնակչութեան թուի յաւելում, սակայն դարձեալ արտագաղթի նոր թափ	75.000 հոգի
2002 թ.	Արտագաղթ դէպի Ամերիկա եւ Եւրոպա	60.000-ից մինչեւ 65.000 հոգի
2005 թ.	Ոչ պաշտօնական տուեալների համաձայն, հաշուի առնելով, որ ոչ բոլոր հայերն են գրանցուած Պատրիարքարանի ցանկերում	50.000 հոգի
2006 թ.	2006 թուականի հոկտեմբերի 25-ին «Հորիզոն» շաբաթաթերթի միջոցով հրատարակուած տուեալների համաձայն պոլսահայութեան և գավառահայութեան ներկա թուաքանակի ընդհանուր գումարը գնահատւում է շուրջ	60.000 հոգի

մօտաւորապէս 60 հազար հոգով, մինչդեռ Թուրքիայի բնակչութեան 2 տոկոս բնական թուային աճով այսօր միմիայն Պոլսում պիտի ապրէին միլիոնից աւելի հայեր:

1915 թուականին գոյութիւն ունեցած տուեալների համաձայն հայերը բնակուել են Պոլսի թուով 45 հայկական թաղամասերում, սակայն այսօրուայ տուեալներով այդ թաղամասերից պահպանուել են ընդամենը մի քանիսը, ինչպէս՝ Սամաթիա, Գումգափու, Գատըգիւղ, Սկիւտար, Քարթալ, Շիշլի, Պաքըրգիւղ, Քուրթուլուշ, Գուզգունճուկ, Ֆերիգիւղ եւ Ռումելիհիսար թաղամասերը: Նշելի է, որ հայութեան մեծ մասը ունեն իրենց ամառանոցները Քինալի կղզում, որի բնակչութեան 90 տոկոսը այսօրուայ դրութեամբ հայեր են:

Պոլսի Հայկական պատրիարքարանի պաշտօնական անուանումն է «Պատրիարքարան Թուրքիոյ Հայոց», որը գտնուում է Գումգափու թաղամասում: Պատրիարքարանի միջոցով են ղեկավարուում հայկական փոքրամասնութեան բոլոր կրօնական, կրթական, ազգային եւ հասարակական խնդիրները, իսկ կենտրոնական իշխանութեան պատասխանատու դէմքը պետութեան համար պատրիարքն է, այսօրուայ դրութեամբ՝ Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանը:

Տեղերում կան թաղական խորհուրդներ, որոնց ընտրութիւնները կատարուում են թրքական իշխանութիւնների վերահսկողութեամբ չորս տարին մէկ անգամ:

Պոլսի հայ մամուլում յաճախ կարելի է նիւթեր կարդալ աշակերտական կամ, ինչպէս Պոլսի հայերը դրանք անուանում են, «Սանուց Միութիւնների» գործունէութեան մասին: Դրանք սովորաբար գործում են որեւէ կրթական հաստատութեան կից եւ այդ պատճառով էլ կոչւում են համապատասխան վարժարանների անուններով, ինչպէս Կենտրոնական, Արամեան, Էսայեան եւ այլն:

Հայերը Պոլսում հաստատուելու հէնց առաջին շրջանից իսկ հիմնել են իրենց եկեղեցիները, որոնք տարածուած են եղել իրենց բնակած թաղամասերում, եկեղեցիների թիւը աւելացել է հայութեան թուի աւելացման հետ զուգընթաց, հայկական գործող եկեղեցիների թիւը 1915 թ.-ին հասնում էր մինչեւ 55-ի: Գոյութիւն ունէին նաեւ կաթոլիկ եւ բողոքական հայերին պատկանող եկեղեցիներ: Այսօր Պոլսում գործող հոգեւոր կենտրոնների թիւը հաշւուում է 33 եկեղեցի ու 3 մատուռ: Մատնանշելի է, եւրոմիութեան անդամակցութեան համար Թուրքիայի վրայ դրուած պայմաններին իբրեւ արդիւնք թրքական իշխանութիւնները վերջին տարիներին յաւելեալ ազատութիւններ են տուել հայկական եկեղեցիները նորոգելու կապակցութեամբ, քանի որ նախկինում թրքական պետութեան կողմից քրիստոնէական կառոյցները վերանորոգելը արգելւում էր:

Այսօր Պոլսում աշխատում են թուով 5 լիցէյ եւ 15 հայկական միջնակարգ դպրոցներ, ուր սովորում են շուրջ 4000 աշակերտներ: Մատնանշելի է, դասաւանդուող

առարկաների կէսը մատուցւում է հայերէնով, իսկ միւս կէսը թուրքերէնով, որտեղ նկատելի է աշակերտութեան թըւի նուազում:

Մամուլ

Հայկական հրատարակչական կենտրոնները Թուրքիայում այդ ասպարէզում աշխատող հաստատութիւնների ամենահներից մէկն են համարւում: Բազմաթիւ է եղել այն պարբերականների եւ թերթերի քանակը, որոնք ժամանակին հրատարակուել են Կ. Պոլսում:

Ներկայումս հրատարակուող թերթերն են՝ պոլսահայերի ամենահին օրաթերթերից մէկը, «Ժամանակ»ը, որը հրատարակւում է 1908 թուականից սկսած, 1200 տպաքանակով: 1940 թուականից առայսօր Պոլսում հրատարակւում է «Մարմարա» օրաթերթը, պաշտօնական անւանումը «Քաղաքական-հասարակական օրաթերթ», որի տպաքանակը 1200-ից 2000 օրինակ տատանումի մէջ է: Պոլսում է հրատարակւում նաեւ «Ակօս» հայկական երկլեզուեան շաբաթաթերթը, որը հրատարակւում է թուրքերէնով եւ հայերէնով, 6000 տպաքանակով:

Պոլսում նաեւ հրատարակւում է «Սուրբ Փրկիչ» առողջապահական պարբերականը, որը հայկական «Սուրբ Փրկիչ» հիւանդանոցի հրատարակութիւնն է, նաեւ Պատրիարքարանի «Լրաբեր» տպագիր ապա էլեկտրոնային թերթը: Բացի դա գոյութիւն է ունեցել «Քուլիս» կիսամսեայ գեղարուեստական հանդէսը, որը վերջերս ֆինանսական պատճառներով դադարել է հրատարակուելուց:

Հիւանդանոց

Պոլսի «Սուրբ Փրկիչ» ազգային հիւանդանոցը հիմնադրուել է 1834 թուականին Յարութիւն Պեզճեան անունով ամիրայի անձնական միջոցներով:

Շուրջ 5257 քառակուսի մետր տարածութեամբ իր տարբեր բաժանմունքներով, որտեղ աշխատում են հայ եւ այլազգի մասնագէտ բժիշկներ եւ պաշտօնեաներ: Հիւանդանոցին կից գոյութիւն ունի ծերանոց եւ այլ բաժանմունքներ: Դա արդիական հիւանդանոց է բոլոր բաժիններով, ունի նաեւ պոլիկլինիկայի բաժին: Այս բժշկական հաստատութեան տարեկան ծախսերը, որոնք գաղութի համար զգալի գումար են կազմում, գոյանում են նրա սեփականութիւնը հանդիսացող որոշ կալուածքներից եւ նուիրատուութիւններից: Հիւանդանոցը այսօր էլ բուժական կարեւոր կենտրոն է ոչ միայն պոլսահայութեան, այլեւ Պոլսի ամբողջ բնակչութեան համար:

Պոլսահայութեան մասնակցութիւնը Թուրքիայի քաղաքական կեանքին

Սկսած Օսմանեան կայսրութեան ժամանակներից հայերը թէ պետական համակարգում եւ թէ զօրքի մէջ բարձր պաշտօններ են զբաղեցրել: Եղեռնից յետոյ եւ Թուրքիայի Հանրապետութեան ժամանակաշրջանում գրեթէ ոչընչացել էր հայութեան ակտիւութիւնը Թուրքիայի քաղաքական կեանքում, այնուամենայնիւ Իսմէթ Ինոնուից յետոյ, 1950-ականներից սկսեալ նկատւում է հայերի կողմից Թուրքիայի քաղաքական կեանքում որոշակի մասնակցութիւն, այսպէս օրինակ Պոլսի համայնքային ղեկավար դէմքերից Մկրտիչ Շելեֆեանը դեմոկրատական կուսակցութեան գծով որոշակի դերակատարութիւն է ստանձնել երկրի օրէնսդրութեան մէջ: Մի այլ օրինակը վերաբերում է Արմէն Շահինն, ժողովրդական-հանրապետական կուսակցութիւնից խորհրդարանի կամ Միլլի Մեջլիսի պատգամաւոր, որը 1990-ականներին կառավարութեան կազմի մէջ խորհրդատու նախարարի պաշտօն էր զբաղեցնում: Այսօր եւս նկատւում է քաղաքական եւ հասարակական որոշակի ակտիւութիւն, զանազան թաղերի մէջ քաղաքապետական խորհուրդներին մաս են կազմում մի շարք հայեր, սակայն այնուամենայնիւ Թուրքիայի մէջ հայութիւնը Հայկական Ցեղասպանութեան հարցի արծարծման գծով լուրջ բարդութիւնների դիմաց է կանգնած, որը բնականաբար հասկանալի է:

Օգտագործուած գրականութեան ցանկ

1. «Սփիւռքահայ գաղթօջախներն այսօր», Ս. Գասպարեան, Հայաստանի պետական հրատարակչութիւն, Երեւան, 1962
2. «Հայ գաղթականութեան պատմութիւն», Երեւանի «Հրաչեայ Աճառեան» համալսարանի հրատարակութիւն, Երեւան, 2002
3. «Հայ գաղթաշխարհի պատմութիւն», հատոր երկրորդ, Վարդգէս Միքայէլեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2003
4. http://www.horizonweekly.ca, 10-25-2006
5. http://www.geocities.com/omogeneiaen/minorities-armenians.html
6. http://www.geocities.com/CapitolHill/5503/
7. http://pilikian.blogspot.com/2005/11/armenian-titans-of-istanbul-and-their.html

Ալ. Մեսանիկեանի հայեացքների ձեւաւորման եւ կուսակցական պատկանելութեան հարցերի շուրջ (1901-1917թթ.)

Վահագն Յակոբեան

Խորհրդային պատմակուսակցական գրականութեան մէջ զգալի տեղ է յատկացուել Ալ. Մեասնիկեանի կեանքի ու գործունէութեան լուսաբանմանը: Մի քանի անգամ հրատարակուել են նրա երկերը, լոյս են տեսել նրա կեանքին ու գործունէութեանը նուիրուած մեծ թուով մենագրական ուսումնասիրութիւններ, յուշագրութիւններ, ժողովածուներ, գիտաժողովների նիւթեր եւ այլն[1]: Ուսումնասիրողները կանգ են առել նրա կեանքի ու գործունէութեան տարբեր կողմերին՝ գաղափարական, յեղափոխական, կուսակցական, ռազմական, պետական, գրական եւ այլն: Առանձնապէս յատուկ ուշադրութիւն է դարձուել նրա գործունէութեան վերջին փուլին, երբ նա արդէն համոզուած բոլշեւիկ-լենինեան էր: Մինչդեռ Մեասնիկեանի աշխարհայեացքի ձեւաւորման ու գործունէութեան առաջին շրջանը հիմնականում դուրս է մնացել ուսումնասիրողների հետաքրքրութեան շրջանակներից կամ էլ դրան տրուել են կողմնակալ մեկնաբանութիւններ ու գնահատականներ: Բանն այն է, որ խորհրդային ժամանակաշրջանում գաղափարաքաղաքական նկատառումներից ելնելով ամենեւին ցանկալի չէր Մեասնիկեանի մասշտաբի կոմունիստական կուսակցութեան ու խորհրդային պետութեան ականաւոր գործչի հայեացքների ձեւաւորման ու գործունէութեան առաջին շրջանը՝ աւելի քան մէկ եւ կէս տասնամեակ, ներկայացնել իբրեւ դաշնակցական կամ սոցիալ-դեմոկրատ-սպեցիֆիկեան ժամանակաշրջան: Իսկ որ դա իսկապէս այդպէս է, հաստատւում է մի շարք փաստերով, վաւերագիր նիւթերով ու առաջին հերթին Մեասնիկեանի պրակտիկ գործունէութեամբ: Այդ է պատճառը, որ խորհրդային պատմակուսակցական գրականութեան մէջ գիտակցաբար շրջանցուել, իսկ առանձին դէպքերում էլ պարզապէս խեղաթիւրուել է Ալ. Մեասնիկեանի գործունէութեան այդ շրջանը: Գրականութեան մէջ ակնյայտ տարակարծութիւն եւ շփոթ կայ Ալ. Մեասնիկեանի ՌՍԴԲԿ, ՍԴԲՀԿ կամ ՌՍԴԲԿ բոլ-

շեւիկեան թեւի անդամակցութեան հարցում: Տիրապետող է այն տեսակէտը, որ 1906 թ. նա անդամագրուել է ՌՍԴԲԿ բոլշեւիկեան թեւին: Այս խնդրում տարակարծութիւններն այնքան բազմազան են, որ նոյնիսկ խորհրդային միեւնոյն թերթի տարբեր համարներում հակասական տուեալներ են յայտնւում, նոյնիսկ գրուել է, որ անգամ 1904 թ. Մեասնիկեանը անդամագրուել է բոլշեւիկեան կուսակցութեանը[2]: Սակայն մի շարք տուեալներ գալիս են հաստատելու, որ 1906 թ. Բաքուում նա անդամագրուել է ոչ թէ ՌՍԴԲԿ, այլ դարձեալ մարքսիզմի յեղափոխական գաղափարներով առաջնորդուող, բայց կազմակերպական սկզբունքի տեսակէտից զուտ ազգային կազմ ունեցող Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութեանը (ՍԴԲՀԿ): Հրէական Բունդի տիպի կազմակերպական կառուցուածք ունեցող ոչ ինտերնացիոնալիստական ՍԴԲՀ կազմակերպութեանը հայ բոլշեւիկները ու առաջին հերթին Ստ. Շահումեանը հեգնօրէն կոչել են Սպեցիֆիկներ, քանի որ վերջիններս շատ էին խօսում եւ ընդգծում հայ բանուորների սոցիալ-դասակարգային պայքարի, հայ իրականութեան եւ կեանքի իւրայատկութիւնների մասին:

ԽՍՀՄ փլուզումից եւ կոմունիստական ամբողջատիրական քաղաքական համակարգի վերացումից յետոյ երկրորդ պլան մղուեց խորհրդային պետութեան եւ կոմունիստական կուսակցութեան գործիչների կեանքի ու գործունէութեան պատմութեան հարցերի ուսումնասիրութիւնը: Այժմ, կարծում ենք, ժամանակն է նորովի, օբյեկտիւ եւ անկողմնակալ դիրքերից վեր հանել խորհրդային շրջանի պատմութեան շատ հարցեր: Սոյն յօդուածում փորձ է արւում որոշ յստակեցում կատարել Մեասնիկեանի հայեացքների ձեւաւորման եւ գործունէութեան առաջին շրջանի վերաբերեալ, ինչը կը նպաստի նրա քաղաքական դիմանկարի ամբողջացմանը:

Ալ. Մեասնիկեանը ծնուել է 1886 թ. յունուարի 27-ին (ն. տ. փետրուարի 9-ին) Նոր Նախիջեւանում: Սկզբնական կրթութիւնը ստացել է տեղի հայկական եկեղեցական-ծխական (ժառանգաւորաց) դպրոցում: Ծխականն աւարտելուց յետոյ՝ 1898 թ.12 տարեկան հասակում, մըտնում է տեղի հայկական թեմական դպրոցը (սեմինարիան) եւ 1903 թ. աւարտում բոլոր 6 դասարանները: Արդէն թեմականում 15 տարեկան հասակում (1901 թ.) նա տարւում է ազգային-յեղափոխական գաղափարներով, կլանուած ընթերցում «Դրօշակի» համարները, մտնում յեղափոխական բնոյթի ընդյատակեայ աշակերտական խմբակների մէջ, հրատարակում աշակերտական անլեգալ ձեռագիր թերթ[3]: Գտնուելով գաղափարական որոնումների մէջ՝ նա տարւում է նաեւ ազգային-ազատական ուղղութիւն ունեցող «Մշակի» եւ «Մուրճի» ընթերցանութեամբ: Թեմականի աւարտական փուլում՝ 16-17 տարեկան հասակում, նա անցում է կատարում դէպի ազգային-յեղափոխական գաղափարական դիրքերը: Ա. Կարինեանը եւ Դ. Սիմոնեանը Մեասնիկեանի մահուան կապակցութեամբ գրած կենսագրականում յայտնում են, որ 1904 թ. Մեասնիկեանը գտնուել է հայ ազգային-յեղափոխական գաղափարների ազդեցութեան տակ[4]: Պատանի Մեասնիկեանը հարում է Հ.Յ.Դաշնակցութիւն կուսակցութեանը: Յետագայում՝ 1922 թ., իր իսկ կողմից լրացուած անձնական թերթիկում Մեասնիկեանը նշել է. «1903 թ. սեպտեմբերից մինչեւ 1904 թ. մարտը համակրել եմ Դաշնակցութեանը»[5]: Այստեղ դժուար չէ կռահել, որ Խորհրդային Հայաստանի կառավարութեան նախագահը չէր կարող աւելին գրել անցեալում իր՝ Դաշնակցութիւն կուսակցութեանը պատկանելութեան մասին:

Ս. Վրացեանն իր յուշերում պատմում է, որ Նոր Նախիջեւանի թեմական դպրոցում իր համադասարանցին էր Ալ. Մեասնիկեանը: Թեմականում սովորելու շրջանում նա հարում է Դաշնակցութիւն կուսակցութեանը: «Ալեքսանն էլ,- յիշում է Ս. Վրացեանը,- ի վերջոյ դարձաւ դաշնակցական եւ մի առ ժամանակ Համբարձում Տէրտէրեանի հետ բուռն գործունէութիւն ցոյց տուեց Ռոստով-Նախիջեւանում»[6]: Վրացեանի վկայութեամբ Մեասնիկեանը մի քանի տարի մնում է Դաշնակցութեան շարքերում եւ թեմականը աւարտելով՝ փոխադրւում է Մոսկուա՝ սովորելու Լազարեան ճեմարանում[7]:

Նշենք, որ 20րդ դարասկզբին ցարիզմի հայահալած քաղաքականութեան դէմ, Վրացեանի վկայութեամբ, եւ յատկապէս 1903 թ. յունիսի 12–ի յայտնի օրէնքի կապակցութեամբ Նոր Նախիջեւանում իր գործունէութիւնն

էր ակտիւացրել Դաշնակցութիւն կուսակցութիւնը: Նրա տարածքային կազմակերպութիւնը՝ կենտրոնական կոմիտէութիւնը, Մ. Նալբանդեանի անունով կոչւում էր «Նալբանդ»: Դաշնակցականները եւ նրանց համակիր որոշ երիտասարդներ 1904 թ. (որոշ տուեալներով՝ 1903 թ.) հրատարակում են «Աղաւնի» անունով խմորատիպ շաբաթաթերթ, որն աստիճանաբար ստանում է քաղաքական բնոյթ[8]: Ալ. Մեասնիկեանի համերկրացի ու դասընկեր Հ. Տէրտէրեանն իր յուշերում վկայում է, որ 1903 թ. ամռան ամիսներին Ս. Վրացեանի, Ալ. Մեասնիկեանի եւ այլոց հետ հրատարակում էին «Աղաւնի» անունով խմորատիպ առաջին կուսակցական-աշակերտական շաբաթաթերթը: Թերթը լոյս էր տեսնում 100 օրինակ եւ արագ սպառւում 10 կոպեկով: Տէրտէրեանը հաստատում է, որ իրենք, այդ թւում նաեւ Ալ. Մեասնիկեանը, մտել էին ՀՅԴ կուսակցութեան շարքերը եւ գործուն մասնակցութիւն ունէին կուսակցական աշխատանքներին[9]: Ականաւոր կուսակցական-պետական գործիչ, ակադեմիկոս Աշ. Յովհաննիսեանը 1925 թ. Ալ. Մեասնիկեանի ողբերգական մահուան կապակցութեամբ գրուած յուշերում փաստում է, որ դաշնակցական աշակերտական «Աղաւնի» ձեռագիր թերթի խմբագրութեան անդամներն էին Ս. Գրուզինեանը (Վրացեանը), Համբ. Տէրտէրեանը, Գր. Չալխուշեանը եւ Ալ. Մեասնիկեանը[10]:

Յիշեալ թերթը շարունակել է լոյս տեսնել արդէն 1905 թ.: Բերուած տուեալները կասկած չեն թողնում այն մասին, որ Ալ. Մեասնիկեանը 1903-1905 թթ. եղել է ՀՅԴ Նոր Նախիջեւանի «Նալբանդ» կազմակերպութեան ակտիւ անդամներից մէկը:

1904-05 թթ. Ն. Նախիջեւանի հայ ուսանողներից ու աշակերտներից կազմուել ու գործել է նաեւ սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական թեքում ունեցող մի խմբակ: Հիմքեր կան ենթադրելու, որ խմբակը եղել է հայ սոցիալ-դեմոկրատական «սպեցիֆիկեան» տիպի, որովհետեւ այն ղեկավարել է Ս. Սրապիոնեանը (Լուկաշինը), որն այդ ժամանակ ունեցել է «սպեցիֆիկեան» հայեացքներ: Նրա նախաձեռնութեամբ 1905 թ. յուլիսի 1-ին Նոր Նախիջեւանում լոյս է տեսնում «սպեցիֆիկեան» ուղղութեան «Նոր խօսք» ձեռագիր ամսաթերթը[11]: Աշ. Յովհաննիսեանը վկայում է, որ Լուկաշինի խմբագրած թերթը մարքսիստական-մատերիալիստական դիրքերից գաղափարական պայքար էր մղում դաշնակցական աշակերտական «Աղաւնի» թերթի դէմ[12]: Յայտնի է, որ 1904-1906 թթ. ՍԴԲՀԿ անդամակցել է նաեւ Աշ. Յովհաննիսեանը, եւ նա քաջ տեղեակ էր այդ շրջանի անցուդարձին[13]: Աւելին, Ս. Կասեանի տեղեկութեամբ, Աշ. Յովհաննիսեանը տակաւին 1910 թ. «դեգերում» էր «սպեցիֆիկների» շարքերում: Եւ այդ թուականից յետոյ է միայն անցել բոլշեւիկեան կուսակցութեան շարքերը[14]: Ի դէպ, Աշ. Յովհաննիսեանի սպեցիֆիկեան անցեալը բաւական էր, որ նա յետագայում՝ 1930-ական թուականներին ենթարկուէր ստալինեան բռնաճնշումներին:

Թեմական դպրոցն աւարտելուց յետոյ, ուսումը շարունակելու նպատակով, 1904 թ. ամռանը Ալ. Մեասնիկեանը տեղափոխւում է Մոսկուա եւ սովորում Արեւելեան լեզուների Լազարեան ճեմարանում, որն աւարտում է 1906 թ.[15]: Ինչպէս նկատում ենք, պատանի Մեասնիկեանի ուսումնառութիւնը ընթացել է զուտ հայկական կրթօջախներում ու միջավայրում, որոնք, անշուշտ, իրենց բարերար ազդեցութիւնն են թողել նրա ազգային մտածելակերպի ու նկարագրի ձեւաւորման վրայ: Եւ անկախ իր գաղափարաքաղաքական տարընթացութիւններից՝ նա ազգային դիմագիծը պահպանեց մինչեւ կեանքի վերջը:

Մեասնիկեանի ողբերգական մահուանից յետոյ նրա մասին կենսագրական-յուշագրական բնոյթի շարադրանքի փորձ են արել նրա դպրոցական գաղափարակից ընկերները: Մեասնիկեանին բնութագրելու նման առաջին փորձերից մէկն արել է նրա ճեմարանական դասընկեր, գրականագէտ Ցոլակ Խանզադեանը: Վերջինս պատմում է, որ Ն. Նախիջեւանի թեմական դպրոցն աւարտելուց յետոյ՝ 1904 թ., Մեասնիկեանը մեկնեց Մոսկուա՝ Լազարեան ճեմարանում սովորելու: Այստեղ Ալեքշայի (Մեասնիկեանի) հետ ծանօթանում եւ մտերմանում են Ց.Խանզադեանը, Վ. Տէրեանը, Պ. Մակինցեանը եւ ուրիշներ: Խանզադեանի վկայութեամբ «Մեասնիկեանը ունէր դաշնակցական հայեացքներ, որ իր հետ բերել էր Նոր Նախիջեւանից»[16]: Խանզադեանը վերյիշում է, որ 1904-1906 թթ. ինքը, Վ. Տէրեանը, Պ. Մակինցեանը Մեասնիկեանի ազդեցութեամբ

դարձել էին դաշնակցական պրոպագանդիստներ[17]: Վ. Տէրեանի խոստովանութեամբ ճեմարանի շատ սաներ, որոնց թւում եւ ինքը, սկզբնական շրջանում հարել են Դաշնակցութեանը[18]: Սակայն արդէն 1906 թ. ընթացքում ճեմարանական այդ խումբը թողնում է դաշնակցական կազմակերպութիւնը եւ մտնում սոցիալ-դեմոկրատների շարքերը:

Ց. Խանզադեանը գրում է, որ 1906 թ. ամռանը Ալ. Մեասնիկեանը դուրս եկաւ Հ.Յ.Դաշնակցութեան շարքերից եւ անդամագրուեց Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութեանը (ՍԴԲՀԿ): Բայց այդ հանգամանքը չէր կարող արգելք հանդիսանալ ՌՍԴԲԿ մէջ եւս աշխատելուն: Նա յետագայում նաեւ ՌՍԴԲԿ անդամ էր եւ համակրում էր ռուսական մարքսիզմի այն թեւին (հոսանքին), որի առաջնորդը Վ. Ի. Լենինն էր[19]:

Այսպիսով, ըստ Ց. Խանզադեանի, 1906 թ. ամռանը Մեասնիկեանը թողեց ազգայնական համոզմունքները եւ դարձ կատարեց դէպի մարքսիզմը: Կը նշանակի՝ մինչեւ 1906 թ. կէսերը Մեասնիկեանը շարունակել է պահպանել իր դաշնակցական հայեացքները:

Մեասնիկեանի վաղ շրջանի դաշնակցական կամ «սպեցիֆիկեան» անցեալի մասին Ց. Խանզադեանի, նաեւ մենշեւիկ Ս. Փիրումեանի (Ալ. Մարտունիի «Կուսակցութիւնները գաղութահայութեան մէջ» աշխատութեան համար գրուած առաջաբանում) յուշագրական տեղեկութիւնները քաղաքական բանավէճի եւ տեսական դատողութիւնների ձեւով փորձել է քննադատել ու ժխտել ճանաչուած բոլշեւիկ Ս. Կասեանը: Սակայն նա որոշակի փաստ չի բերում ապացուցելու, որ Մեասնիկեանը Դաշնակցութեանը չի հարել կամ ՍԴԲՀԿ անդամ չի եղել[20]:

Պատմաբան Ս. Ամիրեանը, անդրադառնալով Ալ. Մեասնիկեանի ձեւաւորման եւ կուսակցական պատկանելութեան խնդրին, իրաւացիօրէն նշում է, որ բաւականին բարդ է ընթացել նրա հայեացքների ձեւաւորման գործընթացը՝ «դեմոկրատական, ազգային-ազատագրական տրամադրութիւնից դէպի յեղափոխական դեմոկրատիզմ»[21]: Ս. Ամիրեանը Մեասնիկեանի հայեացքների ձեւաւորման ընթացքը բաժանել է երկու էտապի՝ նորնախիջեւանեան շրջան՝ մինչեւ 1904 թ., եւ մոսկովեան՝ 1904-1907 թթ.[22]: Ս. Ամիրեանը գտնում է, որ Ալ. Մեասնիկեանը իր հայեացքների ձեւաւորման առաջին շրջանում եղել է Դաշնակցութեան համակիր: Սակայն Մոսկուա գնալուց յետոյ նա դադարում է Դաշնակցութեանը համակրելուց եւ սկսում է պայքարը նրա դէմ[23]: Մինչդեռ փաստերը եւ վկայութիւնները ցոյց են տալիս, որ Լազարեան ճեմարանում սովորելու շրջանում եւս իր հայեացքներով շարունակել է մնալ դաշնակցական: Այս կապակցութեամբ կարելի է հասկանալ պրոֆ. Ս. Ամիրեանին, որովհետեւ կոմունիստական գաղափարական ամբողջատիրութեան պայմաններում այլ կերպ չէր էլ կարող գրել:

Իրականում, ըստ Ց. Խանզադեանի, Մեասնիկեանը ոչ միայն համակրել է Դաշնակցութեանը, այլ եղել է նրա անդամ եւ Լազարեան ճեմարանում սովորելու տարիներին (1904-1906 թթ.) եւս շարունակել է մնալ նրա շարքերում[24]: Եւ միայն 1906 թ. կէսերից է նա հեռանում Դաշնակցութիւնից եւ հարում մարքսիզմին ու սոցիալ-դեմոկրատիային եւ անդամագրւում ՍԴԲՀԿ-ին:

Այս առնչութեամբ դժուար է համաձայնել խորհրդային պատմակուսակցական գրականութեան մէջ տարածում գտած այն տեսակէտին, թէ 1906 թ. կէսերին Ալ. Մեասնիկեանը մտել է ՌՍԴԲԿ շարքերը[25]:

Հարկ է կրկին փաստել, որ աշխարհայեացքային, գաղափարախօսական տեսակէտից առանձնապէս մեծ տարբերութիւն չի եղել ՌՍԴԲԿ եւ ՍԴԲՀԿ միջեւ: Տարբերութիւնը դրանց կազմակերպական կառուցուածքի մէջ էր: ՌՍԴԲԿ-ն կազմակերպական տեսակէտից ունէր ինտերնացիոնալիստական կառուցուածք, իսկ ՍԴԲՀԿ-ն՝ զուտ ազգային, այսպէս կոչուած, բունդական կազմակերպական կառուցուածք:

Ա. Կարինեանը եւ Դ. Սիմոնեանը յայտնում են, որ Լազարեան ճեմարանն աւարտելուց յետոյ՝ 1906 թ. ամռանը, Մեասնիկեանը վերադառնում է Նոր Նախիջեւան եւ մտնում ՌՍԴԲԿ շարքերը՝ Դոնի Ռոստովի կազմակերպութեան միջոցով: Այնուհետեւ 1906 թ. վերջերին նա մեկնում է Բաքու եւ աշխատում Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութեան շարքերում եւ միաժամանակ ՌՍԴԲԿ բոլշեւիկեան կազմակերպութիւնում[26]: Նոյն միտքն է հաստատում Ս. Ամիրեանը՝ յայտնելով, որ

Մեասնիկեանը, 1906 թ. ամռանը լինելով Նոր Նախիջեւանում, Դոնի Ռոստովի կազմակերպութեան միջոցով ընդունւում է ՌՍԴԲԿ շարքերը՝ հարելով բոլշեւիկեան թեւին: Նոյն թուականի դեկտեմբերին նա թողնում է իր ծննդավայրը՝ Նոր Նախիջեւանը եւ ուղեւորւում Բաքու[27]:

Ալ. Մեասնիկեանի ՌՍԴԲԿ-ին, թէ ՍԴԲՀԿ-ին անդամակցելու հարցում հաւանաբար ամենաստոյգ պատասխանը կարելի է գտնել նրա յուշերում: 1907 թ. Մեասնիկեանն իր յուշերում գրում է, որ ինքը 1906 թ. իբրեւ սոցիալ-դեմոկրատ միաժամանակ աշխատել է ե՛ւ հայ կազմակերպութեան (ՍԴԲՀԿ), ե՛ւ ռուսաստանեան կուսակցութեան (ՌՍԴԲԿ) շարքերում[28]:

Որ Ալ. Մեասնիկեանը, սկսած 1906 թ., անդամագրուած է եղել ՍԴԲՀԿ-ին, հաստատում է նրա յետագայ գործունէութիւնը, գործուն մասնակցութիւնը հայ կազմակերպութեան եւ նրա պարբերական մամուլի աշխատանքներին: Եւ այդ տեսակէտից դժուար է համաձայնել Ս. Ամիրեանի այն մտքին, թէ «Մեասնիկեանը ո՛չ տեսական եւ ո՛չ էլ գործնական ոչ մի աշխատանք չի կատարել ՍԴԲՀԿ համար նրա պահանջով»[29]:

Ալ. Մեասնիկեանի յետագայ կենսագրական տուեալներից իմանում ենք, որ նա 1906 թ. աշնանը ընդունուել է Մոսկուայի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետ, սակայն յեղափոխական գործունէութեան պատճառով, 1906 թ. վերջերին, արտաքսուել է Մոսկուայից: Վերադառնալով Անդրկովկաս՝ նա հաստատւում է Բաքւում: Այստեղ նա մտնում է ՍԴԲՀԿ շարքերը եւ միաժամանակ կապեր հաստատում ՌՍԴԲԿ Բաքուի բոլշեւիկեան կազմակերպութեան հետ: 1908 թ. վերջին Մեասնիկեանը վերադառնում է Մոսկուա եւ 1911 թ. 1-ին կարգի դիպլոմով աւարտում Մոսկուայի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետի տնտեսագիտական բաժինը: 1911-12 թթ. նա զօրակոչւում է ռուսական բանակ եւ ստանում պրապորշչիկի զինուորական աստիճան: Զօրացրուելով 1912-14 թթ. նա աշխատում է Մոսկուայում որպէս երդուեալ հաւատարմատարի օգնական եւ միաժամանակ կատարում կուսակցական-հրապարակախօսական աշխատանք: 1914 թ. ամռանը Առաջին աշխարհամարտի հէնց սկզբից նա զօրակոչւում է բանակ եւ մեկնում Արեւմտեան ռազմաճակատ: 1917 թ. փետր.-ից յետոյ ընտրւում է Արեւմտեան ռազմաճակատի զինուորական առաջին համագումարի պատգամաւոր եւ ռազմաճակատի զինուորական կոմիտէի անդամ[30]:

Եւ հէնց այդ ժամանակ էլ նա հաստատապէս անդամագրւում է բոլշեւիզմին:

1906-17 թթ. կարելի է բնութագրել որպէս Մեասնիկեանի կեանքի ու գործունէութեան ՍԴԲՀԿ կամ այսպէս կոչուած «սպեցիֆիկեան» ժամանակաշրջան: Վաւերագիր նիւթերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Մեասնիկեանը սերտ կապեր է ունեցել «սպեցիֆիկ» շատ գործիչների հետ: Առանձնապէս մտերմիկ են եղել նրա կապերը «սպեցիֆիզմի» ճանաչուած տեսաբան, մարքսիստ Ալեքսանդր Ծատուրեանի (Ռուբէնի) հետ: Այդ մասին խորութեամբ կարելի է տեղեկանալ նրանց նամակագրութիւնից: Ընդ որում՝ կողմերը նամակները սկսել կամ աւարտել են փոխադարձաբար «Սիրելի Ալեօշա» կամ «Սիրելի Ռուբէնի» փաղաքշական խօսքերով: Ի դէպ, յաւելենք, որ Մեասնիկեանի եւ Ռուբէնիի նամակագրական նիւթերը, որոնք հիմնականում պահւում են ՀԱԱ Ալ. Մեասնիկեանի ֆոնդի (4004 ֆոնդի մի շարք գործերում) թղթապանակներում, արխիւագիտական մշակման ժամանակ (հաւանաբար կուսակցական-պետական վերադաս մարմնի հրահանգով) կտրուել-հանուել կամ էլ թանաքով սեւացուել է Ռուբէնիի անունը, որպէսզի ընթերցողը (ուսումնասիրողը) չիմանայ, թէ Մեասնիկեանը ջերմ կապերի մէջ է եղել «սպեցիֆիկ» Ռուբէնիի հետ: Մեասնիկեանը տարաբնոյթ նամակագրական կապեր ու յարաբերութիւններ է ունեցել գործնականում իր կուսակից «սպեցիֆիկ» այլ գործիչների՝ Դ. Անանունի, Բ. Իշխանեանի, Գ. Պիճիկեանի, Շ. Կուրղինեանի եւ այլոց հետ[31]: Բայց ինչպէս ասուեց, առաւել սերտ ու մտերմիկ են եղել կապերը Ռուբէնիի հետ: Մեասնիկեանը Ռուբէնիին համարել է իր ուսուցիչը: Այդ տեսակէտից ուշագրաւ է, որ Մեասնիկեանը մի շարք թերթերից՝ «Պրոլետարիատի կռիւ», «Բանուոր», «Սոցիալիստ», «Արշալոյս», «Խօսք» եւ այլն, ամբողջական համարներով ջանասիրաբար արտագրել, մշակել կամ քաղուածքներ է արել Ռուբէնիի յօդուածներից[32]: Օրինակ, 1906-07 թթ. Մեասնիկեանը «Խօսք» շաբաթաթերթից արտագրել է Ալ. Ռուբէնիի «Դաշնակցութիւնը եւ նրա հասարակական արժէքը» յօդուածաշարը[33]: Մեաս-

նիկեանին հոգեհարազատ են եղել Ռուբէնիի այն մօտեցումներն ու դատողութիւնները, որոնցում մարքսիստական-մատերիալիստական դիրքերից քննադատւում էին ազգային կուսակցութիւնների իդէալիստական հայեացքները, դրանց ոչ սոցիալիստական ծրագրերը[34]:

Սոցիալ-դեմոկրատական մարքսիստական կուսակցութեան գաղափարական-կազմակերպական հարցերում Մեասնիկեանը մեծապէս ներազդուել է Ալ. Ռուբէնիից: Վերջինս համարւում էր «սպեցիֆիկների» բունդական կազմակերպական կառուցուածքի տեսաբանը եւ ամենաջերմեռանդ պաշտպանը: Մեասնիկեանը եւս տեսականօրէն եւ գործնականում ընդունում էր ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների գոյութեան հնարաւորութիւնը: Նրա երկար տարիների աշխատանքը ՍԴԲՀԿ-ում հէնց դրա արտայայտութիւնն է:

Ազգային հարցում եւս Մեասնիկեանի հայեացքներն ու մօտեցումները նոյնանում էին «սպեցիֆիկների» ազգային ծրագրին: Նա տեւական ժամանակ (մինչեւ 1910-ական թթ. կէսերը) պաշտպանում էր ազգային-մշակութային ինքնավարութեան պահանջը: Եւ այս կապակցութեամբ Ստ. Շահումեանը քննադատում էր Մեասնիկեանին՝ վերջինիս համարելով Դ. Անանունի բարեկամ[35]:

Անհերքելի փաստ է, որ Մեասնիկեանը, յամենայն դէպս իր սպեցիֆիկեան գործունէութեան շրջանում՝ մինչեւ 1917 թ., ազգային հարցում պաշտպանել է ազգային-մշակութային ինքնավարութեան պահանջը: «Մեզ,- գրում էր նա,- մեծ նշանակութիւն ունի Բունդի ծրագիրը ազգային հարցում: Ազգային-կուլտուրական աւտոնոմիան, որ մեզ մօտ է բերուել Աւստրիայից, ստացել է իր աւարտուն ձեւակերպումը բունդական առաջնորդների եւ տեսաբանների աշխատութիւններում»[36]: Եւ այս առնչութեամբ իրականութեանը չի համապատասխանում Ա. Կարինեանի եւ Դ. Սիմոնեանի այն պնդումը, թէ իբր Մեասնիկեանը սուր քննադատութեան էր ենթարկում ազգային-կուլտուրական ինքնավարութեան պահանջը[37]: Յայտնի է, որ բոլշեւիկները ճանաչում էին ազգերի ինքնորոշման իրաւունքի պահանջը, թէեւ յետագայում կեանքը ցոյց տուեց, որ նրանք հետեւողական չեղան իրենց իսկ ընդունած ծրագրային պահանջի կենսագործման հարցում: Դրա վառ օրինակներից է «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Բոլշեւիկների համար անընդունելի էր ազգային-մշակութային ինքնավարութեան գաղափարը, որովհետեւ ազգային կուլտուրան ներկայանում էր իբրեւ մի ամբողջութիւն՝ անտեսելով ազգի դասակարգային բաժանումը: Մինչդեռ բոլշեւիկների եւ նրանց գլխաւոր առաջնորդ Վ. Ի. Լենինի տեսակէտով միեւնոյն ազգն ունի երկու տարբեր մշակոյթ՝ հարուստների եւ աղքատների, ինչն, անշուշտ, անհեթեթութիւն է:

Ինչ վերաբերում էր Հայկական հարցին, ապա Մեասնիկեանը գտնում էր, որ թուրքահայերի դատը պէտք է յանձնուի հէնց իրենց՝ թուրքահայերին: «Թուրքահայերի ազատագրութիւնն ու թուրքահայ խնդրի լուծումը պէտք է թուրքահայերի ձեռքի գործը լինի»: Իսկ «դրսի գործը,- շարունակում էր նա,- պէտք է լինի՝ նպաստել թուրքահայ խնդրի լուծման օժանդակիչ աշխատանքի միջոցով՝ գործով թէ խօսքով»[38]: Սա տիպիկ «սպեցիֆիկեան», նաեւ էսէռական մօտեցում էր Հայկական հարցում:

Ալ. Մեասնիկեանի ընդհանրութիւնը «սպեցիֆիկների» հետ արտայայտուել է ոչ միայն գաղափարական-ծրագրային հարցերում, այլեւ գործնական-կազմակերպական աշխատանքում: 1908 թ. աշնանը Ռուբէնիին ուղղուած նամակներից մէկում Մեասնիկեանը ցաւով յայտնում էր, որ յեղափոխութեան պարտութիւնից յետոյ «ակնյայտ է լքումը ինտելիգենցիայի մէջ»[39]: Վիճակը շտկելու համար նա մտադիր էր թերթ լոյս տեսցնել, որի համար պէտք է թոյլտուություն ստանար իշխանութիւններից[40]: Նոյն թուականի հոկտեմբերի 25-ին Մեասնիկեանը Բաքուից նամակով դիմում էր Ռուբէնիին՝ խնդրելով իրեն ուղարկել «Պատմական մատերիալիզմ» անուանումով ժողովածուն: Եւ միաժամանակ նա խորհուրդ էր տալիս, որ «տղաները թող չկտրեն կապը միմեանց հետ»[41]: Մէկ այլ նամակում Մեասնիկեանը յայտնում է, որ իրենց ամսագրի տպագրութիւնը դադարեցուել է: Նա խօսում է Արտաշէսի եւ Նարիմանի վարքագծի մասին[42]:

Մեասնիկեանի եւ Ռուբէնիի նամակագրութիւնը շարունակուել է նաեւ յետագայում՝ 1909-1910 թթ., երբ Մեասնիկեանը ուսանում էր Մոսկուայի համալսարանում, իսկ Ռուբէնին գտնուում էր Կ. Պոլսում[43]:

Մեասնիկեանի (Մարտունի) առնչութիւնները ՍԴԲՀԿ հետ արտայայտուել են ոչ միայն առանձին գործիչների

հետ ունեցած նամակագրական կապերով, այլեւ սպեցիֆիկեան մամուլում հանդէս բերած տարաբնոյթ հրապարակումներով: Օրինակ՝ «Մեր իրականութիւնը» յօդուածում նա քննադատում էր հայ մանր բուրժուազիային՝ իբրեւ յետադիմական ուժի եւ նացիոնալիզմի գաղափարակրի[44]: Իսկ Դ. Անանունի խմբագրած «Նոր կեանք» երկշաբաթաթերթում զետեղուած «Հասարակական դասակարգի մասին» յօդուածաշարում Մեասնիկեանը մարքսիզմի դիրքերից քննութեան էր ենթարկում մարքսիզմի դասականներ Կ. Մարքսի եւ Ֆ. Էնգելսի, սոցիալիզմի տեսաբաններ Պ. Պրուդոնի, Կ. Կաուցկու եւ ուրիշների աշխարհայեացքային եւ տնտեսագիտական ուսմունքները[45]:

Առաւել արժէքաւոր է ՍԴԲՀ կազմակերպութեան միջոցով բանուորութեան հետ Մեասնիկեանի կատարած գործնական աշխատանքը: Նրա եռանդուն գործունէութեան մասին է վկայում 1912 թ. Ց. Խանզադեանին ուղղուած նամակը: Մեասնիկեանը գրում է, որ ինքը Ա. Կարինեանի հետ Բաքուում, յատկապէս Բիբի-Հէյբաթում, ամենօրեայ ժողովներ են գումարում եւ քարոզչական աշխատանք տանում բանուորութեան շրջանում: Միւս կողմից նա քննադատում է ՍԴԲՀԿ կենտկոմականների պասիւ աշխատանքը[46]:

Միաժամանակ վաւերագիր նիւթերի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ՍԴԲՀԿ անդամ լինելը չի կաշկանդել Մեասնիկեանին աշխատել նաեւ ՌՍԴԲԿ կառոյցների ու գործիչների հետ: Աւելին, հարկ եղած դէպքում նա յաճախակի հանդէս է եկել նաեւ այլ ուղղութեան՝ մշակական, դաշնակցական եւ այլ պարբերականներում: Սա ինքնին խօսում է նրա լայն մտահորիզոնի եւ ընդգրկուն գործունէութեան մասին: Եթէ գաղափարախօսական հարցերում նա հետեւողական մարքսիստ սոցիալ-դեմոկրատ էր, ապա կուսակցական-կազմակերպական հարցերում, տեւական ժամանակ, մնաց որպէս «սպեցիֆիկ»: Որ տակաւին 1914 թ. Ալ. Մեասնիկեանը շարունակում էր մնալ ՍԴԲՀԿ մէջ, վկայում է նրա 1914 թ. յունուարի 24-ի նամակը ուղղուած նոյն կազմակերպութեան անդամ, պրոլետարական գրող Շ. Կուրղինեանին: Այդ նամակում Մեասնիկեանը կշտամբում է Բ. Իշխանեանին, ով իրեն կազմակերպութիւնից դուրս է պահում եւ նոյնիսկ նրա մասին ասում են, թէ «մտնելու է «Մշակի» խմբագրական խորհրդի մէջ»[47]:

Մեասնիկեանի կազմակերպական անցումը ՍԴԲՀԿ-ից դէպի բոլշեւիկեան կուսակցութեան շարքերը տեղի է ունեցել 1917 թ.: Այդ մասին է փաստում 1917 թ. ապրիլից Ստ. Շահումեանի խմբագրութեամբ Բաքուում լոյս տեսնող «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որը ջերմօրէն ողջունում է Ալ. Մարտունուն այն բանի համար, որ նա կապերը խզել է ՍԴԲՀԿ-ից եւ անցել բոլշեւիկեան կուսակցութեան շարքերը[48]:

Այսպիսով, ամփոփելով վերը նշուած փաստական տուեալները, կարելի է եզրակացնել, որ ականաւոր կուսակցական-պետական գործիչ Ալ. Մեասնիկեանի հայեացքների ձեւաւորումը ունեցել է բարդ ու հակասական ընթացք. ազգային-յեղափոխական դաշնակցականից մինչեւ մարքսիստ սոցիալ-դեմոկրատ ու բոլշեւիկ: Նրա գաղափարական որոնումների ու հայեացքների ձեւաւորման աւարտը կարելի է համարել 1906 թ., երբ նա վերջնականօրէն հեռանում է ՀՅԴ-ից ու անդամագրւում սոցիալ-դեմ. մարքսիստական կուսակցութեանը:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ալ. Մեասնիկեան, Ընտիր երկեր, Ե., 1957: Ալ. Մեասնիկեան, Երկեր 5 հատորով, Ե., 1984-1987: Ա. Կարինեան, Դ. Սիմոնեան, Ալ. Մարտունի-Մեասնիկեան (Նիւթեր կենսագրութեան համար), Ե., 1925: Ց. Խանզադեան, Ալեքսանդր Մեասնիկեան (Բնութագրման փորձ), Ե., 1926: Ս. Կասեան, Սպեցիֆիկները եւ սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928: Ա. Մնացականեան, Ալեքսանդր Մեասնիկեան, Ե., 1955: Ս. Աւագեան, Ալ. Մեասնիկեանը հրապարակախօս, Ե., 1964: Ա. Ոսկերչեան, Ալ. Մեասնիկեանը եւ գրական հարցերը, Ե., 1974: Գ. Ղարիբջանեան, Ալեքսանդր Մեասնիկեան, Ե., 1976: Կ. Դալլաքեան, Ալ. Մեասնիկեան, Ե., 1976: Մ. Շաթիրեան, Յեղափոխութեան գեներալը, Ե., 1978: Հ. Յովսէփեան, Ալ. Մեասնիկեանի քաղաքական-իրաւական հայեացքները, Ե., 1979: Ս. Ամիրեան, Ալ. Մեասնիկեան, Ե., 1986, եւ ուրիշներ:
2. «Մարտակոչ», Թիֆլիս, 24 եւ 27 մարտի 1925 թ.:

3. «Մարտակոչ», Թիֆլիս, 27 մարտի 1925 թ., «Հայկական սովետական հանրագիտարան» (ՀՍՀ), հ. 7, Ե., 1981, էջ 647, «Հայրենիք», Բոստոն, 1955, թիւ 3 (մարտ), էջ 53:

4. Հայաստանի ազգային արխիւ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 4004, g. 3, գ. 2, թ. 1:

5. ՀԱԱ, ֆ. 4004, g. 1, գ. 70, թ. 1:

6. Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, գիրք 1, Կահիրէ, 1955, էջ 53-54:

7. Ս. Վրացեան, նշ. աշխ., էջ 60:

8. Վ. Բ. Բարխուդարեան, Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն (1861-1917 թթ.), Ե., 1985, էջ 249:

9. Համբարձում Տէրտէրեան, Յուշեր Նոր Նախիջեւանի շրջանէն, «Հայրենիք», Բոստոն, 1955, թիւ 3 (մարտ), էջ 53-54:

10. ՀԱԱ, ֆ. 4041, g. 1, գ. 16, թ. 14:

11. Հայ պարբերական մամուլը (մատենագիտական համահաւաք ցուցակ) 1794-1980, կազմեց Մ. Բաբլոյեանը, Ե., 1986, էջ 60:

12. ՀԱԱ, ֆ. 4041, g. 1, գ. 16, թ. 14:

13. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ, ինֆորմացիոն բաժին, Բիւլլետեն 3, Ե., 1921, էջ 14:

14. Ս. Կասեան, Սպեցիֆիկները եւ սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 158:

15. «Մարտակոչ», Թիֆլիս, 27 մարտի 1925 թ., Ա. Իգնատեան, Լազարեան ճեմարան, Ե., 1969, էջ 236-238:

16. Ց. Խանզադեան, Ալ. Մեասնիկեան (բնութագրման փորձ), Ե., 1926, էջ 5:

17. Ց. Խանզադեան, նշ. աշխ., էջ 7:

18. Ա. Իգնատեան, Լազարեան ճեմարան, Ե., 1969, էջ 245, նաեւ Վ. Տէրեան, Երկեր, հ. 3, Ե., 1963, էջ 177:

19. Ց. Խանզադեան, Ալեքսանդր Մեասնիկեան (բնութագրման փորձ), Ե., 1926, էջ 8:

20. Ս. Կասեան, Սպեցիֆիկները եւ սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 103-139:

21. Ս. Ամիրեան, Ալեքսանդր Մեասնիկեան, Ե., 1986, էջ 18:

22. Ս. Ամիրեան, նշ. աշխ., էջ 19:

23. Ս. Ամիրեան, նշ. աշխ., էջ 21:

24. Ց. Խանզադեան, Ալեքսանդր Մեասնիկեան (բնութագրման փորձ), Ե.,1926, էջ 5, 7:

25. Ալ. Մեասնիկեան, Երկեր (հինգ հատորով), հ. 1, Ե., 1984, էջ 5, Խ. Հ. Բարսեղեան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 2, Ե., 1975, էջ 323, «Հայկական սովետական հանրագիտարան» (ՀՍՀ), հ. 7, Ե.,1981, էջ 647 եւ ուրիշներ:

26. ՀԱԱ, ֆ. 4004, g. 3, գ. 2, թ. 2, Ա. Կարինեան, Դ. Սիմոնեան, Ալ. Մարտունի-Մեասնիկեան (Նիւթեր կենսագրութեան համար), Ե., 1925, էջ 49:

27. Ս. Ամիրեան, Ալ. Մեասնիկեան, Ե., 1986, էջ 32 եւ 43:

28. Ալ. Մեասնիկեան, Ընտիր երկեր, Ե., 1957, էջ 357:

29. Ս. Ամիրեան, նշ. աշխ., էջ 33:

30. Ալ. Մեասնիկեան, Երկեր հինգ հատորով, հ. 1, Ե., 1984, էջ 6, «Մարտակոչ», Թիֆլիս, 27 մարտի 1925 թ., Գ. Բ. Ղարիբջանեան, Յեղափոխութեան մարտիկները, Ե., 1948, էջ 148:

31. ՀԱԱ, ֆ. 4004, g. 1, գ. 31, թ. 2, g. 3, գ. 3, թթ. 7-8:

32. ՀԱԱ, ֆ. 4004, g. 3, գ. 3, գ. 11, մաս 1, մաս 2, մաս 3 եւ այլն:

33. «Ձայն», Թիֆլիս, 1906, թիւ 3-13 եւ 1907, թիւ 2-12:

34. ՀԱԱ, ֆ. 4004, g. 3, գ. 11, մաս 2, թթ. 1-170:

35. Ստ. Շահումեան, ԵԼժ, հ. 2, Ե., 1976, էջ 417:

36. Ալ. Մեասնիկեան, Երկեր, հ. 1, Ե., 1984, էջ 373-374, նաեւ «Մոլոտ», 30 սեպտեմբերի 1917 թ. (թիւ 14):

37. Ա. Կարինեան, Դ. Սիմոնեան, նշ. աշխ., էջ 11:

38. «Մշակ», 5 յունուարի 1914 թ. (թիւ 3):

39. ՀԱԱ, ֆ. 4004, g. 3, գ. 3, թ. 11:

40. Նոյն տեղում:

41. Նոյն տեղում, թ. 12:

42. ՀԱԱ, ֆ. 4004, g. 3, գ. 3, թ. 13:

43. Նոյն տեղում, թ.15:

44. «Բանուոր», Բաքու, 25 փետրուարի 1907 թ.:

45. «Նոր կեանք», Բաքու, 1911, թիւ 1-2:

46. Ց.Խ անզադեան, Ալ. Մեասնիկեան (բնութագրման փորձ), Ե., 1926, էջ 17-18:

47. ՀԱԱ, ֆ. 4004, g. 1, գ. 31, թ. 2:

48. «Սոցիալ-դեմոկրատ», 16 օգոստոսի 1917 թ. (թիւ 15), նաեւ Ստ. Շահումեան, ԵԼժ, հ. 3, Ե.,1978, էջ 211:

(ԿՈՐՈՒՍՏԷ ՓՐԿԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՈՎ)

Աւօ Գաթրճեան

Աշխարհի տարածքին, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի պատմութեան մէջ, ստեղծուած են միլիոնաւոր երգեր, շրջապատի ազդեցութեան տակ, պայմաններու եւ ընթացիկ իրադարձութեանց կամ դէպքերու ընդմէջէն:

Արդարեւ, քաջ գիտենք, թէ հայ ժողովուրդի ազգային ազատագրութեան պայքարի պատմութեան մէջ մեծ է տեղը փոխվրէժի՝ Խանասորի արշաւանքին, որ տեղի ունեցաւ 1897 Յուլիս 25ին: Այդ արշաւանքի սխրագործութեան պատճառով հայ ժողովուրդը եւ յատկապէս յեղափոխականներ ծնունդ տուին արշաւանքը նկարագրող կարգ մը երգերու: Այս բոլորը բնականաբար կ'ապացուցեն Խանասորի արշաւանքի վայելած ժողովրդականութիւնն ու վարկը:

Սակայն եղաւ նաեւ այլ պարագայ մը, երբ տասնեակ տարիներ «Խանասորի քայլերգ» վերնագրով «Կռուեցէ՛ք տղերք...» երգը երգեցինք, որպէս այդ արշաւանքին ձօնուած երգ:

Հոս ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք սոյն երգը, որ երգարաններու մէջ յիշատակուած է «Խանասորի քայլերգ» վերնագրով: Սակայն մենք բացատրողական եւ պատմական տուեալներէ մեկնելով սրբագրում մը կը կատարենք եւ ընթերցողին կը ներկայացնենք ճիշդ բնութագրումով:

Դժբախտաբար, Խանասորի արշաւանքը բնութագրելու տեսակէտէն, բնականաբար ոչ մէկ նշում կայ այս երգին մէջ: Խանասորի արշաւանքին Մարտիրոս անունով (Մարտիրոս Ասատուրեան) միայն մէկ մարտիկ էր մասնակցում, Ոզմեցի էր, երկրագործ, 35 տարեկան, ամուսնացած[1]: Իսկ գալով նահատակներուն, ընդամէնը 20[2] էր եւ ոչ մէկ Մարտիրոս անունը կրող ֆետայի կար:

Սիմոն Ս. Թորգոմեան, որ մասնակցած է 1896ի Վանի կոտորածներուն, կը գրէ. «Թուրք եւ Քիւրտ խուժանը աւելի կը կատաղէր, երբ բոլոր դիրքերէն մեր հերոսները կը կռուէին խելայեղ գոռում գոչումներով՝ երգելով Պողազ-Քեսանի քայլերգը՝ Կռուեցէ՛ք տղերք...»ը[3]:

Այստեղ յարմար կը նկատենք կարճ տեղեկութեամբ մը ծանօթացնել Պողազ-Քեասանի (թրք. կոկորդ կտրող՝ մորթող) կռիւը, որպէսզի ընթերցողին իրազեկ դարձնենք ամբողջ եղածը եւ կատարենք մեր կարեւոր սրբագրումը:

1895ին Վանի շրջանը անհրաժեշտ կարիք կ'ունենայ զինամթերքի: Այս իսկ պատճառով կը կազմուի 40 հոգիէ բաղկացած Դաշնակցական ֆետայական խումբ մը, որպէսզի զինամթերքը հասցնէ Վան: Խումբին խմբապետը Նիկոլն է, իրեն հետ ունենալով նաեւ Վազգէն Տէրոյեանը: Այս խմբակին կ'ուզեն միանալ Արմենական կուսակցութեան անդամներ, թիւով 10 հոգի: Այսպէս, 1895 Հոկտեմբեր 23ին, 50 հոգինոց մարտախումբը Նիկոլի գլխաւորու-

թեամբ ճամբայ կ'ելլէ Պարսկաստանէն դէպի Վան:

Ճամբան խստաշունչ պաղը կ'ըլլայ անողոք: Ֆետայիներուն ոտքերը կը սառին: Սահմանը անցնելէ առաջ, խմբապետը արդէն իսկ կը ստիպուի ետ ճամբել ֆետայիներէն մէկը: Բայց ահա, սահմանէն անդին, երկու ուրիշներ՝ արմենական զինագործ Ուստա Փանոս եւ Սալմաստցի Աբգար ցրտամահ կ'ըլլան:

Բայց եւ այնպէս, ի գին գերմարդկային ճիգերու, խումբը կը շարունակէ ճամբան ու կը հասնի թրքական սահմանէն 20 քլմ. ներս գտնուող Սարա գիւղի Ինկիզ-Թափա կոչուող բարձունքը, ուր կը պաշարուի Մլանցի, Մակուրցի, Թակուրցի եւ Շամսցի 1500 քիւրտերու կողմէ:

Անհաւասար ուժերով անխուսափելի կռիւը կը տեւէ երկու օր եւ պատճառ կը դառնայ Հաֆթուանցի Աւետիսի նահատակութեան: Հոկտեմբեր 26ին, երեկոյեան խումբը կտրելով թշնամիի պաշարման շղթան, անընդհատ դիմադրութեամբ կ'երթայ եւ կ'ապաստանի հայաբնակ Պողազ-Քեասան գիւղը: Ի վերջոյ խումբը կը հասնի Պողազ-Քեասան գիւղը եւ երկուքի բաժնուելով կը պատսպարուի մարագներու մէջ: Յոգնած եւ ուժասպառ հայդուկները կրակ կը վառեն իրենց ցրտահար մարմինները տաքցնելու համար, բայց շատ չանցած կը պաշարուին զինեալ քիւրտերու կողմէ:

Նիկոլ եւ արմենական Ներսէս Պօղիկեան[4] 20-25 հոգիով կը թաքնուին իրենց հանդիպած առաջին մարագը, մինչ խումբին մնացեալ մասը, Ղարաբաղցի Յարութիւնի հետ, կը թաքնուի մէկ այլ մարագ:

Շատ չանցած, խումբին շարժումներուն կրնկակոխ հետեւած քիւրտեր կը պաշարեն Նիկոլի գտնուած մարագը եւ ֆետայիներուն կ'առաջարկեն անձնատուր ըլլալ, որ ապարդիւն կը մնայ: Քիւրտերը կ'որոշեն ծուխի եւ կրակի մէջ խեղդել ֆետայիները: Մարագի շուրջը կը շարեն չորցած խոտի խուրձեր եւ կրակի կու տան զայն:

Քանի մը յանդուգն քիւրտեր ալ տանիքներէն ցատկելով կ'անցնին այն մարագին վրայ, ուր ֆետայիները կը գտնուին եւ կը սկսին կրակել ներսը: Ֆետայիները շուարած կը մտածեն իրենց ընելիքի մասին: Նիկոլ վճռական կարգադրութիւն մը կ'ընէ: Ընկերներուն կ'ըսէ, որ հետեւին իրեն եւ կը բանայ մարագին դուռը: Հրացանի կոթով ցիր ու ցան կ'ընէ խոտի այրող խուրձերը եւ վրայէն ցատկելով կը վազէ դէպի դիմացի լեռը: Այս բոլորը տեղի կ'ունենան շատ արագ: Տանիքներէն քիւրտերը կը կրակեն: Նիկոլ շարունակելով իր վազքը դէմ դիմաց կու գայ ծառի մը տակ բազմած քիւրտերու եւ կրակելով կը սպաննէ զանոնք: Յետոյ յայտնի կ'ըլլայ, թէ երկու քիւրտերը՝ Միլիազիմ Զնդին եւ դեր-հազարապետ Շաւէշը, քիւրտերու ցեղապետներն էին եւ անոնց սպանութիւնը սարսափահար կ'ընէ մնացեալ քիւրտերը, որոնք փախուստի կը դիմեն:

«Աւա մրով նինա, աւա տուման ա (սա մարդ չէ, սա տուման փոթորիկ է) կ'ըսեն քուրտերը եւ երգեր կը հիւսեն Դումանի քաջութեան մասին»[5]:

Մինչ այդ, Նիկոլի օրինակին եւ հրահանգին հետեւելով ֆետայիները մէկ-մէկ դուրս կու գան մարագէն, պոռալով «Մահ կամ ազատութիւն», եւ կ'աճապարեն հասնիլ Նիկոլի օգնութեան: Ուստի պաշարուած կացութիւնը կը փոխուի յարձակողականի, ինչ որ փախուստի ու պարտութեան կը մատնէ քիւրտերը: Խումբը շարունակելով իր ճանապարհը կը հասնի Վան, ճամբու ընթացքին զոհ տալով 4-5 ընկեր, ներառեալ ցրտահարները: Քանի մը օր ետք ապահով ձեւով կը հասնի նաեւ Վ. Տէրոյեանի խումբը:

Այս դէպքէն ետք, Նիկոլի անունին կ'աւելնայ Դուման (Տուման), այսինքն մուխ, փոթորիկ, կամ Ղարա-Դուման (Սեւ մառախուղ, փոթորիկ): Այստեղէն ալ անոր Նիկոլ Դուման անուանումը[6]: Նոյն այս դէպքէն ետք նաեւ քիւրտերը երգեր կը հիւսեն Նիկոլ Դումանի մասին վեր առնելով անոր սխրագործութիւնները: Քիւրտերու յատուկ է այն սովորութիւնը, որ կռուի պարտութեան ընթացքին թշնամիին գովաբանական երգեր կը հիւսեն[7]:

Պողազ-Քեասանի կռիւը պատմելէ ետք կը շարունակենք մեր բուն նիւթը լուսարձակի տակ առնել, ուստի կը կարդանք «Դրօշակ», 1896, Մարտ 1ի մէջ. «Երիտասարդ Մարտիրոսը Բօղազ-Քեասանի կռւից յետոյ գիւղը մնալով, նահատակւում է»[8], ինչպէս նաեւ «Վասպուրական» գրքին մէջ, որ տեղ գտած է ռազմերգի հեղինակին մասին՝ Միհրդատ Եւայեանին կենսագրականը, ուր կը յիշուի ««...Կռուեցէ՛ք տղե՛րք»ը: Նիկոլ Դումանի խումբին կռիւը (1895) Բօղազ Քեասան գիւղին մէջ, դարձած է ոգեւորութեան եւ ներշնչման աղբիւր Միհրդատին, որ գրած է յիշեալ երգը եւ յօրինած նաեւ անոր ռազմաշունչ եղանակը»[9]: Միայն հոս «Փոքրիկ հերոսը» յիշուած է «Կարիբջանեան»[10] մականունով:

ՄԱՐՏԻՐՈՍ ԿՈՒԼԻԿԵԱՆ[11] (Կարիբջանեան), յանդուգն ու յեղափոխական ոգիով օժտուած, 1894ին կը մտնէ Հ.Յ.Դ.ի շարքերը: 1895ին, դեռ 17 տարեկան էր, երբ ֆետայի կը դառնայ: Նոյն տարին Նիկոլ-Դումանի յայտնի Պողազ-Քեասան գիւղի կռուի ընթացքին, Մարտիրոս անօրինակ քաջութեամբ կռիւ կը մղէ թշնամիներուն դէմ

եւ կը նահատակուի: Միհրդատ Եսայեան «Կռուեցէք տղերք»ի բառերն ու երաժշտութիւնը յօրինած է ի յիշատակ իր ընկերոջ՝ Մարտիրոսին: Ռազմերգին վերջին տողին յիշուած է «Ահեղ կռուին մէջ մի փոքրիկ հերոս, անմոռանալի կտրիճ Մարտիրոս»:

ԽԱՆԱՍՈՐԻ ՔԱՅԼԵՐԳ

Կռուեցէք տղերք, կռուեցէք քաջ քաջ,
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ,
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոտխի ահը:
Յառաջ խիզախենք իբրեւ նահատակ,
Ի զուր թող չանցնի մեզնից մի գնդակ:

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր,
Մեզի կը սպասեն մեր հէգ եղբայրներ:
Չծնանք ազատ, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ,
Այս անգամին ալ ցոյց տանք թշնամուն,
Թէ ի՛նչ է հայու ուժն ու քաջութիւն:

Ահա քիւրտերը փախչին սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախուած.
Կրակ տեղացէ՛ք, անդադար կրա՜կ,
Փառք Դաշնակցութեան, առատ է գնդակ,
Օ՜ն, կռուինք, տղերք, մինչեւ շունչ վերջին,
Արժանի լինենք փառաց պսակին:

Մեռնինք յուսալով, մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ՜, կեցցէ՜, Հայաստան,
Այսպէս յորդորեց եւ ինկաւ արին,
Թողլով մեզ անուն յիշատակ բարին.
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս:

Վերոնշեալ երգը երգուած է յաճախ մարտերու ընթացքին, ինչպէս նաեւ Խանասորի արշաւանքին, ուր ոգեւորութիւն եւ ուժ ներշնչած է մեր ֆետայիներուն՝ ռազմաշունչ ըլլալուն համար:

Առ այդ, «Խանասորի քայլերգ» վերնագիրը փոփոխութեան պէտք է ենթարկուի եւ ըլլայ «ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ»:

Հետեւաբար, պատմական տուեալներով հիմնաւորելէ ետք կը նկատենք, որ Պողազ-Քեասան գիւղի անօրինակելի կռիւը հակառակ, որ օժտուած է հայերէն երգով, սակայն ան վերագրուած է Խանասորի արշաւանքին: Արդ, վերոյիշեալ յայտնաբերումէն ետք ի յայտ կու գայ, որ տակաւին մեր յեղափոխական կարգ մը երգերը սրբագրուելու եւ վերանայելու կարիքը կայ, ուրեմն այս մէկնակէտէն ելլելով անհրաժեշտ է, որ մեր մամուլը արձագանգէ նման կարեւոր նիւթին, կորուստէ փրկելու միտումով:

Խանասորի դէպքերի մասին թարգմանաբար մէջբերում ենք ԱՄՆ-ում 1851 թ.-ից առ այսօր հրատարակուող «The New York Times» լրագրի 1897 թ. օգոստոսի 10-ի համարից. «ԹՈՒՐՔԻԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ - Կ. Պոլիս - օգոստ. 9 - Պաշտօնական մի ճեպագիր յայտնում է, որ անցեալ ուրբաթ մի քանի հազար հայ ագիտատորներ (հաւանաբար բնագրում agitator բառը գործածուել է խռովարար իմաստով, որը, ըստ էութեան, նշանակում է՝ հայդուկ կամ ֆիդայի - խմբ.) Պարսկաստանից ներխուժել են Թուրքիա: Նրանք Մագրիկ (բնագրում նշուած է՝ Migriki - խմբ.) ցեղից սպանել են 200 հոգու...»:



The New York Times
Aug. 10, 1897

TURKEY INVADED FROM PERSIA.

CONSTANTINOPLE, Aug. 9.—An official dispatch received here says that on Friday last several thousand Armenian agitators from Persia invaded Turkey.
They killed 200 of the Migriki tribe,

1. Աւս, «Խանասորի արշաւախումբը», Պէյրութ, 1986, էջ 106:
2. «Դրօշակ», 1897, թիւ 11, Սեպտ. 13:
3. Տե՛ս նոյն տեղը, էջ 82:
4. Կարգ մը տեղեր գրուած է Բօզիկեան (Պոզիկեան): Օրինակ, տե՛ս Ստեփանեան Յովակ, «Նիկոլ Դուման», Հ.Յ.Դաշնակցութեան երիտասարդական «ԿԱՅԾԵՐ» մատենաշար - թիւ 5, Պէյրութ, 1997:
5. Տե՛ս «Հորիզոն», 1914, Սեպտեմբեր 28:
6. Տե՛ս «Հորիզոն», 1914, Սեպտեմբեր 28:
7. «Դրօշակ», 1896, Փետրուար 10, էջ 36:
8. «Դրօշակ», 1896, Մարտ 1, էջ 54:
9. «Վասպուրական», Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարեան տպարան, էջ 260:
10. Տե՛ս նոյն տեղը, էջ 278:
11. «Հայրենիք» ամսագիր, ԺԴ տարի, թիւ 11, Սեպտեմբեր 1936, էջ 78:

Աստծոյ ամէն առաւօտ, ուղիղ ժամը 8.30-ին էջմիածնի խճուղով մայրաքաղաք է մտնում աղմկարար մի աւտոշարասիւն: Աղմուկն աւելի մեծ է, քան շարասիւնը: Շչակների ոռնոցից աւելի ազդու հնչում է ոստիկանական ուղեկցող մեքենայից սփռուող հրամանը. «Կանգնիր, կանգնիր, ասում եմ»: Եւ երթեւեկութիւնը կանգնում է: Աւելի ճիշտ՝ քարանում է: Թէ աջ, թէ ձախ: Արդէն սովորութիւն է, վարժանք, թերեւս նաեւ արարողութիւն. եթէ շարժւում է այս շարասիւնը, շրջապատի ամէն շարժում պիտի քարանայ: Միամիտները, անտեղեակները կարծում են բարձրաստիճան հիւր է ժամանում Երեւան: Միւսները, փորձուածները գիտեն, որ աստծոյ ամէն առաւօտ, նոյն ժամին բարձրաստիճան հիւրեր չի ընդունում փոքրիկ Հայաստանը: Ոչ լրագրերը, ոչ ռադիօն, ոչ հեռուստատեսութիւնը չեն արձանագրում նման իրադարձութիւն: Եթէ արձանագրում էլ են, ապա պարզւում է, որ նրանք ժամանել են այլ ժամի եւ յաճախ առանց աղմուկի: Իսկ այս շարասիւնը Երեւան է խուժում ամէն աստծոյ առաւօտ, ուղիղ ժամը 8.30-ին՝ զինուորական ճշտապահութեամբ:

Ասում են՝ գեներալ է ժամանողը: Ասում են՝ այս կերպ նա բարի լոյս է մաղթում երեւանցիներին: Բայց որովհետեւ նա փակուած է, հաւանաբար, զրահապատում եւ շրջապատուած թիկնապահական մեքենաներով, չի լսում շրջակայ շէնքերի բաց պատուհաններից հնչող հայհոյանքներն ու քնից արթնացած մանուկների բողոք-լացը:

Ով էլ որ նա լինի՝ գեներալ, նախարար, պատգամաւոր կամ նոյնիսկ նախարարի տեղակալ, միեւնոյն է. քնած մանկանը, յատկապէս ծծկերներին, չի կարելի արթնացնել անուշ քնից՝ ինչ է թէ քաղաք ժամանող նորին մեծութիւնը բարի լոյս պիտի մաղթի: Մանաւանդ այդ ժամանողը (ով էլ որ նա լինի), 8.30-ի ճշտապահութիւնը հաշուի առնելով, քաղաք է գալիս ընդամէնը աշխատելու: Աշխատանքի է գալիս: Է, արի, սիրելիս, գնա քո գործին, էլ ի՞նչ ես աղմկում:

Պատկերացրէք, որ ամէն գործի գնացող (նոյնիսկ մեր գործազուրկ երկրում) գործի գնալիս ահա այսպէս աղմկի: Ի՞նչ կը ստացուի: Բայց բոլորն այսկերպ չեն կարող վարուել ոչ միայն այն պատճառով, որ հնարաւորութիւն չունեն, ուղեկցող շչակ չունեն, ուղեկցող թիկնապահներ չունեն, այլ որովհետեւ բարեկիրթ են եւ մտքներով իսկ չի անցնի ցուցադրել, թէ աշխատանքի են գնում: Այն էլ թիկնապահով: Թիկնապահը թանկ հաճոյք է: Մեր օրերում՝ յատկապէս:

Ժամանակին, երբ բառերն օգտագործւում էին իրենց նախնական իմաստով, թիկնապահը բարձրաստիճան տիրոջ միայն թիկունքն էր պաշտպանում, որովհետեւ մարդու խոցելի, անպաշտպան մասը աչք չունեցող թիկունքն է, իսկ դիմացի վտանգը կարող էր նկատել եւ կանխել հէնց ինքը՝ տէրը: Հիմա թիկնապահը նաեւ կողապահ է, առաջապահ, նոյնիսկ տարածապահ: Տիրոջն այլեւս տեսողութիւն պէտք չէ... թերեւս նաեւ լսողութիւն, վտանգի զգացողութիւն:

Թիկնապահ են դարձել նաեւ քարտուղար-քարտուղարուհիները, օգնական-օգնականուհիները: Հապա փորձիր քո հեռաւորութիւնից, սոսկ հեռախօսակապով մերձենալ բարձրաստիճանին: Ներկայացողիդ անուն-ազգանունը ոչինչ չի ասում քարտուղարուհուն: Նա յաւելեալ տուեալներ է պահանջում: Որպէսզի դասակարգման իր սանդղակին համաձայն որոշի՝ միացնել քեզ տիրոջ հետ, թէ ոչ: Մեծ մասամբ չի միացնելու, որովհետեւ հմտօրէն մշակուած այդ սանդղակից էլ այն կողմ գործում է թիկնապահ-քարտուղարուհու անվրէպ տրամաբանութիւնը. եթէ մտերիմ կամ կարեւոր մէկն է, ինչո՞ւ ես չեմ ճանաչում. եթէ ինձ անծանօթ մտերիմ կամ կարեւոր մէկն է, ապա ինչու չգիտի տիրոջս ձեռքի հեռախօսի համարը: Ուրեմն՝ շառից հեռու, ուրեմն՝ տեղում չէ, զբաղուած է, խորհրդակցութեան է... Եւ վերջ...

Ապահովութեան եւ յարմարաւէտութեան կատարեալ համակարգ է գոյացել: Ինքնիրեն թէ մտածուած՝ ի՞նչ կարեւոր է: Ոչ ոք դէմ չէ ապահովութեանը եւ յարմարաւէտութեանը, սակայն ով է պատասխանելու բնական այն հարցին, թէ որտե՞ղ է վերջանում բարձրաստիճանի ապահովութիւնն ու յարմարաւէտութիւնը եւ որտեղի՞ց է սկսւում հասարակ քաղաքացու ապահովութիւնն ու յարմարաւէտութիւնը:

Բարձրաստիճանի ապահովութեան եւ յարմարաւէտութեան մասին հոգացողները ինչո՞ւ են իմ ապահովութեան ու յարմարաւէտութեան հաշուին գործում:

Թոռանս խնդրանքով տոմս գնեցինք, ուրախ-ուրախ Հանրապետական մարզադաշտ գնացինք՝ Պորտուգալիա-Հայաստան ֆուտբոլային խաղը դիտելու: Պարզուեց՝ Հանրապետութեան նախագահն էլ է ցանկացել դիտել այդ խաղը: Երանի թէ չցանկանար: Երանի թէ գերադասէր հեռուստատեսութեամբ դիտել: Ով այդ օրը եղել է մարզադաշտի մատոյցներում, կը վկայի, որ տոմսը ձեռքներին հազարաւոր մարզասէրներ, սարսափելի հրմշտոցի մէջ ընկած, կամ մնացին դրսում, կամ էլ ներս խցկուեցին, երբ խաղն արդէն կէս էր եղել: Ո՞վ էր հրահանգել փակել մուտքի բոլոր դռնակները, աւելորդ, նաեւ վտանգաւոր քաշքշուկ առաջացնել մետաղեայ ցանկապատի մօտ: Այսպէ՞ս են կարգաւորում Նախագահի ապահովութիւնն ու յարմարաւէտութիւնը:

Թիկնապահութիւնը միայն արհեստ չէ: Նաեւ արուեստ է: Բայց որպէսզի արհեստը վերածուի արուեստի, առնուազն կանոնակարգուելու խնդիր ունի: Ինչո՞ւ են խոչընդոտւում թիկնապահութիւնը կանոնակարգելու ջանքերը:

Քանի դեռ չի կանոնակարգուել թիկնապահութիւնը, քանի դեռ թիկնապահական բռի արհեստը չի վերածուել նուրբ արուեստի, ոչ բարձրաստիճանի եւ ոչ էլ իմ ու ձեր ապահովութիւնն ու յարմարաւէտութիւնն է երաշխաւորուած:

«Բարի լոյսին» ի պատասխան՝ «Աստծու բարին» են ասում եւ ոչ թէ ստիպուած հայհոյում...

Ռուբէն ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

№ 9 (186) XVII ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» ՕՐԳԱՆ

Ամսալուրեր

* * *

Սեպտեմբերի 22-ին, կիրակի օրը, Վանի վալի Ալի-բեյը, ենթարկուեց տէրրորի Բաթում քաղաքում, իր հիւրանոցին մօտիկ: Վէրքը մահացու էր: Տէրրորիստը փախաւ:

* * *

Մեզ տեղեկացնում են Թիֆլիսից, որ Կովկասեան փոխարքայ Վորոնցով-Դաշկով վրձռել է «ամենախիստ» միջոցներ ձեռք առնել Դաշնակցութեան դէմ: «Դաշնակցութիւնը իմ վզին է նստել»- ասել է Նիկոլայ II-ի փոխարինողը՝ դիրք ունեցող մի անձնաւորութեան, պալատական մի տեսակցութեան միջոցին: Մենք չը գիտենք, թէ որոնք են այն նոր «ամենախիստ» միջոցները, որոնց մասին երազում է Կովկասի կառավարիչը: Արդէն գործ դրած անծայր բռնութիւններից յետոյ, մենք գիտենք միայն մի բան - այն, որ «ամենախիստ» միջոցները առաջացնում են եւ «ամենախիստ դիմադրութիւն»:

* * *

Ժընէվի մօտ, Կարուժի հրէական գերեզմանատանը տեղի ունեցաւ ռուս նշանաւոր սոցիալիստ-յեղափոխական Միխայիլ Գօցի արձանի բացումը, ներկայութեամբ բազմաթիւ ռուս, հրէայ, հայ ու եւրոպացի յարգողների: Սոցիալիստ-յեղափոխականների տեղական կոմիտէն հրաւիրել էր ի թիւս այլոց եւ «Դրօշակի» խմբագրութիւնը՝ մասնակցելու այդ հանդեսին:

Յեղափոխական մամուլը

Քաղաքական-յեղափոխական հարցերի լուսաբանութեան պատրուակով՝ մի տգեղ, նոյնիսկ անտանելիութեան չափ անվայել պոլեմիկ է սկսուած արտասահմանեան հայ մամուլի մէջ:-

Հարցերը, ծրագիրները, կանոնադրութիւնները, անձնաւորութիւնները խառնուած են մէկ-մէկու եւ սառնասիրտ մտածողը ըմբռնել չէ կարող, թէ ինչպէս կարելի է այդ աստիճան թեթեւամիտ լինել այնպիսի խնդիրներում, որոնք վերաբերում են գաղտնի կազմակերպութիւններին եւ նրանց ձեռնարկներին:

Դաշնակցական մի քանի թերթեր ստիպուած են մասնակցութիւն ընդունել այդ ապարդիւն բանակռուի մէջ, եւ ինչպէս յաճախ պատահում է, շատ առաջ գնալ՝ նոյնիսկ - մենք համոզուած ենք - հակառակ իրենց ցանկութեան եւ մտադրութեան:

Տարաբախտաբար, ապառուած թուղթն ու մելանը նպատակին չեն հասնում: Եւ իզուր են վատնում այն արդար ցասումներն ու գեղեցիկ խօսքերը, որոնց նպատակն է հակառակորդներին բան հասկացնել, ճամբայ բանալ յեղափոխական մտքի առջեւ, ազնուացնել զգացմունքները: «Ամենավատ խուլերը նրանք են, որոնք լսել չեն ուզում», եւ այդ գիտակից-խուլերը այնքան յամառ են եւ այնքան բազմաթիւ մեր պօլեմիստների ու քաղաքական խմբերի շարքերում, որ կատարելապէս ապարդիւն աշխատանք պիտի համարուի նրանցով զբաղուիլը, եւ նրանց յեղաշրջելու ջանքերը:

Ահա թէ ինչու հրաւէր ենք կարդում դաշնակցական թերթերին - եւ այդ հրապարակով, որպէսզի հակառակորդներն էլ այդ լսելու հնար ունենան - վայր դնել գրիչը եւ անպատասխան թողնել այն բանակռիւը եւ յարձակումները, որոնք գաղափարական չեն, չունին ծրագրային իմաստ, չեն նպաստում յեղափոխական եւ սոցիալիստական գիտելիքների տարածման, եւ ուրեմն ծառայում են լոկ անձնաւորութիւնների եւ կուսակցական սին, խղճուկ ու կրքոտ միտումներին:

Ոչ մի պատասխան՝ զրպարտութեան, ոչ մի ազատութիւն՝ կռուեցնող կոյր կրքերին: Կան դէպքեր, երբ ասպետական լռութիւնը աւելի կրթիչ է, քան այն անթիւ յօդուածները, լի հայհոյանքով եւ քայքայիչ թոյնով, որոնք ստորացնում են ընթերցողի զգացմունքը, կոտրում նրանց հաւատը դէպի յեղափոխութիւնը, ատելութիւն տարածում այն շարքերում, որոնք երբեմն խանդավառ էին եւ յափշտակուող:

Դաշնակցական թերթերը՝ առանց այդ ապարդիւն պօլեմիկի եւս՝ ահագին գործ ունին իրենց առջեւ - պարզել մեր ծրագիրը, տարածել ժողովրդի բոլոր խաւերի մէջ մեր քաղաքական եւ տնտեսական պահանջների իմաստն ու միջոցները, շաղկապել մարտական- յեղափոխական տատանուող մտքերը, նպաստել մեր շարքերի զտման եւ լայնացման:

Ու այդ աշխատանքի ընթացքում մնալ՝ ասպետ, շիտակ, խստապահանջ՝ դէպի ներսը, մեծահոգի՝ դէպի հակառակորդները:



Արկածալի կեանք



Շաւարշ Բասենցեան (Խմբապետ Շաւարշ), Արկածալի կեանք, «Նաիրի» հրատարակչութիւն, Երեւան, 2006, 260 էջ:

Մեր սեղանին է արդէն հայ ազատագրական պայքարի գործիչներից մէկի՝ Շաւարշ Բասենցեանի (1874-1937), յուշերի, գրառումների եւ օրագրերի ժողովածուն, որ իր իսկ բնութագրմամբ մի արկածալի կեանքի պատմութիւն է: Գրքում տեղ են գտել Շաւարշի կենսագրութեան մանրամասներ, ուսանողական տարիների յիշարժան իրադարձութիւններ, յեղափոխական գործունէութիւնը, թուրքերի դէմ մղած կռիւների նկարագրութիւններ, տեղեկութիւններ կամաւորական շարժման ու Չէկայի կողմից իր ծերբակալութեան մասին:

Գրքի խմբագիր եւ կազմող պատմագիտութեան դոկտոր Վարդան Գրիգորեանը ընդարձակ նախաբանում հետաքրքիր ձեւերով եւ հաւաստի տեղեկութիւնների հիման վրայ նուրբ զուգահեռներ է անցկացնում Շաւարշ Բասենցեան մարդու, զօրականի եւ Եղիշէ Չարենցի յայտնի պօէմի հերոսի՝ խմբապետ Շաւարշի կերպարի միջեւ: Շաւարշն ու մեծ բանաստեղծը լաւ ծանօթներ էին, մտերիմ, եւ նոյնիսկ մի առիթով, կողք-կողքի նստած լսել են պօէմի գեղարուեստական ընթերցումը: Շաւարշին պօէմը շատ է դուր եկել: Երկար տարիներ անց գրականագէտ Հրանտ Թամրազեանը «Խմբապետ Շաւարշը» պատմական դարաշրջանի լոյսի տակ» աշխատութեամբ ցոյց տուեց գրական այդ ստեղծագործութեան իրական արժէքն ու հերոսի իսկական կերպարը, որ հեռու է երգիծական լինելուց: Ըստ Հրանտ Թամրազեանի՝ պօէմը խորապէս դրամատիկ մի երկ է, ուր հեղինակը ճշմարտութիւն է ասում հոգեկան դրամայի միջոցով:

Ներկայացուող գիրքը հարուստ փաստական նիւթ կը տայ պատմաբաններին: Նախատեսուած է նաեւ ընթերցող լայն հասարակայնութեան համար:

Սարդարապատի պատմաշինութիւնը

Արշալոյս Աստուածատրեան, Սարդարապատի պատմաշինութիւնը եւ այլ երկեր, «Հայագիտակ», Երեւան, 2007, 832 էջ:



«Շինարարութիւնը Հայաստանում շարունակւում է անընդհատ: Ճարտարապետները տներ են շինում: Լրագրողները ստեր են հնարում: Գիտաշխատողները պատմութիւն են ստեղծում: Վերջերս մանաւանդ զարգացած է պատմաշինարարութիւնը: Պատմաբան եւ ոչ-պատմաբան շինում ու վերաշինում են Հայոց պատմութիւնը «ըստ պատկերի իւրեանց»: ...Վերջին տարիներին Հայպետհրատը իրար յետեւից հրապարակ է շպրտում պատմաշինական հատորներ, որոնց նպատակը ոչ թէ «առարկայական ճշմարտութիւն» փնտրելն է Հայոց պատմութեան մէջ, այլ Հայոց պատմութիւնը չափելն ու ձեւելը ըստ համայնավարական կաղապարի»: Այսպէս է գնահատել խորհրդայնացած Հայաստանում պատմագրութեան վիճակը Ս. Վրացեանը՝ արտայայտելով իր կարծիքը Յ. Թուրշեանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքի մասին:

Հէնց այս իրավիճակին է հակադրուել Հայաստանի Առաջին Հանրապետութեան քաղաքական եւ կուսակցական յայտնի դէմքերից մէկը՝ Արշալոյս Աստուածատրեանը (1883-1973) իր «Սարդարապատի պատմաշինութիւնը» աշխատութեամբ, որն ըստ էութեան գրախօսական է՝ նուիրուած վերը յիշատակուած Յ. Թուրշեանի գրքին:

Պատմական գիտութիւնների դոկտոր Վարդան Գրիգորեանը, որ ներկայացուող հրատարակութեան մէջ ներառել է նաեւ Ա. Աստուածատրեանի՝ պարբերական մամուլում տեղ գտած այլ երկեր եւս, գրքի նախաբանում նշում է, որ հայրենիքում սոյն աշխատութեան վերահրատարակութիւնը միտուած չէ նսեմացնելու Յ. Թուրշեանի կատարած աշխատանքը, բայց հետապնդում է մի կարեւոր նպատակ՝ հայ ժողովրդի կեանքում մեծ դեր խաղացած իրադարձութեան մասին տալ բազմակողմանի եւ ճշմարտացի պատկերացում:

Արշալոյս Աստուածատրեանի երկերի այս ժողովածուի մի ստուար մասն են կազմում (մօտ 700 էջ) նրա յուշերն ու ակնարկները՝ նուիրուած Հայաստանի Հանրապետութեան առաջին դէմքերի, զինակից ընկերների կեանքին ու գործունէութեանը: Արտասովոր քաջութեան օրինակ կարելի է համարել հէնց 1937-ին գրուած «Ստալին» յօդուածը, ուր «ժողովուրդների հայրը» պատկերուած է իր ողջ դաժանութեամբ ու նենգութեամբ:

Հեղինակի անկողմնակալ դիրքորոշումը, իրադարձութիւնները ճիշտ գնահատելու կարողութիւնը, բերած փաստագրական նիւթի առատութիւնը, ինչու չէ, նաեւ անթերի լեզուն եւ ոճը, նրա այս գրքի համար դեռ երկար տարիներ տեղ կ'ապահովեն մեր պատմաբանների սեղանին:



Յովհաննէս Յարութիւնեան

«Ապագան հանդիպումն է քո իմացութեանը»,- ասել է Շոպենհաուերը: «Թողնենք ինքնաճանաչման վարկածը: Դա ճակատագիր է»,- այսպէս մեկնեց նկարիչ Յովհաննէս Յարութիւնեանը իմաստասէրի խօսքը, պատմելով, թէ ինչպէս մի օր յայտնաբերեց իրեն Փարիզի «Անկախների սալոնում» մեծն Կուրբէի ընդվզումից յառնած սալոնում, որն իր նախկին փայտակերտ, գերանակապ առաստաղներով տեսքից վերածուել էր վեհաշուք մեծ սրահի, եւ այդպէս էլ կոչւում է՝ «Գրան պալե»: Կանգնել էր իր նկարի դիմաց, ասել է՝ ինքն իր դիմաց եւ նոյնիսկ ցանկալի երկխօսութեան ժամանակ չէր ունեցել, չէր հասցրել՝ իր կողքին նրանք էին, արուեստի ոգեկոչ այրերը՝ Պիկասօ, Բրակ, Կանդինսկի, Քլայն: Սա մուտքն էր՝ զարմանալի հարազատ, ջերմ ու հոգեմօտ, որ երազում թէ արթմնի մշտապէս գոյել է իր ապրումների խորին շերտերում: Նկարիչը սիրեց Փարիզը, Փարիզը սիրեց նկարչին:

Յետոյ նորից Երեւան, կրկին Փարիզ: Եւ այսպէս շարունակ: 1998 թ. նկարիչը փակուեց երեւանեան իր արուեստանոցում: Ստեղծագործում էր, աշխատում էր օր ու գիշեր, ժամանակը սուղ էր, պէտք էր հասցնել: Եւ հասցրեց: Նոյն թուականին «Աշնանային սալոնում» ցուցադրուեց «24 ապրիլ 1915 թ.» մեծադիր կտաւը: Ցուցադրութիւնից յետոյ, որպէս վկայութիւն Ֆրանսիայի Ազգային ժողովի Հայոց ցեղասպանութեան ընդունած փաստաթղթի, նկարն իր մշտական տեղը գտաւ Ազգային ժողովի շէնքում՝ Դելակրուայի, Կուրբէի, Կորոյի ստեղծագործութիւնների հետ կողք-կողքի: Յետոյ նկարչի կտաւները ցուցադրուեցին Փարիզի գլխաւոր ցուցասրահներում «Էլեր արտ», «Գարսիա-լապորտ», «Art SS», իսկ «Փարիզի ժամանակակից արուեստը» գրքում նրան առանձնակի տեղ յատկացուեց: Յովհաննէսի արուեստում նշանակալից տեղ է գրաւում կնոջը նուիրուած պատկերաշարը: Այստեղ նրա զգայուն, նուրբ ու թրթռուն վրձինը վիրտուոզ երաժիշտի ջութակի աղեղի նման կնոջ կերպարի մէջ բացում է զարմանալի հնչեղ եւ դիւթիչ բազում նրբերանգներ: Այս պատկերաշարի առիթով է, որ Փարիզի ճանաչուած արուեստի գիտակը՝ Կորնետ դի Սանսիրը պէտք է խոստովանէր. «Դու վերադարձրիր մեզ մեր հրաշալի դպրոցի գծանկարի շունչը, հմայքը:Պիկասօ, Մատիս: Դու մէկն ես նրանցից»: Իսկ յայտնի տեսաբան Քրիստիան Ժերմակը Յովհաննէսի նկարների կատալոգի առաջաբանում նշել է «Յովհաննէսը մի նկարիչ է, որ տեսողական սիմֆոնիա է ստեղծում, ինչպէս այլեւս ոչ մէկը», ապա անդրադառնալով նկարչի դիմանկարին ակնարկում է նրա դէմքին դրոշմուած ժպիտը, իր իսկ խօսքով «Կեսարեան ժպիտը» որքան պարզ ու բնական, նոյնքան առինքնող ու խորհրդաւոր, ճակատագրով դրոշմուած ժպիտը:

«ԴՐՕՇԱԿ» -ի պատկերասրահ

24 ապրիլ 1915 թ.



Ճեպանկար

Արվեստանոցում



Երիտասարդ հարսնացուն